

# ZUSÄTT SÖL

415



Լ Ե Յ

Հայոց Գրի

Առօնք

Հրատարակութիւն Հայ Տպա-  
գրութեան 400-ամեայ յորելեա-  
լական Թիֆլիսի Յանձնաժո-  
ղովի

Թ Ի Ց Լ Ի Ս

Էջերատար. Օր. Ն. Ազաբեանի

Պոլից. 7

1912



## ՀԱՅ ԳՐԻՒ ՏՕՆԸ

## ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400 Ա- ՄԵԱՅ ՅՈՒՆԵԼԵԱՆԻ ՅԱՆՉԱ- ԽՄԲԻ ՃՐԱՒԵՐԸ

Զորս հարիւր տարի առաջ, 1512  
թւին, Վենետիկի քաղաքում լոյս  
տեսաւ հայերէն առաջին տպա-  
գրած գիրքը:

Հայ միտքը, հայ գրականու-  
թիւնը այս գեղեցիկ սկզբնաւո-  
րութեամբ հաղորդակից էր դառ-  
նում եւրոպական քաղաքակրթու-  
թեան այն սքանչելի գիւտին, որ  
բարերարել է համայն մարդկու-  
թիւնը և որի հանդէպ վերջինս  
միշտ իրան երախտագէտ ու  
սքանչացող է զգացել:

Այսօր, 1912 թւականին, հայ  
տպագրութեան չորսհարիւրամեայ  
յօրելեանի տօնակատարութեան  
բացառիկ բարերախտութիւնն է  
վիճակւում հայ ժողովրդին:

Չը կայ երկրի վրայ մի տղի,  
 մի ժողովուրդ, որ տօնած չը լի-  
 նի իր տպագրութեան յօրելեա-  
 նը: Ու այսօր հայ ժողովրդին է  
 առիթ ներկայանում հանդէս գա-  
 լու քաղաքակիրթ աշխարհի առաջ  
 ու ցոյց տալու, որ ինքն էլ մի  
 զիտակից ու պարտաճանաչ ժո-  
 ղովուրդ է, որ, յիրաւի, այդ բազ-  
 մաչարչար ժողովուրդը Արևելքի  
 մութ ու մուայլ միջավայրումն էլ  
 կարողացել է գնահատել մարդ-  
 կային քարօրութեան ու երջան-  
 կութեան ամենամեծ գործօնը  
 զիրն ու զրականութիւնը, և այ-  
 սօր, այդ մեծ գործօնի տօնին  
 ուղում է իր երախտակիտութիւնն  
 ու մեծարանքը ընծայել նրան:

Այս չորս դարերի ընթացքում  
 հայ գիրն ու զրականութիւնը  
 գործեցին աշխարհիս համարեա-  
 բոլոր կողմերում: Եւրոպական,  
 Ասիական, Ամերիկեան ու Աֆրի-  
 կեան ցամաքների վրայ հայ միտ-

քը, շնորհիւ հայ տապագրութեան՝  
բեղմնաւոր ու գեղեցիկ գործու-  
նէութիւն ցոյց տւեց. տապէեցին  
բազմաթիւ գրքեր, լրագրներ, ո-  
րոնք էլ կուեցին կոփեցին հայե-  
րիս ներկայ կուլտուրան և պատ-  
րաստեցին ապագայ զարգացման,  
յառաջխաղացման անհրաժեշտ հո-  
ղը:

Կովկասի Հայոց Հրատարակչու-  
կան Բնկերութեան նախաձեռնու-  
թեամբ, յունւար ու փետրւար  
ամիսներում ժողովներ կազմւեցին  
Թիֆլիզում գործող բոլոր հայ  
հիմնարկութիւնների և մամուլի  
ներկայացուցիչներից՝ այս հա-  
մազգային մեծ տօնը արժանա-  
վայել կերպով մեծարելու համար։  
Այդ ժողովներում ընդունեցին  
մի քանի որոշումներ տօնի կա-  
տարման մասին և ընտրեց մի  
յատուկ Յանձնախումբ, որ պիտի  
իրագործէ այդ որոշումները և

առհասարակ կազմակերպել յօրեւ-  
լեանական հանդէսը:

Այդ որոշումներն են՝ 1. ի յի-  
շատակ հայ տպագրութեան չորս  
հարիւր ամեակի կազմել գրական  
ֆոնդ. 2. Յօրելեանը տօնել այս  
տարի. 3. Հրատարակել այդ ա-  
ռիթով հայ տպագրութեան պատ-  
մութիւնը սկզբից մինչև մեր օ-  
րերը. 4. Նկատի առնելով, որ  
տօնը համազգային է, ցանկալի  
համարել, որ տօնախմբութիւնը  
տեղի ունենայ միաժամանակ  
այն բոլոր հայաբնակ վայրերում,  
ուր ցանկութիւն կայ յաւերժաց-  
նելու մեր տպագրութեան 400  
ամեակը. 5. Տօնակատարութեան  
համար յանձնաբարեկի համարել  
ներկայացումներ տալը, տպա-  
գրութեան և գրականութեան  
վերաբերեալ դասախոսութիւններ  
կազմակերպելը, հայերէն տպա-  
գրութիւններից ցուցահանդէսներ  
սարքելը. ևն:

Յօրելեանական Գործադիր Յանձնախումբս վճռել է յօրելեանի տօնը Թիֆլիզում կատարել ներկայ տարւայ նոյեմբերի 25—26-ին, այսինքն հայոց տառերի գիւտի տօնին, կցելով տպագրութեան 400 ամեակին և ՀԱՅԵՐԻՆ ՏԱՐԵՐԻ գիւտի 1500 ամեակը, որ թէև լրացրել է մի քանի տարի առաջ, բայց չէ կատարւել պատշաճաւոր կերպով։ Յանձնաժողովս տառերի գիւտի մեծ յօրելեանն էլ ընդունում է տօնել տպագրութեան յօրելեանի հետ, ի նկատի առնելով մեր հասարակութեան մէջ առաջացած միահամուռ ցանկութիւնը, որ հայ գրականութեան այս երկու տօները միացուին։

Հայ տպագրութեան պատմութեան հրատարակութիւնը, Յանձնաժողովիս աջակցութեամբ, յանձըն է առել կովկ. Հայոց Հրատակուլ. իսկ գրական ֆօնդի վե-

Գործադիր Յանձնախմբիս իր գործունէութեան ընթացքում:

Վատահ լինելով, որ մեր այս հրաւէրը բուռն արձագանք է գտնելու Զերև և Զեզ շրջապատող հայ հասարակութեան մէջ՝

*Մնամք խորին յարզանօք՝*

*400 ԱՄԵԱԿԻ ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ  
ԳՈՐԾ. ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ*

Պատւառոր սննդամներ

Եփեմ եպիսկոպոս, Թիֆլիսի թեմի ժամանակաւոր կառավարիչ.

† Գաբրիէլ Սունդուկեանց

Նախագահներ

ԲԺ. Ա. Զարզարեան

Առաքել Բաբախանեան (Լէօ)

Գործադիր Յանձնախմբի Անդամ.

Տիկին Նունէ Ալիքէկեան

Ալէքսանդր Մովսիսեան (Շիրվանզադէ)

Աշոտ Աթանասեան  
 Արշակ Յարութիւնեան  
 Արտաշէս Աքեղեան  
 Աւետիք Պօղոսեան  
 Գաբրիէլ Կաֆեան  
 Գիւտ Աղանեան ա. թ.  
 Երուանդ Լալայեան  
 Երուանդ Մինասեան քժ.  
 Խամհակ Յարութիւնեան  
 Խաչատուր Տէր - Յովհաննի-  
     սեան  
 Միքայէլ Յովհաննիսեան (Նար-  
     Դոս)  
 Յովհաննիս Ակունեան

Անդ Քարտ գ. Վարդանեան

Գործ. Յանձ.-ի հասցէն՝

Նամակների և դրամական նւի-  
 րաբերութիւնների համար.—Тиф-  
 лисъ, Правленіе Кавказскаго Ар-  
 мянскаго Издательскаго Обще-

ԺԴ

ства. Бебутов. 25. Предсъдателю  
доктору А. А. Заргарянцу.

Արտասահմանի նամակների և  
նւիրաբերութիւնների համար. —  
Société d'Édition Armeniènne du  
Caucase Tiflis.

Հեռագրերի համար դоктору  
Заргарянцу.

» Dr. Zargariantz  
Tiflis.

---

Կանոնական առաջին մեջ  
Տարբա մասի բարեկարգ պահ-  
պահութեան և լայն մեջացու-  
թի անդամութեան պահպանութեան  
**ՏԱՐԵՐԻ ԳԻՒՏԸ**

## 1500 ԱՄԵԱԿ

**Ա.**

**Ի ՞ Զ Ե Գ Ի Ռ Ը**

կենդանական աշխարհի մէջ  
մարդը միակ էակն է, որին բնու-  
թիւնը տուել է լեզուի միջոցով  
իր մտքերն ու զգացմունքները  
իր նմաններին յայտնելու կարո-  
ղութիւնը:

Մարդը ունի խօսք, նա խօ-  
սում է: Եւ այդ է որ նրան այն-  
քան բարձրացրել է կենդանիների  
աշխարհում, դարձրել է նրան  
տիրապետող:

Բոլոր տեսակ կենդանիներից  
աւելի մարդն է, որ կըսում է  
իր մէջ համակեցութեան բնազդը,  
այսինքն՝ միասին, մեծ խմբերով  
կամ համայնքներով ապրելու և  
դանակին է կարօտ:

Համայնակեցութիւնը մեծ անհրաժեշտութիւններ է ծնեցնում։ Եւ դրանցից ամենամեծը այն է, որ համայնքի անդամները իրար հասկանան, իրար հետ հաղորդակցութիւն ունենան՝ կեանքի ընդհանուր պահանջները հաւաքական ուժերով կատարելու համար։ Ահա այս անհրաժեշտութիւնից ծագեց մարդկային լեզուն։ Առանց այդ լեզուի՝ մարդկային համայնքն էլ կը լինէր կենդանիների մի խումբ, մի հօտ։

Չը պէտք է կարծել թէ համայնակեցութեան ձևերը և նրանցից բղխած անհրաժեշտութիւնները պատրաստ ու վերջնականապէս կազմակերպուած դրութեան մէջ աշխարհ եկան մարդու հետ միասին։

Ո՞չ։ Մարդու կազմուածքը, կեանքը կազմակերպուել են շատերկար ժամանակների, բիւրաւոր տարիների, գուցէ և դա-

ըերի ընթացքում աստիճանաբար, քայլ առ քայլ կատարելագործութիւնների, ձևափոխութիւնների, ահազին շրջաններ է անցել մարդը, մինչև որ հասել է ներկայ դրութեան:

Նա ոչինչ չէ ստացել միանգամից, հրաշքով, երկնքի ողորմութեամբ, ինչպէս ասում են: Առաջադիմութեան իւրաքանչիւր քայլը նա ինքն է դտել, ինքն է նուաճել, այն պահ ել երկարատե փորձերով, միշարք սերունդների աշխատանքով ու տանջանքներով:

Նա արել է մեծամեծ դիւտեր, որոնք նրան միջոց են տուել իր կեանքն ու հոգին զարգացնելու: Իւրաքանչիւր դիւտ մարդկութեան սեփականութիւնն է դարձել երկար ժամանակների, երբեմն տասնեակ դարերի փորձով:

Մարդկային ամենամեծ դիւտերից զլիսաւորն այն է, որով

նա կարողանում է իր միտքը  
դրոշմել առարկաների վրայ, առ-  
սանելի դարձնել նրան, պահ-  
պանել նրան։ Դա կոչւում է  
զրովթեան եղանակ։ Մտքի այդ  
յաւերժացումը կատարւում է  
զրերի միջոցով։

Գիտութիւնը ենթադրում է  
որ մարդու երևան գալու ժամա-  
նակներից մինչև այսօր պէտք է  
հաշուել 300 կամ ամենաքիչը՝  
230—240 հազար տարի։ Իսկ  
զրերի գիւտը տեղի է ունեցել  
մեղանից ընդ ամենը մօտ մի 7  
հազար տարի առաջ։ Նշանակում  
է որ մարդը 293 հազար կամ  
երկրորդ հաշուով՝ 223—233 հա-  
զար տարի աշխարհի վրայ ալ-  
բելուց յետոյ է հասել զրերի  
գիւտին։

Եւ այն հարիւր հազար տա-  
րիները, որ մարդը անց է կաց-  
րել առանց զրելիմանալու, կազ-  
մում են նրա կեանքի նախա-

պատմական շրջանը, որ մեծա-  
 գոյն մասամբ բոլորովին ան-  
 յացտ է, իսկ փոքրագոյն մա-  
 սամբ շատ մութ է, չունի հաս-  
 տառուն ժամանակադրութիւն,  
 զուրկ է մանրամասնութիւննե-  
 րից: Գրութեան գիւտն է, որից  
 սկսւում է պատմական ժամա-  
 նակը: Այս ժամանակը թէև չա-  
 փազանց կարճ է, ընդամենը 7  
 հազար տարի, բայց արդէն լոյս  
 ունի իր մէջ, պարզ է երեսում,  
 որովհետև մարդը վաւերագրեր  
 է թողնում իր գրութիւններով:  
 Գրերի գիւտի հետ մարդկային  
 քաղաքակրթութիւնը մտնում է  
 իր զարգացման բարձրագոյն շրր-  
 ջանի մէջ: Բերանացի խօսքը  
 երկար ժամանակ չէ ապրում և  
 հեռաւոր տեղեր չէ տարածում  
 հարազատութեամբ: Գիրն է որ  
 մարդու մտածողութիւնը, խօսքը  
 անմահացնում է և տարածում է  
 աշխարհի ամենահեռաւոր կող-

մերը։ Մի սերունդի գործերը այլ ևս կորած չեն յաջորդ սերունդների համար։ Մարդկութեան դարաւոր փորձերը, ստեղծագործող տաղանդի մեծագործութիւնները հաւաքւում են այն համաշխարհային գանձարանի մէջ, որի անունն է զրականութիւն։

Գրերի գիւտը տեղի ունեցաւ, ինչպէս հաստատում են նորագոյն հետազօտութիւնները, Պարսից ծոցի ափին, Քաղղէայում և այդտեղից անցաւ Եղիպտոս։ Գիւտը սկզբից և եթ, ի հարկէ, կատարեալ չէր։ Մարդկութիւնը դեռ երկար ժամանակ պիտի ձևեր գտնէր, որպէս զի յետոյ կանգ առնէր մի ձևի վրայ։

Գրերի առաջին, նախնական ձևն է մեհենադրոշմ կամ հիերօգլիֆ անուանուածը։ Նա գործէր ածւում գլխաւորապէս հին Եղիպտոսում։ Նրան յաջորդեց սեպաճեւ կամ ըեւեռաճեւ գրու-

թիւնը, որ տարածուեց նոյն  
Քաղդէայում, Միջագետքում, Հա-  
յաստանում, ապա և Պարսկաս-  
տանում։ Այսօր էլ մեր երկրում  
գտնւում են մեծ քարերի և ժայ-  
ռերի վրայ փորագրուած շատ  
սեպաձև արձանագրութիւններ։  
Գրութեան այս եղանակին հե-  
տևեց նշանագրերով կամ տա-  
ռերով գրելու եղանակը, որ այ-  
սօր էլ գործ ենք անում։

Մարդկութիւնը միատեսակ այ-  
րութեն չունի, միատեսակ տա-  
ռեր չէ գործ ածում։ Ինչու է  
այսպէս, ինչու շատ շատ են  
այն ազգերը, որոնք գրութեան  
առանձին ձև ունին իրանց հա-  
մար։

Պատճառներից գլխաւորն այն  
է, որ իւրաքանչիւր ազգի լեզու  
տարբեր է, ինքնուրոյն։ Լեզուն  
ստեղծում է ազգը իր պատմա-  
կան միջավայրի, իր երկրի աշ-  
խարհագրական պայմանների ազ-

դեցութեան տակ, իր առանձին ցեղական յատկութիւնների, իր հոգեբանութեան համաձայն։ Եւ իւրաքանչիւր ազգ էլ իր լեզուի հնչիւնները, արտայայտութեան ձևերը դրոշմում է իր հնարած նշանների, տառերի միջոցով։

Իւրաքանչիւր ազգ ունի իր առանձին, ինքնուրոյն գրականութիւնը, որովհետև գրականութիւն ստեղծողը դարձեալ նոյն ինքնուրոյն, այս կամ այն տեղին, այս կամ այն ցեղին պատկանող լեզուն է և իւրաքանչիւր ցեղ ստեղծագործական կարողութիւն ցոյց է տալիս իր լեզուի ստհմանների մէջ, որ նրա ովու արտայայտութիւնն է։

## Ա Ն Գ Ի Բ Հ Ա Յ Ե Բ Բ Լ

Հայերը պատմութեան ասպարէզում երևան եկան Քրիստոսի ծննդից եօթը դար առաջ։ Այդ ժամանակներն էր, որ նրանք արևմտեան երկիրներից, այն Է՝ Փոքը Ասիայի թերակղզու կողմերից սկսեցին առաջ շարժուել դէպի արևելք։ Երկար տևեց այդ գաղթը։ Եկուոր ժողովուրդը շարժում էր դանդաղ կերպով։ Իր ճանապարհին երկարատև բնակութիւն էր հաստատում, բայց յետոյ էլի առաջ էր շարժում։ Մօտաւորապէս երեք դարից յետոյ նա արդէն բռնել էր Արաքսի հովիտը, Մասիս սարից դէպի հիւսիս ե արևելք։

Հայերից առաջ Հայաստանում

ապրում էր բոլորովին տարբեր ծագում ունեցող մի ազգութիւն, որին տալիս են զանազան անուններ, ի միջի այլոց—Ուրարտացի: Այդ ազգութիւնն է, որ թողել է վերևում յիշած սեպածե արձանագրութիւնները:

Ի՞նչ եղաւ նա: Կարծում են, որ մի մասը եկուոր հայերի արշաւանքին տեղի տալով, հեռացաւ իր երկրից, իսկ միւս մասը մնաց և ձուլուեց այդ եկուորների հետ:

Հայերը ուրարտացիներից շատ բան սովորեցին: Բայց գրութեան եղանակը, այսինքն սեպագրութիւնը նրանց անյայտ մնաց: Հաստատելով պետութիւն, տարածելով նրա սահմանները, նոյն իսկ մեծամեծ նուաճումներ անելու կարողութիւն էլ ցոյց տալով, հայերը, ինչպէս ընդունուած է կարծել, անգիր ժողովուրդ մնացին մինչև հինգերորդ դարի սկիզբը (Քրիս-

տոսի ծննդից յետոյ): Հայերէն  
լեզուով գրուած ոչ մի յիշատա-  
կարան չէ մնացել այդ ժամանակ-  
ներից:

Բայց այս չէ նշանակում թէ  
այդ պետութիւնը, որ մի ժամա-  
նակ մեծ չափերի էլ հասաւ, ոչինչ  
գրաւոր յարաբերութիւններ չու-  
նէր: Ի՞նչպէս էին կատարում  
այդ յարաբերութիւնները: Մեր  
հին պատմագիրները մեզ ասում  
են թէ հայերը գործ էին ածում  
յունական կամ պարսկական  
տառեր: Ասում են և այն, որ  
գոյութիւն ունէին և հին նշա-  
նագրեր յատկապէս հայերէնի  
համար: Բայց այս տեղեկութիւն-  
ները այնքան մութ ու կցկտուր  
են, որ կարելի է զանազան են-  
թադրութիւններ անել, իսկ հաս-  
տատապէս առ այժմ ոչինչ չէ  
կարելի ասել թէ ինչ նշանագրեր  
էին դրանք, որքան տարածուած  
էին և այլն:

**Զորբորդ** դարի սկզբում քրիստոնէութիւնը վերջնականապէս հաստատում է Հայաստանում, դառնալով պետական կրօն: Երկու ազգեր էին, որ քրիստոնէութեան ուսուցիչներ դարձան Հայաստանում — սիրիացիները (ասորիներ) և յոյները: Այս երկու ազգերի լեզուներն էլ դուրս մղեցին պարսկերէնը և ապա սկսեցին մրցել իրար դէմ՝ տիրապետութիւն ձեռք բերելու համար:

Ամբողջ չորրորդ դարում քրիստոնէութիւնը դեռ լիովին ժողովրդական կրօն չէր: Հին հայկական կրօնը դեռ գոյութիւն էր պահպանում երկրի համարեա ըուլոր կողմերում և Հայաստանի քրիստոնեայ կառավարութիւնը, հոգնորականների դեկավարութեամբ, ստիպուած էր լինում նաև բռնի միջոցների, հալածանքների դիմել՝ նոր կրօնը հաստատ պահելու համար:

Եւ հասկանալի է այս դրութիւնը։ Ժողովուրդը իր մայրենի լեզուով գիրք չունէր։ Եկեղեցիներում, դպրոցներում տիրում էին ասորերէնը, յունարէնը։ Դաստիարակութեան գործը գտնուում էր օտար ուսուցիչների ձեռքում։ Հայը նախ պիտի սովորէր օտար լեզուները, որպէս զի կարողանար հասկանալ և չիմացողներին թարգմանել նոր կրօնի սրբազան գըլքերը։ Միայն անհատներ կարող էին այդ շատ դժուար գործը կատարել։ Լայն ժողովրդական գիտակցութիւն չէր կարող ստեղծուել։

Նոյն չորրորդ դարում Հայաստանի քաղաքական դրութիւնը ցոյց էր տալիս կործանման բոլոր նշանները։ Կաղուց այդ երկիրը կոռւածաղիկ էր դարձել երկու մեծ, աշխարհակալ պետութիւնների — Պարսկաստանի և Հռոմի մէջ։ Հայաստանի տէր

դառնալը երկու մըցողների համար քաղաքական մեծ անհրաժեշտութիւն էր. Քրիստոնէութեան մուտքը Հայաստան՝ թւում էր թէ գերազանցութիւն էր տալիս մըրցակիցներից մէկին—հռոմէական կայսրութեան արևելեան բաժնին կամ Բիւզանդիային, որ նոյնպէս քրիստոնէութիւն էր ընդունել: Թւում էր թէ Բիւզանդիան, ահազին բարոյական և կուլտուրական տղթեցութիւն ձեռք բերելով իր հաւատակից Հայաստանում, կը պահպանէ նրա քաղաքական ամբողջութիւնը, իբրև լաւագոյն միջոց Պարսկաստանի արշաւանքների դէմ իր սահմանները պաշտպանելու:

Բայց բիւզանդական կայսրների քաղաքականութիւնը այդպէս չըմբռնեց դրութիւնն ու անհրաժեշտութիւնը: Փոխանակ պաշտպան ու հովանաւոր հանդիսանալու՝ Բիւզանդիան էր որ համա-

7/ХI-1922

17

ձայնութիւն կայացրեց Պարսկաստանի հետ և Հայաստանը բաժանեց այդ երկու պետութիւնների մէջ (389 թւականին):

Դա մահացու հարուած էր հայանկախութեան, ազգային ամբողջութեան համար, որ մարմնանում էր համազգային թագաւորական իշխանութեան մէջ: Բաժանուած, հետեւաբար և ջլատուած, թուլացած երկիրը այլ ևս չէր կարող իր գոյութիւնը պահպանել: Նրա երկու մասերը պիտի կլանուէին այն պետութիւնների կողմից, որոց սեփականութիւն էին կազմում:

Եւ այսպէս, չորրորդ դարի վերջերում արդէն զգացւում էր մեծ աղէտի մօտալուտ վտանգը: Հոգեվարքի մէջ էր հայ պետութիւնը: Նա կարող էր անյայտանալ ամեն ժամ, ասպարէզի վրայ թողնելով մի ժողովուրդ, որ իր հին, ազգային կրօնից հեռացուել

էր, առանց նորը ամբողջովին  
ընդգրկելու։ Նա յենարաններ  
չունէր իր ազգային ինքնուրոյ-  
նութիւնը պահպանելու համար։  
Հայաստանի պարսկական մատուց  
արիրապետում էր ասորի հոգևո-  
րականը, յունականում յոյն հո-  
գևորականը՝ Վաղը, երբ կը ջնջ-  
ահն քաղաքական անկախութեան  
վերջին նշաններն էլ, հայութեան  
մի մասը՝ ասորական կուլտու-  
րայի մէջ կը ձուլուի, միւսը՝  
յունականի մէջ՝ Վահնդի են-  
թարկուածը միայն հայի քաղա-  
քական ինքնուրոյնութիւնը չէր,  
այլ և նրա ազգային ինքնուրոյ-  
նութեան ամենազլիսուոր յենա-  
կէտը — լեզուն։

Այս վտանգը զգացւում էր  
պարզ կերպով։ Անկարող լինե-  
լով քաղաքական անկախութիւնը  
պահպանել, հայը պիտի կարո-  
ղութիւն ցոյց տար կոնէ իր  
ազգային ինքնուրոյնութիւնը վը-

տանգից ազատելու համար: Դը-  
րուած էր իբրև ազգութիւն ապ-  
րելու կամ ոչնչանալու հարցն էլ:  
Եւ հայ ժողովուրդը այդ ահա-  
գին վտանգի դիմաց դուրս քե-  
րեց իր ամբողջ մտաւոր, հո-  
գեկան կարողութիւնը, որ պիտի  
արտայայտուէր և կարող էր ար-  
տայայտուել միմիայն սեփական  
մայրենի զրականութիւն ստեղ-  
ծելու մէջ:

Այդ մեծ անհրաժեշտութեան,  
ժամանակի այդ հրամայողական  
պահանջի իրագործման գործիք  
դարձաւ մի հանճարեղ հայ:

Ա հօգը թաւառոց ուժութան սուսա՞ Յ  
առաջնորդ այս է լոգը ոյ ոյսավիշտ նախա  
միշտ էն ունենալուած ըստ Նշանի ուղարկուած  
մաշնոց նախա չն մ նախանդիմական ի  
լուսած Ս պատմու բոլող դու Ե նախայ

ով այսնամ այլմասրա սվերմաս  
բառ ամայնիւրյան պղղի կը ճաքան  
ով ամցյամ այլամացման հայի այլի  
տաճան բառ պրդաւորսի կամ ամ-

## Գ.

## Մ Ե Մ Ր Ո Պ

**Հայաստանի պարսկական մա-  
սում 396—399 թուականներին  
թագաւորում էր Խոսրով երրորդը:  
Նրա արքունիքում ծառայում էր  
մի գիւղացի հայ, Տարօն գաւա-  
ռի Հացեկաց գիւղից, Մաշտոց  
կամ Մեսրոպ անունով \*: Նա զի-  
նուոր էր, բայց թողեց զինուո-  
րական պաշտօնը և ստացաւ թա-  
գաւորական գրագրի պաշտօն ար-  
քունիքում:**

**Գրագիրը հին Արևելքում պե-**

\* Մաշտոց անունը շարունակ գործ է  
ածում Կորիւնը, որ գրել է նրա կենսա-  
գրութիւնը: Բայց հայութեան մէջ, թէ հին  
ժամանակներում և թէ այժմ, ընդհան-  
րացած է երկրորդ անունը—Մեսրոպ:

տական շատ կարեոր և ազդեցիկ  
մի պաշտօնեայ էր, եւ եթէ Տա-  
րօնի գիւղացին հասաւ այդ դիր-  
քին, դրա պատճառն այն էր որ  
նա ստացել էր լաւ կրթութիւն,  
սովորել էր Հայաստանում տի-  
րապետող երեք լեզուներն էլ-  
յունարէն, ասորերէն և պարս-  
կերէն:

Արքունի դիւանադպիրը սա-  
կայն, չը հրապուրուեց իշխա-  
նութեան, պալատական կեանքի  
փայլով։ Միևնոյն ժամանակները  
կաթողիկոսական աթոռն էր  
բարձրացել Սահակը, նոյնպէս  
լաւ կրթուած մի հոգևորական,  
Ներսէս Մեծի որդին, Գրիգոր  
Լուսաւորչի տոհմից։ Իր նախ-  
նիների նման, Սահակն էլ եռան-  
դուագործունէութիւն էր ցոյց  
տալիս եկեղեցու բարեկարգու-  
թեան համար, աշխատելով որ  
քրիստոնէութիւնը հաստատուի  
հայ ժողովրդի գիտակցութեան

սում է թէ դա գինով առատ մի  
երկիր է և այդտեղ հայ գուսան-  
ները (աշուղները) երգում են  
մեր ազգային աւանդութիւնները,  
Խնչպէս ամեն տեղ, մեղանում էլ  
ազգային հին կեանքը, մեր հին  
հերոսները կապուած էին կրօնի  
հետ։ Գողթան գաւառում հայոց  
հեթանոսական կրօնը դեռ պինդ  
էր պահուում և դա հասկանալի է։  
Մի ժողովուրդ, որ երգ ունուագ  
է դարձրել իր անցեալի դէպ-  
քերը, որ ողևորում է հին-հին  
գործերով, չէր կարող հեշտու-  
թեամբ բաժանուել իր այդ պաշ-  
տամունքից։

Մեսրոպը չը կարողացաւ խօս-  
քով համոզել գողթնեցիներին և  
դիմեց բռնութեան։ Տեղական  
հայ իշխանի օգնութեամբ քան-  
դեց հեթանոսական տաճարները,  
հալածեց քուրմերին։ Աս յաղ-  
թութիւն էր, բայց բռնի ոյժի,  
կոպիտ բռնութեան յաղթանակ։

Աւերմունք, պատերազմ, գուցէ  
և արիւն—այս բոլորը պիտի  
սթափեցնէին կոպիտ միջոցնե-  
րով տարուած քրիստոնեայ քա-  
րողչին, և Մեօրոպը այդ տե-  
սարանների առջև աւելի ևս հա-  
մոզուեց թէ այդպէս գործել չէ  
կարելի, թէ պէտք է ժողովուրդը  
դաստիարակել, թէ պէտք է ազ-  
դել նրա մտքի ու զգացմունքի  
վրայ հասկանալի խօսքով և ոչ  
թէ բռունցքով։

Նորից նա զգում է թէ որքան  
անհրաժեշտ է որ ժողովրդի ձեռ-  
քը գիրք տրուի։ Եւ այս համոզ-  
մունքը այնքան պայծառ ու տան-  
ջող է, որ նա նոյն իսկ կիսատ է  
թողնում իր առաքելութիւնը Գող-  
թան գաւառում և վերադառնում  
է Արարատեան երկիրը, որպէս  
զի իր մտքերը յայտնէ հայոց  
կաթողիկոսին և ճար առաջարկէ  
նրան։

Բայց Սահակ կաթողիկոսը

նոր չը պիտի համականար նոյն  
մեծ անհրաժեշտութիւնը. նա էլ  
տարիներից ի վեր մտածում էր  
այդ մասին: Համակրանքով վե-  
րաբերուեց Մեսրոպի մտքին, իր  
աջակցութիւնը դրեց նրա տրա-  
մագրութեան տակ և երկուսը  
միասին սկսեցին խորհրդակցել:  
Երկուսի համար էլ պարզ էր որ  
պէտք է հայերէն տառեր հնարել  
և հայերէն լեզուով դրականու-  
թիւն ստեղծել: Բայց ի՞նչպէս  
անել այդ բանը:

Խորհրդակցութիւններ են տեղի  
ունենում, ժողովներ են գումար-  
ում ձեռնհաս հոգևորականերից:  
Բայց ոչ մի ճար չեն գտնում:  
Այդ միջոցին թագաւորական  
գահի վրայ նստած էր Վոամշա-  
պուհ թագաւորը, որ մի երջա-  
նիկ զուգագիպութեամբ նոյն-  
պէս գրասէր մարդ էր: Երկիրը  
վայելում էր խաղաղութիւն և  
Վոամշապուհը իր ջանքերն էլ

միացլեց Մեսրոպի ու Սահակի  
ջանքերին։ Թագաւորը գիտէր որ  
Միջազետքում, Դանիէլ անունով  
մի ասորի եպիսկոպոսի մօտ, կան  
հայերէն տառեր։ Բերել են տա-  
լիս այդ տառերը, Մեսրոպը հա-  
ւաքում է աշակերտներ, բաց է  
անում դպրոց։

Ի՞նչ էին Դանիէլի տառերը։  
Նա արդեօք ի՞նքն էր հնարել, թէ  
նրանք գոյութիւն ունէին Հա-  
յաստանում հին ժամանակներից։  
—Յայտնի չէ։ Մեսրոպը ուսու-  
ցիչ է։ Արդեօք առաջի՞նը հայե-  
րի մէջ։ Նրա դպրոցը սկսում է  
սովորել դանիէլեան գրերը։ Եր-  
կու տարի աշխատում են, բան  
չէ դուրս գալիս։ Տառերը ան-  
կատար են, բաւարարութիւն չեն  
տալիս։ Ի՞նչ անել։ Ժողովներ են  
տեղի ունենում, շատ են տքնում  
այդ անկատար այրութենը յար-  
մարեցնելու համար։ Ո՛չ մի յա-  
ջողութիւն։

Սպառելով այն բոլոր միջոցները, որոնք կային երկրի մէջ, Մեսրոպը որոշում է օգնութիւն և ճար որոնել դրառում, լուսաւոր ազգերի մէջ։ Եւ իր աշակերտների հետ մի ճանապարհորդութիւն է սկսում։ Թագաւորը, կաթողիկոսը ճանապարհ են դնում Նրան «սուրբ համբոյրներով», ինչպէս պատմում է Մեսրոպի աշակերտ Կորիւնը։ Եւ իրաւ, դրա պէս մի սուրբ առաքելութիւն առաջին անգամն էր դուրս գալիս հայոց աշխարհից։ Խաւարու տգէտ, կործանման հասած մի երկիր մարդիկ էր ուղարկում լոյս որոնելու։

Նրանք գնացին Միջազետքի Եղեսիա քաղաքը։—Այստեղ էլ Մեսրոպի դիմումներն ու որոնումները մնում են ապարդիւն և նա գնում է Սամոսատ քաղաքը, ուր նոյնպէս ոչինչ օգնութիւն չէ գտնում։ Կորցնելով օտար քաղաքակրթութեան վրայ

դրած յոյսերը, նա ապաւինում  
 է իր սեփական ուժերին:  
 Եւ մեր առջև, որքան թոյլ են  
 տալիս մեզ հասած սակաւախօս  
 տեղեկութիւնները, ու երկայանում  
 է մտքի երկունքի և յսպիսի մի  
 պատկեր: Ամբողջապէս յափշ-  
 տակուած իր գաղափարով, Մես-  
 րոպը հաւատացողի ջերմեռան-  
 դութեամբ, արտասունքներով պա-  
 ղատում էր երկնքի օդնու-  
 թիւնը: Նա յիշում էր մարդա-  
 րէի այն խօսքերը թէ «Երբ հե-  
 ծեծաս, այն ժամանակ կապրես»,  
 մի զեղեցիկ խօսք, որ ցոյց է  
 տալիս թէ դաժան աշխատանքն  
 է կեանք ստեղծում: Այդ անգա-  
 դար ճգնութիւնները, հոգածու-  
 թիւնը, յափշտակութիւնը մտքի  
 երկունքի նշաններն են... Գոր-  
 ծում է միտքը տենդային արա-  
 գութեամբ, գաղափարները տե-  
 սիլների ձև են ստանում և հոգու-  
 լարուած կարողութիւնը, վերջա-

ալէս ամփոփում է տարիների  
մտածմունքները, ձուլում է նը-  
րանց որոշ պատկերների մէջ.  
երկունքը վերջացաւ, հայկական  
տառերի ձևերը արդէն տպաւո-  
րուած են այդ բոպէից մեծ  
մարդու սրտում:

Հոռփանոս անունով մի յոյն  
ճարտար գծագրողի օգնութեամբ  
Մեսրոպը վայելուչ ձև է տալիս  
տառերին: Հայոց այբուբենը գրտ-  
նուած կամ թէ բարեկարգուած  
ու լրացուած վերջացած էր: Իր  
հանճարեղ ստեղծագործութեան  
պառաղը հետն առած՝ Մեսրոպը  
վերադառնում է Վաղարշապատ  
մայրաքաղաքը:

Եւ տօն էր հայոց աշխարհում:  
Մայրաքաղաքը հրճուանքով ըն-  
դունեց Մեսրոպին: Եւ այդ մեծ  
ժողովրդական ընդունելութեան  
արժանացողը մի մեծանուն զօ-  
րավար չէր, մի նուաճող թա-  
գաւոր չէր, այլ համեստ մի վար-

դապետ, որ բերում էր գրագիւ-  
տութեան լոյսը։ Մտքի յաղթա-  
նակը առաջին անգամն էր սրտա-  
գին ցոյցերով տօնում Հայաս-  
տանը։

Մեսրոպը այնուհետև հայու-  
թեան սրբութիւնն էր։ Եւ այս  
երևոյթը միանգամայն հասկա-  
նալի է և բնական։ Բոլոր աղ-  
գերը նուիրական ամենաբարձր  
զգացմունքով են երկրպագում  
զգին ու գրքին։ Հին աշխարհի  
հսկայ միտքը, Պլատոն փիլիսո-  
փան, մարդու ամենահրաշագի  
գործերից մէկն էր համարում  
տառերի գիւտը։ Նա ասում է,  
թէ դա այնպիսի մի մեծագոր-  
ծութիւն է, որ տառեր զանողին  
պէտք է Աստուած համարել կամ  
Աստուծու նման մի մարդ։

Տառերի գիւտը տեղի ունեցաւ  
404 թուականին։ Բայց կարծիք  
կայ, որ նրանց վերջնական կար-  
գաւորումը կատարուել է 412  
թուականից ոչ առաջ։

Հիսուսը զի ներդիլ յու տաճար  
հանդիրակ վկա՞ Մ ցընլոյ մամնեան  
հառայն զի մասքաբնա մշշառա ցիւան  
ասկը անձուն **Ք.** խողծըլըն, միք

### ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊԵԱՆ ԴՊՐՈՑԼ

Հայ այլուրենը կար: Բայց նա  
բաւական չէր: Պէտք էր նրան  
գործադրել:

Այստեղ ահա իր մեծ եռան-  
դով և ոգևորութեամբ հանդէս է  
գալիս Սահակ կաթողիկոսը: Նա  
գլուխ է կանգնում մի մեծ շարժ-  
ման և նրա հետ է, իրեւ նրա  
աջ թել տառեր գտնող Մեսրոպը,  
միաժամանակ և տաղանդաւոր  
հայ ուսուցիչը:

Այս անգամ արդէն հաստա-  
տուն հիմքերի վրայ է դրուած  
հայ դպրոցը: Նա միայն Հայաս-  
տանի քաղաքական կենտրոնում  
չէ: Նա տարածւում է երկրի զա-  
նազան կողմերը, ընդունելով իր

մէջ բազմաթիւ հայ մանուկներ։  
 Եւ մայրենի դպրոցը հրաշալի  
 տեսարան է պարզում։ Հայաս-  
 տանը մէկն էր Արևելքի այն  
 երկիրներից, ուր ազգաբնակու-  
 թիւնը բաժանուած էր դաստ-  
 կարգերի։ Կառավարող, հրամա-  
 յող դասակարգը ազնուականու-  
 թիւնն էր (նախարարները)։ Նա  
 էր հողատէրը, իսկ ժողովրդի  
 ահագին մեծամասնութիւնը գիւ-  
 ղացի էր, շինական և կոչւում  
 էր «անազատ», այսինքն ճոր-  
 տերի դրութեան մէջ գտնուող։  
 Բոլոր իրաւունքները վայելում  
 էր հողատէր ազնուականութիւնը,  
 իսկ ժողովրդի մեծագոյն մասի  
 պարտականութիւնն էր աշխա-  
 տել և հպատակուել։  
 Հայ դպրոցը գալիս է խախ-  
 տելու այդ դարաւոր դրութիւնը։  
 Ամենքը տեղ ունին նրա մէջ,  
 ոկսած արքունիքից մինչև շինա-  
 կան երկրագործը։ Այս շինականն

էլ, իր ստացած ուսման շնորհիւ,  
առաջ է գնում, բարձր դիրքի է  
համառմ, իշխանի հետ հաւա-  
սար գործիչ է դառնում։ Նրա  
համար բաց է հոգևորական կոր-  
ծունէութեան ասպարէզը։ — Մին-  
չև այդ հոգևոր բարձր պաշտօն-  
ները ժառանգական իրաւունքով  
պահպանմ էին մի քանի յայտնի  
տոհմերի մէջ։ — Այժմ վերանում  
է ժառանգականութիւնը, և գիւ-  
ղական մի երէց, օժառած  
մտաւոր կարողութիւններով, դե-  
կավարում է ժողովրդի բախան  
անգամ։

Վերջապէս, Սահակ Մեսրո-  
պեան դպրոցում երեւմ է և  
հայ կինը, որ պատրաստում է  
իր պատուաւոր տեղը բոնելու  
հասարակական շարժումների մէջ։  
Հիմա Մեսրոպը կարող էր  
աւելի ևս ընդարձակել իր քա-  
րոզչական եռանդուն դործու-  
նէութիւնը, աւելի մեծ յաջողու-

թեամբ։ Թողնում է նա հայոց  
մայրաքաղաքը, Արարատեան եր-  
կիրը, ուր քաղաքակրթութիւ-  
նըն ապրում ու զարգանում էր  
հին դարերից, անցնում է խա-  
ւար ծայրագաւառները, ուր տի-  
րում էր բարբարոս տփիտութիւն,  
բարքերի կոշտութիւն, վայրե-  
նութիւն։ Այժմ այլևս պէտք  
չը կար զէնքի ու տանջանքի դի-  
մելու։ Մեսրոպը դպրոցներ էր  
տալիս մութ աշխարհներին և  
լոյս էր մտցնում այնտեղ։ Նա  
տասեր տուեց Աղուանից ազգին,  
ինչպէս նաև վրացիներին։ Այժմ  
նա լոկ կրօնական միսիօներ չէր,  
այլ միաժամանակ, նոյն իսկ  
տոաւելապէս, և կրթական միսիօ-  
ներ։

Բայց Սահակ-Մեսրոպեան դըպ-  
րոցը լոկ գրագիտական դըպ-  
րոց չէր։ Ի՞նչպէս գրագիտու-  
թիւն սովորեցնել։ Ճէ՞ որ Հայաս-  
տանում հայերէն գրքեր չը կա-

յին: — Պէտք էր և գրականութիւն  
ստեղծել: Եւ Սահակն ու Մեռ-  
բոպը իրանց աշակերտների հետ  
հանդէս են բերում մի բեղմնա-  
ւոր ու սքանչելի գրական գոր-  
ծունէութիւն: Նրանք յայտնի են  
մեր տարեգրութիւնների մէջ  
թարգմանիչներ անունով: Որով-  
հետեւ նրանց գլխաւոր գործն էր  
թարգմանութիւններ անելը: Մի  
երկիր, որ նոր էր հաղորդակից  
լինում գիրք ունեցող ազգերի  
բախտին, սկզբում իհարկէ, պի-  
տի փոխառութիւններ անէր օ-  
տար գրականութիւններից:

Բայց թարգմանութիւնների  
հետ զարդացաւ և ինքնուրոյն  
միտքը: Թարգմանիչները ինքնու-  
րոյն հեղինակներ էլ էին և նը-  
րանց գործերը — թարգմանական  
թէ ինքնուրոյն — հայ գրականու-  
թեան պարծաճները դարձան:

Երեան եկաւ մի ամբողջ մտա-  
ւոր հարստութիւն: Կայ կանո-

նաւոր, հարուստ գրական լեզու (գրաբարը), որ ընդունակ է արտայայտել մտքի բոլոր նրբութիւնները, սրաի զգացմունքները: Բանաստեղծութիւն թէ լուրջ իմաստասիրական դատողութիւն՝ լիուլի ուժեղ արտայայտութեան միջոցներ են քաղում աշխարհի մէջ նոր յայտնի դարձող այդ լեզուից, որ մինչև այդ լուռ էր, համը էր: Հեղինակները ցոյց են տալիս կիրթ ու նուրբ ճաշակ, լաւատեղեակութիւն, գիտնականութիւն:

Դեռ նոր կեանք ստացած՝ մեր գրականութիւնը զարգացման գագաթնակէտին է: Դասական շրջանը, կլասիկների շրջանը, մեր գրականութեան մէջ, որ այնուհետև երբէք չը կըրկնուեց: Նրա վրայ էր երկիրը գրական դաստիարակութիւն ստանում յետագայ դարերի ընթացքում. նրանով էր գիտակցու-

թեան, ինքնաճանաչութեան հասնում:

Այս զարմանալի գեղեցիկ մըտաւոր շարժման օրերումն էր, որ Հայաստանի մէջ կատարուեց վաղուց սպասուող քաղաքական մեծ աղէտը, — վերջնականապէս ջնջուեց Արշակունիների թափաւորութիւնը (432 թ.): Անկախութեան վերջին նշոյլը վերանում է: Այսուհետեւ հայերին այլ ևս չաջողուեց ստեղծել մի այնպիսի իշխանութիւն, որ մարմնացնէր համազգային միութիւնն ու անկախութիւնը: Մնում էր միայն նախարարական սիստեմը, որ հայ ազգի ներքին, դաւառական ինքնավարութեան սկզբունք էր ներկայացնում: Նա թուլացնում էր կապը երկրի բոլոր մասերի մէջ, ոչնչացնում էր միութեան ոյժը և իւրաքանչիւր նահանգի, իւրաքանչիւր գաւառի

էր թողնում ինքնաւ իրան գոյութիւն պահպանելու հոգուը:

Այսպէս թուլացած, ջլատուած, երկիրը դիմում էր դէպի մի մութ, անյայտ, ոչինչ բարիք չը խոստացող ապագայ: Բայց նա ունէր համազգային միութեան մի մեծ կապ: Եւ դա նոր ստեղծուած գրականութիւնն էր: Ճակատագիրը, խլելով հայից քաղաքականանկախութեան հնարաւորութիւնը, միաժամանակ տալիս էր նրա ձեռքը ինքնուրոյն ազգային կեանքով ապրելու մի անխորտակելի գործիք—գրականութիւն:

Այս սքանչելի գործի հեղինակը Մեսրոպն էր: Նա վախճանուեց 439 թուականի փետրուարի 17-ին: Երեսուն հինգ տարի շարունակ, անշէջ եռանդով նա գործել էր իր գտած տառերը գրականութիւն, մտաւոր համատարած լուսաւորութիւն դարձնելու համար:

Նրանից վեց ամիս առաջ վախ-  
ճանուել էր և նրա մեծ գործա-  
կիցն ու հովանաւորը, Սահակ  
կաթողիկոսը։ Եկեղեցին երկու-  
սին էլ սուրբերի կարգն ընդու-  
նեց։ Նրանք մարտիրոսների նը-  
ման հաւատի համար չէին տան-  
ջուել, չէին նահատակուել։ Բայց  
նրանք կատարել էին մի խա-  
կապէս վեհ ու աւելի սուրբ գործ  
—ապրելու միջոց էին տուել մի  
ամբողջ ժողովրդի։

Ա. Մեսրոպին մեծ հանդէսով  
թաղեցին Օշական գիւղում։  
Այսօր էլ այցելուն, մտնելով  
Օշականի համեստ գիւղական և  
կեղեցին, առաջնորդում է աջ  
կողմի խորանը, ուր մի գուռ  
է բացւում, մի քանի աստիճան  
սանդուղքը ցած է տանում մի  
մութ խորշ, և այդտեղ, քարէ  
կամարների յաւիտենական ցուրտ  
լութեան մէջ, սպիտակին է

տալիս մի ցածրիկ, տափակ ու  
անզարդ քար:

Դրա տակ է հայոց տառերի հե-  
ղինակը, հայ մեծ ուսուցիչը, հայ  
դրականութեան ծնողը...

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

Ա Յ Ո Ւ Թ Ա Խ Ա Ր Ա Վ Ա Ր Ա Վ

II.

4 0 0 S U R T

ՀԱՅ ՏՊԱԳԻՐՈՒԹԵԱՆ

Ա.

ՃԳՆԱԺԱՄԻ ՄԵՋ

Ս. Սահակի և ս. Մեսրոպի  
գերեզմանները նոր էին փակուել,  
երբ յայտնի դարձաւ թէ ինչ էր  
նրանց թողած ժառանգութիւնը  
հայութեան համար:

Հինգերորդ դարը քաղաքական  
տեսակէտից դժբախտութիւնների  
դար էր: Հայ երկիրը անհաւա-  
սար կռուի էր բռնուել Պարս-  
կաստանի հետ, աւելուեց շատ  
անգամ, ենթարկուեց ամեն տե-  
սակ բռնութիւնների, ստորա-  
ցումների: Բայց նոյն այդ դըժ-  
բախտ դարը հայոց գրականու-  
թեան ոսկեղարն էր:

Այնուհետև դարեր եկան դա-  
րերի ետևից: Պարսկական տի-

րապետութեան յաջորդեց արաբականը։ Նոյն և դեռ էլ աւելի սաստիկ դժբախտութիւնները,— շարունակ աւերանքներ, շարունակ կործանում։ Եւ եթէ կայ այդ երկրի մէջ ոսկու կամ առհասարակ որևէ ազնիւ ու գեղեցիկ երևոյթի նմանութիւն տուող մի բան—այդ միմիայն նոյն Սահակ-Մեսրոպեան ժառանգութիւնն է. միմիայն հայոց կրականութիւնը։

Իրողութիւնը չը փոխեց և այն հանգամանքը, որ արաբական տիրապետութեան վերջերում մի շարք դաւառական թագաւորութիւններ կազմուեցին Հայաստանում։ Քաղաքական կեանքի ոչ մի տեսակ դասաւորում համատարած խաղաղութիւն և երջանկութիւն չէր բերում հայերին։ Մի տեղ լաց, մի տեղ ծիծաղ։ Մի տեղ գերութիւն, մի տեղ ազատութիւն։

Բայց ամեն տեղ մխիթարիչ  
երևոյթը, ապացոյցը թէ այդ ժո-  
ղովուրդը թէև մաշւում է ֆիզի-  
քապէս, բայց ապրում է հոգով  
ու մտքով, գրական-կուլտուրա-  
կան ջանքերն են, անդուլ ու ան-  
դադար։ Նրանք հոչակում են  
այս կամ այն վանքը իրրե գրա-  
կան դպրոց, հոչակում են մի  
Անիքաղաք։ Այդ մեծ ջան-  
քերը ծածկում են քաղաքական  
կացութիւնը, որ ընդհանրապէս  
միևնոյն է — դժբախտ։

Կար հայութեան ճակատագրի  
մէջ և այդ գրական-կուլտուրա-  
կան ջանքերին էլ սպառնացող  
մահուան տագնապ։ Եւ դա ահա-  
գին մի շրջան էր, ու ու մութ,  
հայոց պատմութեան մէջ։

Տասնեմէկերորդ դարի կէ-  
սից Միջին Ասիայի թիւրք ցե-  
ղերը սկսեցին ողողել Արևմտեան  
Ասիան, մահ ու ոչնչութիւն տա-  
րածելով ամեն տեղ։ «Նրանց

ձիերի սմբակները մաշեցրին մեր  
լեռները», ասում է մեր պատ-  
մագիրներից մէկը, սարսափա-  
հար ականատեսը այդ աշխարհա-  
ւեր արշաւանքների:

Բայց հայ ժողովրդի մէջ դեռ  
պահուել էին հին աղքային կազ-  
մակերպութեան մնացորդները —  
կալուածատէր իշխանները, նա-  
խարարները, որոնք դիմադրող  
ուազմական ոյժի ներկայացուցիչ-  
ներն էին: Եթէ նրանք անզօր հան-  
դիսացան բուն հայրենիքում մի  
բան անելու, գոնէ արին այն,  
որ հայ անկախութիւն ստեղ-  
ծեցին հայրենիքից հեռու, կի-  
լիկիայի լեռներում և այդտեղ,  
այդ անկախութեան հովանու-  
տակ, հայոց գրականութիւնը  
ծաղկեց մինչ այն աստիճան, որ  
արծաթի դար ունեցաւ:

Արևմտեան Ասիայի բախտը  
դեռ ահռելի փորձանքներ ունէր  
առջևում: Տասներեքերորդ դա-

ըից թաթարները կամ մոնղոլներն են ողողում նրան իրանց արշաւանքներով։ Ցեղեր էին դըրանք, որոնց առաջնորդները իրանց համար փառք էին համարում զարդարուել «երկնքի պատիժ» տիտղոսով։ Իսկ որ՝ պատիժ։ Քար քարի վրայ չը մնաց։ Թիւրք ձիաւորների թողած անապատները աւելիս ընդարձակուեցին։ Մեռնում էր Արևմտեան Ասիան, հին քաղաքակըրթութեան որբանը։

Հետևեալ XIV դարում երեւաց նոր պատիժ—Լէնկթեմուրը։ Հայաստանը դարձաւ համատարած սպանդանոց։ Լէնկթեմուրից յետոյ, XV դարում, այդ սպանդանոցի արիւնոտ հողի վրայ իրար հետ ընդհարւում էին այլ և այլ թափառական, խաշնարած ցեղեր։ Նրանց գոյութեան վերջ դրին նորակազմ Պարսկաստանը և Օսմանեան

Թիւրքիան։ Բայց սկսուեց նոր  
աղէտ—այս երկու պետութիւնն-  
ները, սահմանակից դառնալով,  
բաժանեցին Հայաստանը իրանց  
մէջ և սկսեցին իրար դէմ պա-  
տերազմներ մղել նրա հողի  
վրայ։

Երեք գար արեան փոթորիկ-  
ների, պետութիւններ ու եր-  
երկիրներ կործանող տակն ու  
վրայութիւնների մէջ։ Նրանք  
բոլորովին կերպարանափոխել էին  
հայ ժողովուրդը։ Թուով սաս-  
տիկ պակասել էր նա։ Նրա երկ-  
րում հաստատուել էին թուրք-  
ցեղեր, իսկ նա փոքրիկ կամ  
մեծ կաթիլների նման ցըռւած  
էր միապաղաղ մահմեղակա-  
նութեան մէջ։

Այդ դեռ բոլորը չէր։ Կորց-  
րել էր նա իր հին ազգային կազ-  
մակերպութիւնը—հայ հողատէր  
ազնուականութիւնը և պաշտ-  
պանուելու այլ ևս ոչ մի միջոց չու-

նէր: Հոգևարքի վերջին ըռպէ-  
ներն էր ապրում և Սահակ-Մես-  
րոպեան ժառանգութիւնը — հա-  
յոց գրականութիւնը: Միտք չէր  
մնացել, մտքի տեղ չէր Հայաս-  
տան անունով սպանդանոցը: Ճիշտ  
է, մի-մի անգամ առկայծում  
էին մենաւոր ճրագներ վանքե-  
րում, ուր սարսափահար վանա-  
կանը դեռ գրիչ էր շարժում,  
բայց դա այլ ես գրականութիւն-  
չէր, դա միայն արտագրութիւն-  
ների արհեստն էր:

Հիմա որ կարելի էր ասել թէ  
իսկապէս մեռնում էր հայ ժո-  
ղովուրդը, զրկուելով իր ազգա-  
յին առանձնայատուկ գոյութեան  
երկու խոշոր նեցուկներից: Ազ-  
նուականութեան ջնջումը ան-  
դառնալի մի իրողութիւն էր:  
Գրականութիւնը ջնջողը միայն  
սուրը չէր, այլ և վերահաս բնա-  
կան մահը:

Աշխարհի մէջ ընդհանուր օ-

ըԵնքանէ ոլու գրական լեզուն,  
 երկար ժամանակ քարանալով  
 իր ձևերի մէջ, հեռանում է ժո-  
 ղովրդի գործածական լեզուից,  
 անհասկանալի, խորթէ դառ-  
 նում ու մեռնում: Հայոց գրա-  
 կան լեզուն, գրաբարը, վաղուց  
 էր ենթարկուել այդ վիճակին:  
 Ժողովրդի գործածական լեզուի,  
 աշխարհաբարի պահանջ էր զգաց-  
 ւում: Եւ անկենդան գրաբարը  
 վերջին ջղաձգութիւններն էր  
 անում մահուան տագնապի մէջ:  
 Ճգնաժամը լիակատար էր XVI  
 դարի սկզբում: Բայց այս ահա-  
 ւոր ժամին էլ ազգի ինքնապաշտ-  
 պանութեան բնագդը սկսում է  
 գործել, վերանորոգում է իր ջան-  
 քերը կորուստից փրկուելու հա-  
 մար:

Այդպիսի ջանքերի տեղ, ի-  
 հարկէ, այլ ևս չէ կարող լինել  
 Հայաստանի արիւնոտ հողը: Եւ  
 մենք տեսնում ենք մի նոր զար-

մանալի երևոյթ, որ ծնուել է  
Հայաստանի դժբախտութիւն-  
ներից և որ նրա համար մի նո-  
րատեսիլ, ինքնատիպ բախտ է  
ստեղծում:

Աւերակների դարերը հայ աղ-  
գաբնակութեան սովորեցրին դադ-  
թել զանազան երկիրներ, հեռա-  
ւորութիւնները արհամարհելով:  
Նոյն դարերը հայի առջև թողե-  
ցին գործունէութեան մի ասպա-  
րէզ—վաճառականութիւն:

Ահա այն երևոյթը, որ այժմ  
հանդէս է դալիս գործելու: Նա  
տանում է մեզ օգնար աշխարհ-  
ներ: Եւ մենք պիտի գնանք նրա  
ետևից վերակենդանութեան ջան-  
քերը տեսնելու համար:

## Ս Կ Ի Զ Բ Է

**Տասն և վեցերորդ դարի սկզբն է:**

Իտալիայի հիւսիսային մասերում, Աղրիական ծովի ափին սեղմուած կղզիների մի խումբ կայ և դրանց վրայ տարածուած է մի հրաշք-քաղաք:

Վենետիկը:

Բնութեան հրաշքն է նա: Եօթանասուն հատ փոքրիկ կղզիներ: Նրանց բաժանող նեղ ջրանցքները այդ քաղաքի փողոցներն են: Երեք հարիւր քսանինն հատ կամուրջ են հաշւում այդ ջրանցք-փողոցների վրայ և ինն հազար նաւակներ-գօնդոլներ: Զը կայ և ոչ մի հատ կառք, չէ երևում և ոչ մի հատ

ձի կամ այլ բեռնակիր անասուն։  
Լուռ է կղզիների քաղաքը, հա-  
կառակ իր մէջ եռացող կեանքին։

Պատմութեան հրաշքն էլ է նա։  
Ամայի ու անբնակ էին այդ 70  
կղզեակները։ Աղ և աւազ միայն։  
Հինգերորդ դարում բարբարոս-  
ները յարձակուեցին հիւսիսային  
իտալիայի վրայ, հիմնայատակ  
արիննրան։ Այդտեղ ապրող վենետ  
ցեղից մի քանի խմբեր փախան  
անցան այս կղզիները, բնակու-  
թիւն հաստատեցին։ Աղքատ ու  
անճար էին նրանք, ձուկ էին որ-  
սում, աղ էին վաճառում։ Բայց  
նրանք ծովի որդեգիրները դար-  
ձան, տիրեցին ծովի ալիքներին,  
անվախ նաւապնացներ եղան։ Եւ  
ծովը մեծացրեց այդ հրաշք-քա-  
ղաքը, հարստացրեց նրան, աշ-  
խարհի ամենահռչակուած տեղե-  
րից մէկը դարձրեց։

Զկնորսները սկզբից և եթ ի-  
րանց կղզիների վրայ հաստատե-

ցին ռամկավարական հանրապետութիւն։ Իրանք հետզհետէ վաճառական դարձան և դուրս գալով Աղբիական ծովի սահմաններից, ծովով ու ցամաքով առևտուր էին անում Արևելքի և Արևմուտքի բոլոր ազգերի հետ։ Առևտը յաջողութեան համար նրանք մրցում էին միւս տեղերի հետ ոչ միայն խելքով ու ճարպիկութեամբ, այլ և զէնքով։ Իններորդ դարում, ինչպէս սիրում է պատմել աւանդութիւնը, վենետիկցի վաճառականները Եգիպտոսի Ալէքսանդրիա քաղաքում գողացան Մարկոս աւետարանչի մարմինը, որ թաղուած էր մի յունական եկեղեցում, փոխադրեցին Վենետիկ։ Այնուհետև քաղաքը, հանրապետութիւնը, ամբողջ ժողովուրդը կոչւում էին ս. Մարկոսի անունով։ Ա. Մարկոսի թևաւոր առիւծը, վաճառական հանրապետութեան զինա-

նշանը, տիրապետեց ծովերի և  
ցամաքների վրայ: Աշխարհի բու-  
լոր կողմերից հարստութիւններ  
թափուեցին Վենետիկ, նախկին  
ձկնորսներն ու աղավաճառները  
դարձան դրամի ազնուականներ,  
մարմարեայ հոյակապ տաճար-  
ներ, պալատներ ու ապարանք-  
ներ բարձրացրին, որոնք այսօր  
էլ այդ հրաշք քաղաքի հրա-  
շալիքներն են:

Տասն և երկուերորդ դարում  
խիզախ, շրջմոլիկ վաճառական  
և Մարկոս խաչակիրների հետ  
երեսց Միջերկրական ծովի ա-  
րևելեան ափերում և այդտեղ,  
ուրիշ շատ ազգերի թւում, ծա-  
նօթութիւն կապեց և կիլիկիայի  
հետ: Ծանօթութիւնը երկար տե-  
ւեց, մինչև Ռուբինեան թագա-  
ւորութեան վերջը: Քանի կար  
այդ թագաւորութիւնը, վենետիկ-  
ցիները արտօնութիւններ էին  
ստանում հայ թագաւորներից,

որպէս զի լաւ առևտուր անեն,  
լաւ շահուեն ոչ միայն ծովի ա-  
փին, այլ և երկրի մէջ։ Նրանք  
միայն դրսից եկող վաճառական-  
ներ չէին, այլ և բնակութիւն  
էին հաստատում հայերի մէջ,  
ամեն տեսակի վաճառականներ  
էին, նոյն իսկ գինեվաճառներ,  
պանդոկապետներ։

Իսկ երբ հայկական Կիլիկիան  
իր վերջին շունչը փչեց Եգիպ-  
տոսի մամլիւքների ահեղ հա-  
րուածների տակ, վաճառական  
ու Մարկոսը մի անգամ էլ «ահ»  
չարեց։ Հայի տեղ մամլիւք, սել-  
ջուկ, թիւրք—միևնոյն չէր վա-  
ճառականի համար։

Բայց Վենետիկը, որին տա-  
լիս են նաև Աղրիական ծովի  
թագուհու պատուանունը, ուրիշ  
կողմով վերադարձրեց հայերին  
բարիքներ այն հիւրնկալութեան,  
այն վաստակների փոխարէն, որ  
նա վայելել էր Կիլիկիայում մի

քանի հարիւր տարիների ընթաց-  
քում: Ա. Մարկոսը երախտա-  
մուռ չը հանդիսացաւ:

Կորցնելով անկախութիւնը ի-  
րանց բուն երկրի և կիլիկիայի  
մէջ, հայերն էլ դարձան թափա-  
ռաշրջիկ, մեծագոյն մասամբ վա-  
ճառական: Վենետիկը դարձաւ  
մի կայան նրանց թափառումնե-  
րի ճանապարհին: Մի վենետիկցի,  
որ երկար ժամանակ առևտուր  
էր արել կիլիկիայում, իր մի-  
ջոցներով շինեց «Հայոց Տուն»  
անունով մի հիւրանոց, ուր բո-  
լոր պանդուխտ հայերը պատ-  
րաստ օթևան էին դտնում:

Բայց միայն պանդուխտները  
չէին այցելում և Մարկոսի քա-  
ղաքը: Հետզհետէ այդտեղ կազ-  
մուեց և հայ վաճառականների մի  
գաղութ, որ առևտուր էր անում  
Արևելքի հետ:

Այսօր այլ ևս չը կայ այդ  
գաղութը, բայց մնացել է նրա

շինած փոքրիկ եկեղեցին վեհետիկի զարմանալի նեղ փողոցներից գուցէ ամենանեղի մէջ։ Շաբաթը մի անգամ ս. Ղազարի կղզուց գալիս է Մխիթարեան մի վարդապետ, բաց է անում փոքրիկ եկեղեցու դուռը և թիւ պատարագ է կարդում այն վաղուց մոռացուած, մեծ մասամբ անզիր գերեզմանների համար, ուրոնք գտնւում են այդտեղ, եկեղեցու կամարների տակ։

\*\*\*

1455 թուականին մի հրաշալի դէպք տեղի ունեցաւ մարդկութեան մէջ։ Գերմանական Մայնց քաղաքի մի համեստ արհեստաւոր, Յովհան Գուտենբերգ անունով, երկար տարիների փորձերից ու տանջանքներից յետոյ, իր հնարած միջոցներով տպեց ու լոյս հանեց մի մեծ գիրք—Աստուածաշունչ։ Ժամանակի գիտունները իս-

կոյն լմբոնեցին թէ ինչ մեծ լոյս  
է ծագել մարդկութեան մտքի  
համար: Եւ նրանցից մէկը գրում  
էր թէ բոլոր այն աղգերը, որոնք  
գիր ունին, պիտի փառաբանեն  
Գուտենբերգին «աստուածային  
գովեստներով»...

Դա, ճիշտ որ, գրի ահագին  
յաղթանակն էր, որ Մայնց քա-  
ղաքից գնաց նուաճելու ամբողջ  
երկրագունդը: Մինչև այդ երջա-  
նիկ գիւտը՝ գիրքը գրւում էր  
ձեռքով և չափազանց թանգ էր,  
մատչելի էր միայն հարուստ ան-  
հատներին: Բացի այդ՝ ձեռագիր  
գիրքը արտագրւում էր մի կամ  
մի քանի օրինակ, ուստի և չէր  
կարող տարածւել ամեն տեղ,  
մտնել ժողովրդի մէջ:

Տպագրութեան գիւտը էժա-  
նացնում էր գիրքը, ժողովրդա-  
կանացնում էր գիրքը, տարա-  
ծում էր նրան աշխարհի բոլոր  
ծայրերում: Ամբողջ մարդկու-

թեան մէջ հաստատւում էր մտքի  
հեշտ, արագ և էժան հաղորդակ-  
ցութեան միջոց։ Ո՞րքան մեծ է  
մեզ համար այն մարդը, որ հնա-  
րել է երկաթուղին. բայց նրա-  
նից աւելի մեծ է այն մարդը, որ  
հնարել է տպագրութիւնը, որով  
հետեւ այս գիւտը սկսել է նոյն  
դերը կատարել մարդկային մտքի  
համար՝ երկաթուղու գիւտից շատ  
ու շատ առաջ։

Ահա ինչ է նշանակում 1455  
թուականը։ Համաշխարհային  
պատմութեան այդ մեծ օրից ան-  
ցել է ընդամենը 57 տարի. 1512  
թուականն է։ Վենետիկ ենք, ըն-  
թերցող։

Ի՞նչ ենք տեսնում։

Ա. Մարկոսի շքեղ մայրաքա-  
ղաքում աւելացել է արուեստի և  
արդիւնաբերութեան մի նոր ան-  
պարէզ—տպարանը։ Ո՞րքան սի-  
րել է վենետիկցին այս նոր գիւ-  
տը։ Մինչդեռ ամբողջ մեծ եր-

կիրներ կան, ուր դեռ չեն մտել  
Գուտենբերգի մամուլն ու տա-  
ռերը, այստեղ միայն, այս հօ-  
թանասուն փոքրիկ կզզիների վլ-  
րայ բանում են ոչ թէ մի, ոչ թէ  
երկու, տասը տպարան, այլ եր-  
կու հարիւր յիսուն հատ։ Տաս-  
նեակ հազարներով գրքեր են  
տպւում և Ա. Մարկոսի նաւերը  
այս նոր տեսակի ապրանքը տա-  
նում տարածում են ամեն տեղ,  
լոյս են սփոռում։

Այսօր է որ տպարան բանալը,  
գիրք տպելը հեշտացել է, մեծ  
գործ չէ համարւում։ Այսպէս չէր  
այն ժամանակները։ Արուեստը  
դեռ նոր է, կատարելագործուած  
չէ և հարկաւոր է ահագին դը-  
ֆուարութիւններ ոտնակոխ անե-  
լու խիզախութիւնն ունենալ։ Վե-  
նետիկի տպագրիչները հասարակ  
արհեստաւորներ չեն, այլ և գիտ-  
նականներ։ Աշխատում տքնում են  
օր ու գիշեր, աղօթելով են իրանց

գործին մօտենում, զգում են որ  
 սրբագործութիւն են կատարում:  
 Եւ երկու հարիւր յիսուն տը-  
 պարանների քաղաքը միայն իր  
 մասին, միայն իտալիայի մասին  
 չէ մտածում: Գրքեր նա տպում  
 է զանազան լեզուներով: Այս նոր  
 գործի մէջ էլ խօսում է Ս. Մար-  
 կոսի վաճառականական հանճա-  
 րը: Գիրքը ապրանք է և վենե-  
 տիկը գրքեր պատրաստում է և  
 այն ազգերի համար, որոնք դեռ  
 տպագրութիւն չունին, բայց  
 սրանք իր առևտրական գործո-  
 ղութիւնների շրջանի մէջ են  
 գտնւում: Նա գրքեր տալ և արարերէն  
 լեզուով, մահմետական Արևելքին:  
 Ահա այս Վենետիկի մէջ,  
 1512-ին, մի գեղեցիկ օր, որ  
 տարաբախտաբար անյայտ է մը-  
 նացել, այդ հարիւրաւոր տպա-  
 բանների մէկից լոյս աշխարհ է

գալիս հայերէն լեզուով մի հատ  
գիրք։ Նրա անունն է «Պարզատու-  
մար»։ Ժողովրդի գործածութեան  
համար մի Օրացոյց է։ Արևելքի  
հին բազմաչարչար ազգը իր յա-  
տուկ ինքնուրոյն գրքերով այս-  
պիսով գալիս է, տպագրութեան  
պատմութեան այս վաղ առաւօ-  
տեան, բազմելու գերմանացու,  
Փրանսիացու, իտալացու, անգ-  
լիացու և այլ եւրոպացիների  
կողքին։

Սա հրաշքի պէս մի բան էր։  
Եւ ժւմ ենք պարտական այդ  
հրաշքը։

Տարաբախտաբար յայտնի չէ։  
Տպագրութեան սկիզբը այսպէս է  
համարեա բոլոր ազգերի մէջ։ Ա-  
նուններ չէին յիշում, նոյն իսկ  
աշխատում էին թագցնել թէ  
գրերը տպագրուած են, որովհե-  
տեւ նոր արուեստը դեռ ժողո-  
վրդականացած չէր և դեռ ձե-  
ռագիր գրքերի հմայքն էր տիրում։

Այսքանը կայ միայն, որ հետևեալ տարին, 1513-ին, նոյն վենետիկում, նոյն տառերով և նոյն տպարանական նշանով տըպուեցին էլի չորս հատ հայերէն գրքեր և դրանցից մէկի յիշատակարանում ասուած է թէ գործը կատարուել է «մեղապարտ Յակոբի» ձեռքով։ Ո՞վ է այդ Յակոբը — չը գիտենք։ Արդեօք վենետիկի մէջ ապրող հայերից մէկը։ Եւ ի՞նչ է նրա արածը։ Արդեօք վենետիկի տպարանատէրերից մէկն էր թէ լոկ հայերէն տառերի նմուշներ է հայթայթել վենետիկցի մի տպարանատիրոջ։

Իւրաքանչիւր ազգ առանձին պարծանքով է յիշատակում իր առաջին տպագրիչին։ Մեզ, հայերիս, միայն այս մի հատիկ անյայտ անունն է ժառանգութիւնն մնացել — «Մեղապարտ Յակոբ», որ և ասում է. «Ովոր կարդայք մե-

դաց թողութիւն խնդրեցէք Աստուծոյ»: Հարկաւոր էլ չէ թողութիւն խնդրելը, երբ մի ամբողջ ժողովուրդ երախտապարտ է նրան:

Նա գրեց հայ տպագրութեան սկիզբը: Թէ նրան դժուար գործ էր այդ նորութիւնը, կիմանանք հէնց նրանից, որ 1513 թուականից յետոյ երկարատև լուսութիւն է իջնում հայ տպագրութեան վրայ: Հայերէն գիրք մէկ էլ տպւում է, դարձեալ նոյն վենետիկում, 52 տարուց յետոյ, 1565-ին: Ճիշտ է, կայ մի տեղեկութիւն, որ թոյլ է տալիս ենթագրելու թէ այդ թուականից առաջ էլ եղել է հայերէն տպագրութիւն, բայց մանրամասն տեղեկութիւն չը կայ այդ մասին: Այս անգամ մենք արգէն շատ բան գիտենք այն մարդու մասին, որ 1565-ին տպագրեց «Ասդմու»: Դա Աբգար դպիր անու-

նով հայն էր, Թիւրքիայի Թռ  
քատ քաղաքից։ Ժամանակի կա-  
թողիկոսը, Միքայէլ, չը կարո-  
ղանալով այլ ևս դիմանալ պարու-  
կական հարստահարութիւններին,  
թողեց էջմիածինը և զնաց իր  
հայրենի Թռքատ քաղաքը, ուր  
ժողով կազմեց և նրա համաձայ-  
նութեամբ ուղարկեց Արգարին  
և նրա որդի Սուլթանշահին  
Հռոմ, որպէս զի խնդրէ պատին  
ազատել քրիստոնեայ հայերին  
մահմեղականների տիրապետու-  
թիւնից։

Արգարը կաթողիկոսի խնդրա-  
գիրը տարաւ Հռոմ, բայց պա-  
պից ստացաւ առաջարկութիւն  
որ հայոց եկեղեցին հպատակուի  
կաթոլիկ եկեղեցուն։ Տառապող  
քրիստոնեանների այս վերջին յոյսն  
էլ ջուրն էր ընկնում։ Արգարն ու  
իր որդին վենետիկում տառեր  
փորագրել տուին, տպեցին «Աղ-  
մոսը»։ 1567 թուին Արգարն ար-

դէն կ. Պօլսումն է և այդտեղ է սկսում տպագրութիւններ։ Եւ այսպիսով, թիւրքաց մայրաքաղաքը երկրորդ տեղն է, ուր հիմնաւորւում է հայ տպարանը։

Սակայն այստեղ էլ սկզբնաւորութիւնը անկայուն էր, օրպակաս։ Աբգարի գործը շարունակող չեղաւ։

Այնուհետև 1584-ին տպւում է մի գիրք Հռոմում, «Տոմար Գրիգորիան» անունով։ Իսկ երեք տարուց յետոյ, 1587-ին, Հայաստանցի մի քահանայ, Յովհաննէս Տէրզնցի, որ իր որդու հետ գնացել էր Եւրոպա, տպագրեց Վենետիկում մի «Սաղմոսարան»։

Վերջացաւ տասն և վեցերորդ դարը, իսկ հայ տպագրութիւնը դեռ չէր գուրս եկել իր սաղմնային գրութիւնից։

1512-ից յետոյ գրեթէ մի դար է անցել և այդ ամբողջ ժամանակամիջոցում տպուած հա-

*յերէն գլքերի թիւն է 9 հատ:*

*Սա յուսահատական մի դան-  
դաղկոտութիւն էր, եթէ ի նկա-  
տի առնենք որ եւրոպական ազ-  
գերի մէջ տպագրութիւնը օրը  
օրին ընդարձակ չափեր էր ըն-  
դունում:*

Համար պայման աճած  
նորոգ բարեկար կո վազնամբ  
ուղարկելուաբանից ու մոյքը և առ  
հան աջրակի պահանձ առ իմ  
Տրնու Պատերի վաշքիւն ուժուն  
այ քարտի ամենամասնու այս 6  
առ վերաբեր էր այս զանոնք  
միանձնուր ուժապար շահ  
Ա. Կապութիւնուր ուշ արտաք  
հանաբանից ու զամա վահիր ամ  
է Կապութիւնուց ամբ յի զուս և  
այս ամենի արուր անդունուրագնք  
անձն ու այս աման ու աման ամսնական աման ու ամսնական աման

Բ.

Զ Ա Ր Գ Ա Ց Ո Ւ Խ Մ Ա յ լ ա ր ը մ ա ր դ ա զ զ ը մ է ն դ ի  
լ ի ն ե լ հ ա յ ե ր ի մ է ջ :

Կ ե ա ն ք ն է ո ր պ ա հ ա ն ջ է դ ա ր ձ ~  
ն ո ւ մ գ ի ր ն ո ւ գ ր ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ը :  
Ի ս կ հ ա յ կ ե ա ն ք ը , ի ն չ պ է ս տ ե ղ ~  
ծ ե լ ո ւ պ ա յ մ ա ն ն ե ր ի ց վ ա ղ ո ւ ց է ր  
զ ր կ ո ւ ե լ :

Հ ա յ տ պ ա ր ա ն ը զ ա ղ ո ւ թ ա յ ի ն  
ծ ն ո ւ ն դ է ր , զ ա ղ ո ւ թ ն ե ր ո ւ մ է լ  
ն ա պ ի տ ի ա պ ր է ր ու դ ա ր գ ա ն ա ր ,  
և ա յ ս օ ր է լ դ ե ռ շ ա ր ո ւ ն ա կ ո ւ մ է  
զ ե ր ա զ ա ն ց օ ր է ն զ ա ղ ո ւ թ ա յ ի ն հ ի մ ~  
ն ա ր կ ո ւ թ ի ւ ն մ ն ա լ :

XVI դ ա ր ո ւ մ ն ր ա զ ա ր գ ա ց ո ւ մ ը  
թ ո յ լ է , ո ր ո վ հ ե ա և դ ե ռ զ ա ղ ո ւ թ ~  
ն ե ր ն է լ շ ա տ չ է ի ն զ ա ր գ ա ց ե լ  
հ ա յ ո ց գ ր ա կ ա ն ո ւ թ ե ա ն տ ե ս ա կ է ~

տից։ Գրադութները այն ժամանակ դեռ ինքնուրոյն չէին, նըրանց գրական կարողութիւնը կախուած էր բուն հայրենիքից, Հայաստանից։ Այստեղից, այս դժբախտ երկրից, պիտի մզում առաջ գալ:

Իսկ այսպիսի մի մզում առաջացնելու համար ովէտք էր որ Հայաստանը մի ահոելի թշուառութեան էլ մատնուի, այնպիսի մի թշուառութեան, որ համարեա մոռացնում էր նախկին բուլոր աղէտները։

XVII զարի սկզբում, ինչպէս յայտնի է, Պարսից Շահ-Արքաս թագաւորը դատարկեց ամբողջ Արքատեան աշխարհը և նրա հարեան բազմաթիւ գաւառները, քշեց հայ աղդարնակութիւնը Պարսկաստան։ Թիւք-պարսկակական պատերազմների հետեւանքն էր այդ աշխարհաւէր ձեռնարկութիւնը։ Շահ-Արքան ու-

գում՝ էր, օսմանեան յարձակումներից իր երկիրը պաշտպանելու համար, գոյացնել երկու պետութիւնների մէջ մի անապատ, մի կատարեալ ամայութիւն։ Եւ այդ գերը պիտի կատարէր Հայաստանը։

Եւ նրան յաջողուեց, զոնէ առժամանակ, այդպիսի մի անապատ դարձնել Հայաստանի սիրտը կազմող երկիրները։ Քարուքանդ եղաւ ամեն ինչ։ Երկիրը մեռաւ։ Բայց այս ահռելի խորտակման մէջ մի հանգամանք կար, որ մի նոր տհուակի կենսունակութեան սաղմեր էր կը բում իր մէջ։

Այդ այն էր, որ Շահ-Արքասը իր գաղթեցրած ահազին ժողովրդից ընտրեց մի բուռը—ջուղայեցիներին և ընակեցրեց նըրանց իր մայրաքաղաքի շրջակայքում, իր հովանու տակ Վաճառական էր պարսից այդ

մեծ բոնակալը։ Իսկ Արաքսի  
քարքարոտ ափին զետեղուած  
Զուղան բաղկացած էր հարուստ  
և վերին աստիճանի եռանդուտ  
վաճառականներից։ Նրանց հետ  
ընկերացաւ Շահ-Աբբասը, փող  
էր տալիս, Արևելքի ապրանք-  
ները նրանց էր յանձնում որ  
տանեն ծախսեն Եւրոպայում և  
այնտեղից ապրանքներ բերեն։

Եւ Նոր-Զուղան արագ կերպով  
դարձաւ մի արտօնուած, հա-  
րուստ գաղթականութիւն Պարս-  
կաստանի սրտի մէջ։ Նրա կա-  
րաւանները պտտում էին Հընդ-  
կաստանի և Արևմտեան Եւրո-  
պայի մէջ։ Թագաւորի բարեկա-  
մութիւնը, թագաւորի շահը պահ-  
պանում էր նրան ամեն տեսակ  
արտօնութիւններով։ Դիզուեցին  
հարստութիւններ, գիւղաքաղաքը  
հոյակապ ապարանքներով դար-  
դարուեց։ Եւ հասկանալի է։ XVII  
դարի մի ֆրանսիացի ականա-

տես գըռում է որ Վենետիկում  
երկու կամ երեք ֆրանկով դնած  
ապրանքը ջուղայեցին ծախում  
էր իր երկրում 30 կամ 40 ֆր-  
րանկով:

Առևտրական գաղութը դառ-  
նում է նշանաւոր կենտրոն, որ  
խիստ ազդեցութիւն ունի Հա-  
յաստանի վրայ: Եւ կենտրոն է  
դա ոչ միայն իր նիւթական  
հարստութիւններով: Այդաեղ  
կենտրոնանում է և մի մտաւոր  
կեանք: Եւ այդ տեսակ միջա-  
վայրի վաճառականը գրասենեակ-  
ներ և գաղութներ ունի Վենե-  
տիկ, Լիվոնիո, Մարսէլ, Լօնդոն,  
Ամստերդամ քաղաքներում:

XVII դարի առաջին կէսում  
հայ տպագրութեան գործը հա-  
մարեա միանոյն գրութիւնն է  
ներկայացնում, ինչ նախընթաց  
դարում: Հատհատ պատահական  
տպագրութիւններ են լինում Լե-

հաստանի լվով քաղաքում, Հոռոմում, Միլանում, Պարիզում:

Այսպէս է, որովհետեւ երկիրը, հայութեան հայլենիքը մեռած աւերակներ է: Բայց ահա, նոյն այդ առաջին յիսնամեակում, աւերակների մէջ սկսում է վերածնութեան մի փոքրիկ շարժում, որ կամաց-կամաց մեծանում է: Վանքերի խուցերում սկսում է ճգնաւորութեան մի նոր տեսակ: Դա այն է, որ ուխտուածները անդադար կարդում են:

Եւ այսպիսի մի զբաղմունք ձիշտ որ շատ հարկաւոր էր: Հայը մոռացել էր իր գրքերը: Նրանք թափուած էին աղբերի ու վոշիների մէջ: Հին գրականութիւնը միանգամայն անհասկանալի էր դարձել: Երկարանի տանջալից վարժութիւններ էին հարկաւոր, որպէս զի հայը իր վայրենացման շրջանից դուրս

գայ և դառնայ գոնէ այն, ինչ  
 էր վեց-հօթը դար առաջ—գրա-  
 գէտ, փոքր ի շատէ ծանօթ հին  
 յունական միլիսովայութեան,  
 որ հայերէնի էր վերածուել հին-  
 գերորդ և յաջորդ դարերում:  
 Այս գրական շարժումը, այս  
 փոքրիկ վերածնութիւնը հին գը-  
 րականութեան ղեկավարութեամբ  
 ստեղծեց երկու նշանաւոր գրա-  
 կան դպրոցներ—մէկը Սիւնի-  
 քում, Տաթևի վանքի մօտ, միւսը  
 Բաղէշում, Ամրդոլուի վանքում:  
 Երկու դպրոցներն էլ տուին մի  
 շարք աշակերտներ, որոնք հան-  
 դիսացան եռանդու գաղափա-  
 րական գործիչներ: Սիւնեաց և  
 Բաղէշի դպրոցները միացան  
 Նոր-Զուղայում: Ահա և մի եր-  
 րորդ դպրոց, որ նախընթացնե-  
 րից աւելի խոշոր դեր կատարեց:  
 Այդ դերը նախ և առաջ  
 այն էր, որ հայ հոգևորականու-  
 թիւնը այլ ևս այն աստիճան

տգէտ չէր, այն աստիճան ան-  
 ծանօթ նոյն իսկ հայերէնի տար-  
 լական քերականութեան: Երկար  
 ժամանակներից ի վեր մոռա-  
 ցուած դրականութիւնը նորից  
 ապրելու հնարաւորութիւն էր  
 ստանում, նորից դրքեր դրել սո-  
 վորեցին հայերի մէջ: Դպրոց-  
 ները շատացան, առաջ եկան  
 գործիչներ, որոնք ահագին ջան-  
 քեր էին գործ դնում աւերակ-  
 ները վերանորոգելու, վայրենա-  
 ցած բարքերը մեղմացնելու, լու-  
 սաւորութիւն տարածելու համար:  
 Մենք չը պիտի մոռանանք որ  
 այս շարժումը կատարւում էր  
 Հայաստանի պէս մի երկրում,  
 դարերով քարուքանդ եղած,  
 դարերով ենթարկուած բարբա-  
 րոս ազգերի աիրապետութեան:  
 Վերածնութիւնը կատարւում էր  
 այն միջոցներով, որոնք մնա-  
 ցել էին այդ աւերակ երկրում  
 հին ժամանակներից: Դրսից,

լուսաւոր աշխարհից ոչ մի օդ-  
նութիւն չէր հասնում այդ պե-  
րածնութեան։ Այդ պատճառով էլ  
XVII դարի այդ շաբթումը, ինքն  
ըստ ինքեան, մի նշանաւոր բան  
չէր ընդհանուր գրական-կուլտու-  
րական տեսակէտից։ Բայց հայ  
երկրի համար այդ համեստ գա-  
ղափարական գործունէութիւնը  
շատ մեծ բան էր, ուղղակի մի  
նոր դարագլուխ էր ցոյց տալիս։

Մի խօսքով դարձեալ Սահակ-  
Մեսրոպեան գպրոցն էր, որ  
դուրս գալով մոռացութեան գե-  
րեզմանից, մի անգամ էլ փրկում  
էր հային։

Գրական շաբթումը, բնակա-  
նաբար, տպարանի մեծ կարևո-  
րութիւնը պիտի զգալ։ Թէ հայ  
տպագրութիւնը մինչև այդ չէր  
տուել հայերին տպագրած գըր-  
քերի մի մեծ հարստութիւն, բայց  
այս մի պատճառ չէր որ նոր  
փորձեր չը լինէին նրան աւելի

դարպացնելու, աւելի արդիւնա-  
ւոր դարձնելու համար:

Ասիայի խորքում տառապող  
ժողովուրդը չէր մոռանում որ  
Եւրոպայում կայ լուսաւորու-  
թեան այդ մեծ գործիքը: Դեռ  
XVI դարում Կիլիկիայի Ազա-  
րիա կաթողիկոսը մարդ ուղար-  
կեց Հռոմ և թղթով էլ աղաչեց  
պապին որ մի հայերէն Աստուա-  
ծաշունչ տպել տայ: XVI-ի ոկրո-  
բում էջմիածնի Սրապիոն կա-  
թողիկոսը, քաղաքական անա-  
սելի թշուառութիւններով շրջա-  
պատուած, մտածում էր մարդու-  
ղարկել Եւրոպա գրքեր տպա-  
գրելու համար: Նա չը կարողա-  
ցաւ իրագործել այդ միտքը և  
կտակ թողեց որ գոնէ իրանից  
յետոյ, աւելի նպաստաւոր հան-  
դամանքների մէջ, զլուխ բերուի  
այդ գործը:

Գրական վերածնութեան գոր-  
ծիչները իհարկէ, աւելի լաւ ըմ-

բոնեցին տպարանի նշանակութիւնը։ Եւ ահա նրանք ուղարկում են Եւրոպա մի շարք մարդկանց, որոնք եռանդով աշխատում են այնտեղ, կուռում են բազմաթիւ արգելքների դէմ, իրանց տանջանքներով զարգացնում են հայ տպագրական գործը։ Դրանք մեր տպագրութեան երախտաշատ վաստակաւորներն են։

Առաջին լուրջ փորձը սկսում է Նոր-Զուղան։ Այդպէս էլ պատշաճում էր նրան իրրե մի հարուստ առևտրական գաղթավայրի, որ յարաբերութիւններ ունէր Եւրոպայի հետ։

Զուղայի առաջնորդը Խաչատուր կեսարացին էր, գրական վերածնութեան ամենաեռանդուտ գործիչներից մէկը։ Նա Զուղայի Ամենափրկիչ վանքը դարձրեց գրական և կրթական մի ծաղկած կենտրոն։ Կաղմեց այդտեղ ձեռագիր գրքերի մի մատենա-

դարան և որոշեց տպարան բաց  
անել նոյն վանքում։ Գործին  
ձեռնարկեց նա մեծ ոգևորու-  
թեամբ։ Ամեն ինչ կարելի եղաւ  
պատրաստել տեղում—թէ տա-  
ռեր, թէ մամուլ։ Սա մի անօ-  
րինակ գործ էր Ասիայում առ-  
հասարակ և Պարսկաստանում  
մանաւանդ։

1640 թուականին այդ տպա-  
րանից լոյս տեսաւ «Հարանց  
վարք» անունով գիրքը, «րի յի-  
շատակարանը մեր տպագրու-  
թեան պարծանքը կարող է հա-  
մարուել։ Տառերը անկանոն էին,  
տպագրութիւնը կոպիտ, անա-  
րուեստ։ Բայց Պարսկաստանի  
խորքում այդ էլ մի հրաշք էր։  
Մարդիկ մի ամբողջ տպարան  
էին կազմել, առանց տպարան  
տեսած լինելու։ Երեխ ջուղայեցի  
վաճառականները, Եւրոպայում  
տեսած լինելով այդ արուեստը,  
պատմել էին թէ ինչպէս են գըր-

քեր տպւում։ Եւ Ամենափրկչի վանքում որքան աշխատանք էին թափել այդ հիմնարկութիւնը գըշ լուխ բերելու համար։ Յիշատակարանը պատմում է որ աշխատել են ամենքը — հոգեսորական և աշխարհական, ծեր ու երիտասարդ, քահանայ ու վարդապետ, աշակերտ ու վարպետ։ Նոյն իսկ վանքի խոհարարն էլ իր նշանաւոր մասն ունէր այդ միահամուռ, ովելու ու ած աշխատանքի մէջ։

Զը նայած այս բոլորին, Խաչատուր վարդապետը համոզուեց որ առանց Եւրոպայի օդնութեան չէ կարելի շարունակել այս գործը։ Տառերը չափազանց արգեղ էին, խոշոր, տպելու արուեստը չէր յաջողուում։ Ուստի նա 1639-ին ուղարկեց իր օդնականներից մէկին, Յովհաննէս վարդապետին, իտալիա։ Այստեղ, այս երկրում էր ծաղ-

կած տպագրութեան գործը, այս-  
տեղ էին տպուել հայերէն գրքեր  
և այստեղ կարելի էր գտնել  
հմուտ վարպետներ։ Բայց այս-  
տեղ ամեն բան հեշտ ձեռք բե-  
րել չէր կարելի և Յովհաննէս  
վարդապետը ամբողջ երեք տա-  
րի ստիպուած էր մաքառել հզօր  
արգելքնէրի դէմ, մինչև որ կա-  
րողացաւ Հոռմում գտնել մի  
վարպետ, տանել նրան Լիվունո  
քաղաքը և այդտեղ պատրաս-  
տել տալ մի քանի տառերի նոյն  
խել նոտաների մայրեր։

Ամենամեծ արգելքը, որ ծան-  
րանում էր Հայաստանից եկած  
տպագրիչների դէմ, կաթոլիկ  
հոգևորականութիւնն էր, որ այդ  
ժամանակ բռնացած էր գրա-  
կանութեան և տպագրութեան  
վրայ։ Հոռմում դեռ 1622-ին  
կազմակերպուել էր մի ուժեղ  
կրօնական հիմնարկութիւն, որի  
անունն էր «Հաւատի Պրօպա-

գանդա»։ Նա աշխարհի բոլոր  
կողմերում աշխատում էր տա-  
րածել կաթոլիկ կրօնը զանազան  
միջոցներով։ Այդ միջոցներից  
մէկն էր նրա տպարանը, ուր  
շատ լեզուներով, դրանց թւում  
և հայերէն լեզուով, գրքեր էին  
տպւում։ Պրօպագանդայի համար  
ի հարկէ, ձեռնտու չէր որ հա-  
յերը իրանց եկեղեցական ու  
կրօնական գրքերը տպէին։ Նա  
ուզում էր որ ինքը լինի այդ-  
պիսի գրքեր տպողն ու տարա-  
ծողը և դա կը լինէր ամենա-  
յարմար միջոցը որ կաթոլիկ ե-  
կեղեցու դաւանքները ընդու-  
նուին ամեն տեղ։

Այս էր պատճառը որ շատ  
ազգեցիկ Պրօպագանդան ամեն  
տեսակ արգելքներ էր ստեղծում  
«հերետիկոս» հայերի առջև։ Թէ  
որքան մեծ էին այդ արգելքները  
և Եւրոպա դնացած հայերը ինչ  
մեծ տանջանքներով էին կարո-

ղանում գործ տեսնել, — այս ցոյց  
է տալիս նոյն Յովհաննէս վար-  
դապետը, ասելով իր յիշատա-  
կարանի մէջ թէ ինքը նման էր  
մի մարդու, որ պատերազմ է  
մտնում և արիւնով մի բան  
ստանում:

Այսպիսի դժուարութեամբ նա  
կարողանում է տառեր պատրաս-  
տել և ուղարկել Զուղայ: Տպա-  
րանը այստեղ մնում է երկար  
ժամանակ և հրատակութիւններ  
է անում:

1655 թուականին էջմիածնի  
կաթողիկոս է դառնում Յակոբ  
Զուղայեցին, մի շինարար, բարե-  
կարգիչ մարդ, Զուղայի գրական  
դպրոցի լաւագոյն ներկայացու-  
ցիչներից մէկը: Նրա առաջին հոգ-  
ուերից մէկն է դառնում հայերէն  
տպագրութիւնը: Եւ այդ նպա-  
տակով նա Եւրոպա է ուղարկում  
Մատթէոս Շարեցի դպրին:

Սա էլ իր քայլերը ուղղում է

Իտալիա։ Բայց այստեղ կաթու-  
 լիկ կղերի արգելքներն ուղա-  
 լածանքները չեն թոյլ տալիս  
 նրան գործ սկսել։ Եւ Ծարեցին  
 մի գեղեցիկ միտք է անում, այն  
 է՝ Իտալիայից դուքս որոնել հայ  
 տպագրութեան համար նպաս-  
 տաւոր մի միջավայր։ Հայ վա-  
 ճառականների հիմնած առևտրա-  
 կան գաղութներից մէկն էլ  
 գտնւում էր Հոլլանդիայի Ամս-  
 տերդամ քաղաքում։ Այդտեղ  
 գնաց Ծարեցին, տպարան հիմ-  
 նեց, որ, իրաւ, ազատ էր կա-  
 թոլիկ կղերի հսկողութիւնից ու  
 հալածանքներից։ Բայց մի քանի  
 զրքեր տպելուց յետոյ Ծարեցին  
 մեռաւ, իսկ նրա տպարանն ան-  
 ցաւ Աւետիս անունով մի ջու-  
 ղայեցի վաճառականի։ Սա, տես-  
 նելով որ իր գործը չէ զրքեր  
 հրատարակելը, հրաւիրում է էջ-  
 միածնից իր եղբօրը, Ռուկան  
 վարդապետին գնալ շարունակել

Ծարեցու սկսածը: Եւ Յակոբ  
կաթողիկոսը իսկոյն ուղարկում  
է նրան Եւրոպա:

Այսպիսով հանդէս է գալիս  
այն մարդը, որ հայերէն տպա-  
դրութեան ամենամեծ երախ-  
տաւորներից մէկն է:

Ուկան վարդապետը ծնուել էր  
Զուղայում, բայց կոչւում էր  
Երևանցի, անշուշտ այն պատ-  
ճառով, որ նրա ծնողները երեւ-  
ւանցի գաղթականներ էին: Նա  
էլ պատկանում էր Զուղայի  
դպրոցին, բայց բաւական չը հա-  
մարելով իր ստացած կրթու-  
թիւնը, աշակերտեց էջմիածնում  
զտնուող մի կաթոլիկ միսիօնի-  
քի, սովորեց լատիներէն: Ու-  
ղեորուելով Ամստերդամ, (1662  
թ.) նա իր ձեռքն առաւ տպա-  
դրութեան գործը և ցոյց տուեց  
մի արտասովոր հրատարակչական  
եռանդ: Նրան է պատկանում  
առաջին անգամ հայերէն Աս-

տուածաշունչ տպագրելու պահ  
տիւը:

Բացի դրանից, նա տպագրեց  
և ուրիշ աչքի ընկնող գրքեր,  
որոնց մէջ էր ժամանակակից  
գրող Առաքել Դաւրիթեցու  
ստուար Պատմագրութիւնը: Առ-  
կայն յայտնի չէ թէ ինչ պատ-  
ճառներով, Ուկան վարդապետը  
իր տպարանը փոխադրում է նախ  
իտալիա (Լիվոռնօ) և ապա  
ֆրանսիա (Մարսէլ): Այստեղ  
նրա գործունէութիւնը ենթարկ-  
ւում է կաթոլիկ հոգևորականու-  
թեան հսկողութեան և սկսւում  
են հալածանքներ, դաւեր ու ար-  
գելքներ, որոնց մանրամասնու-  
թիւնները այսօր էլ ցոյց են  
տալիս թէ հոգեկան և նիւթական  
ինչ տանջանքներ է կրել ծերու-  
նի վարդապետը:

Նա իր հետ ունէր հայ աշա-  
կերտներ և գործակիցներ, ո-  
րոնցից կարելի է յիշատակել Կա-

ըապետ վարդապետին, Ոսկան  
եղբօրորդի Լւսնեանին և սպա-  
հանցի քահանայ Համազասպեա-  
նին։ Վերջինս Ոսկանի չար հրեշ-  
տակը հանդիսացաւ, մատնու-  
թիւններ էր անում։ Ոսկանը այս  
արդելքների մէջ կարողացաւ մի  
քանի հրատարակութիւններ էլ  
անել, բայց մշտական հոգաերը,  
ասիացու հալածանքներըև մանա-  
ւանդ լընկերի ստոր արարքնե-  
րը, մատնութիւնները սպանեցին  
նրան։ Նրա մահից յետոյ գործը  
շարունակեցին նրա աշակերտներն  
ու գործակիցները, բայց հալա-  
ծանքները աւելի ևս սաստկացան,  
ֆրանսիական կառավարութիւնը  
չուզեց պաշտպանել գրատպու-  
թեան ազատութիւնը, որովհետև  
ամբողջապէս կղերի ազդեցութեան  
տակ էր գտնւում։

Հայ տպագրիչների եռանդը ըս-  
պառուեց ֆրանսիական դատա-  
րաններում քարշ գալուց, և վերջը

փակուեց Ոսկանի մեծագործ տը-  
պարանը (1685 թ.):

Բայց գաղափարը չը մեռաւ: Ար-  
դէն կազմուել էր հայ տպագրիչ-  
ների մի ընտանիք: Նրա անդամ-  
ներից մէկը պատճառ դարձաւ  
որ հայ տպագրութիւնը մի նոր,  
գեղեցիկ շրջանի մէջ մտնէ:

Դա Մատթէոս Վանանդեցին  
էր, Ոսկանի տպարանի գրաշարը:  
Մարսէլի տպարանի փակուելուց  
յիսոյ նա մեծ ջանքեր արաւ շա-  
րունակելու հայերէն հրատարա-  
կութիւնները, ընկերութիւն կազ-  
մեց, ինքը, ինչպէս բազմամեայ  
փորձով հմտութիւն ձեռք բերած  
արհեստաւոր, գործի գլուխ ան-  
ցաւ: Այդ բանուոր մարդը լցուած  
էր գաղափարական վառ վերա-  
բերմունքով դէպի հայերէն գիրքը:  
14 տարի ծառայել էր Ոսկանի  
տպարանում առանց վարձ ստա-  
նալու: Եւ այժմ էլ պատրաստ էր  
նոյն անձնագոհութեամբ շարու-

նակելու գործը, բայց նրա կազմած ընկերութիւնը, որի անդամներն էին մի քահանայ և մի ջուղայեցի վտճառական, քայքայուեցի:

Անգործ մնացած Մատթէոսը վերադարձաւ հայրենիք, Գողթան դաւառը, բայց ոչ թէ իր սիրած գործը խսպառ մոռանալու համար։ Գողթան դաւառի առաջնորդն էր նրա մօտիկ ազգական Թովմա եպիսկոպոս Նուրիջանեանը։ Մատթէոսը նրան համոզեց թողնել առաջնորդութիւնը, զնալ Երոպա՝ մի նոր Ռոկան վարդապետ դաշնալու համար։ Այդ նրան լիովին աջողուեց։ Թովմա եպիսկոպոսը ուղարկեց նրան Ամստերդամ՝ պատրաստութիւններ տեսնելու համար։ Ինքն էլ շուտով ճանապարհուեց նոյն քաղաքը, տանելով իր հետ իր երկու եղբօրորդիներին, Դուկասին և Միքայէլին, որոնք ուսումն էին ստացել Հռո-

մում և ծանօթ էին եւրոպական  
դիտութեան և լեզուներին:

Սկսուեց Ամստերդամի տպա-  
գրական երկրորդ շրջանը, որ ա-  
ւելի բեղմնաւոր էր և գրական  
տեսակէտից աւելի գնահատելի,  
քան Ոսկանի շրջանը:

Հայ տպագրիչներին այս ան-  
գամ չեն անհանգստացնում նիւ-  
թական և բարոյական զրկանք-  
ները և նրանք Ոսկանի կրած  
տանջանքներին անծանօթ են մը-  
նում: Նուրիջանեան ընտանիքը,  
Թովմա Եպիսկոպոսի ղեկավարու-  
թեամբ և Մատթէոսի եռանդուն  
գործակցութեամբ, հաստատում է  
մի շատ բարեկարգ, տառերով հա-  
րուստ տպարան, որ և բազմա-  
թիւ հրատարակութիւններ է ա-  
նում, սկսած 1695 թուականից:  
Դրանց մէջ նշանաւոր է մանա-  
ւանդ «Համատարած Աշխարհա-  
ցոյց» անունով մեծ քարտէզը, ա-  
ռաջինը հայերէն լեզուով: Բայց

Վանանդեցի եպիսկոպոսին էլ վիճակուած էր Ծորեցու, Ուկան վարդապետի բաղդը: Հասած լինելով խոր ծերութեան, նա մտածում է վերջ դնել իր հրատարակութիւններին և վերադառնալ հայրենիք: Բայց հիւանդանում է և վախճանւում (1710 թ.): Տպարանը շարունակում է այնուհետեւ էլ գործել Ղուկասի ղեկավարութեամբ և հայ վաճառականների դրամական օժանդակութեամբ, մինչև որ փակւում է 1717 թուականին:

Այսքան ահա բեղմնաւոր էր տպագրական գործունէութիւնը XVII դարի երկրորդ կեսում: Միաժամանակ հայերէն գրքեր հրատարակւում էին և Վենետիկում, Հռոմում: Եւրոպայից, բայց մասնաւորապէս Սմոտերդամից նաւերը հազարներով, տասնեակ հազարներով գրքեր էին տեղափոխում Արևելք, ուր նրանք տա-

լածում էին հայութեան մէջ։  
 Այսպէս էր հայ ժողովրդի ճակա-  
 տագիրը։  
 Եւ այդ ճակատագրի մէջ միսի-  
 թարականը միայն գրքերի այդ  
 հարստութիւնը չէր։ Վերածնու-  
 թեան հովեր են սկսուել նոյն դրժ-  
 բախտ (ժողովրդի մէջ։ Լուսաւո-  
 րութեան և բարեկարգութեան  
 աւելացումը առաջ է քաշում  
 և քաղաքական գործունէու-  
 թիւն։ Բոլորովին պատահական  
 զուգադիպութիւն չէ, որ հայերէն  
 տպագրութեան զարգացման հետ  
 միասին հայ իրականութեան մէջ  
 երեան է գալիս Խարայէլ Օրին,  
 որ բարձրացնում է Պարսկական  
 Հայաստանի ազատագրութեան  
 դրօշակը։

---

¶.

XVIII γ α ρ

Հայկական տպագրութեան զար-  
գացումը այս դարում աւելի մեծ  
զարկ է ստանում, ընդունելով մըշ-  
տական, հաստատուն երևոյթի  
կերպարանք։ Այլ ևս չեն գերա-  
կշռում պատահական հատ ու կը-  
տոր հրատարակութիւնները այս  
կամ այն քաղաքում։ Կազմւում  
են տպագրական կենտրոններ, ո-  
րոնք միաժամանակ և գրական  
կենտրոններ են։ Այնպէս որ մենք  
կարող ենք թողնել մասնաւոր ե-  
րևոյթները և տեսնել գլխաւոր  
կենտրոնները։

## Ի Տ Ա Լ Ի Ա

Հրատարակութիւնների քանակի և որակի կողմից առաջնութիւնը պատկանում է դարձեալ իտալիային և յատկապէս Վենետիկին:

Այստեղ գործում են իտալական տպարաններ, որոնք ունեին հայերէն տառեր: Այս տպարաններին էին դիմում հայ հրատարակիչները, որոնք և յատուկ այդ նպատակով ճանապարհորդում էին Վենետիկ: Թարգմանական և ինքնուրոյն հրատարակութիւնները, զանազան տեսակ բովանդակութիւններով, բազմաթիւ են. տպւում են խոշոր հատորներ: Զեռնարկողները մասնաւոր անհատներ են, որոնք գլուխ են բե-

ըում իրանց հրատարակութիւնները վաճառական հայերի տուածնպատներով։

1713 թուականին Վենետիկը շրջապատող փոքրիկ կղզիներից մէկի վրայ, որ հին ժամանակներից կրում էր Ս. Ղազար անունը, հաստատուեց հայ կաթոլիկ վարդապետների մի միաբանութիւն, որի հիմնադիրն էր Մխիթար Սեբաստացին և որ հէնց այդ անունով էլ կոչուեց Մխիթարեան Միաբանութիւն։ Նա կազմուել էր կ. Պօլսում 1701 թուին գլխաւորապէս քարոզչական նպատակով, ինչպէս էին միւս կաթոլիկ վանական միաբանութիւնները։ Հալածանքների և այլ աննպաստ հանգամանքների պատճառով տեղափոխուելով Վենետիկ, նորակազմ միաբանութիւնը այստեղ քարոզչական միջոցներին աւելացրեց և գրականութիւնը, որ գնալով աւելի և

աւելի զարգացաւ, բռնեց առաջ-  
նակարգ տեղ, յետ մղելով, եր-  
կրորդական դարձնելով քարող-  
չութեան միւս միջոցները, այն է՝  
միսիօներութիւնը և դպրոցական  
գործունէութիւնը:

Միաբանութիւնը հետզհետէ  
դարձաւ գրական մի հիմնարկու-  
թիւն, հրատարակչական լայն  
նախաձեռնութեամբ և մի կաթո-  
լիկ վանքին ներելի գիտնակա-  
նութեան չափերով:

Երկար ժամանակ նա իր գըր-  
քերը տպագրում էր Վենետիկի  
իտալական տպարաններում: Ինքը  
Մխիթար արքան ձեռնարկեց մի  
քանի խոշոր հրատարակութիւն-  
ների: Այսպէս էր նրա մեծադիր  
պատկերագրութ «Աստուածաշուն-  
չը», բայց մանաւանդ նրա կազ-  
մած «Հայկագեան» մեծ բառա-  
րանը, որի մէջ առաջին անգամ  
հաւաքւում էին հայ լեզուի հա-  
րստութիւնները:

Մխիթարի մահից յետոյ գրական գործունէութիւնը ս. Ղազարի կղզում շարունակուեց աւելի մեծ եռանդով։ Մխիթարեանները գտնում էին գրական մեկենասներ, որոնց առատ օժանդակութիւններով տպագրում էին իրանց ինքնուրոյն և թարգմանական աշխատութիւններ։ Հայոց լեզուի ուսումնասիրութիւնը հասաւ բարձր աստիճանի և շնորհիւ գլխաւորապէս այդ հանգամանքի՝ Մխիթարեանները ձեռք բերին ամբողջ հայութեան աչքում առաջնակարգ հեղինակութիւն։

Մինչև XVIII դարի վերջերը լոյս տեսած Մխիթարեան հրատարակութիւնների մէջ ամենանշանաւորն է Զամչեանի «Հայոց Պատմութիւնը», բաղկացած երեք խոշոր հատորներից, որոնք մի ամբողջ դարագլուխ կազմեցին մեր գրականութեան և բարոյական վերածնութեան մէջ։ Մխի-

թարեան գրականութեան ազդեցութիւնը ահագին էր ամբողջ հայութեան վրայ։ Կարելի է ասել որ XVIII դարի երկրորդ կեսից մեր ամբողջ գրականութիւնը մտնում է մի երկարատև շրջանի մէջ, որ պէտք է անուանել «Մխիթարեան Դար»։

Ահա ինչ էր անում հայ տպարանը՝ հայ հայրենիքից այնքան հեռու մի տեղ, ինչպիսին է Վենետիկը։ Նա արհամարհում էր տարածութիւնները և տիրապետում էր մտքերի վրայ։ Եւ Մխիթարեանները, լաւ ըմբռնելով իրանց ահագին հեղինակութեան և տիրապետութեան գաղտնիքը, գընեցին Ամստերդամում Թովմա վանանդեցու տառերը ու իրանց կղզում բաց արին իրանց սեփական տպարանը։

Վենետիկի այս եռանդուն գործունէութեան դիմաց շատ աննըշան էր Հռոմի Պրօպագանդայի

տպարանի գործունէութիւնը, որ  
արտայայտում էր միակողմանի  
նեղ կրօնական հրատարակու-  
թիւնների մէջ:

## 2

## ԱԻՍՏԻԱ

1774-ին ս. Դազար կղզում ներ-  
քին խռովութիւններ սկսուեցին  
և Մխիթարեան վարդապետներից  
մի քանիսը ոստիկանութեան ձեռ-  
քով հեռացուեցին Վենետիկից:  
Նրանք կանգ առան Տրիեստ քա-  
ղաքում, ուր կար հայ վաճառա-  
կանների մի փոքրիկ գաղութ:  
Այդտեղ վանք շինեցին, աւստրիա-  
կան Մարիա-Թերեզա կայսրու-  
հուց ստացան մի շարք արտօնու-  
թիւններ, որոնցից մէկն էր տպա-  
րան պահելը:

Անջատուած Մխիթարեանները  
Տրիեստի իրանց տպարանում

սկսում են գրական մրցակցութիւն ս. Ղաղարի հետ։ Բայց նըրանք աղքատ էին և սակաւաթիւ, ուստի կարողացան վորքը քանակութեամբ հրատարակութիւններ անել։

## 3

## ԹԻՒՐՔԻԱ

Բաղէշի գրական դպրոցի աշակերտներից էր Յովհաննէս Կոլոս սպատրիարքը, որի ժամանակ (1715—1741) կ. Պօլսում վերանորոգուեց տպագրութիւնը և բաւականաչափ առաջադիմութիւն արաւ, որ այնուհետև էլ կանգ չառաւ։ Գործում էին մի քանի տպարաններ, որոնք մինչև XVIII դարի վերջը տուին բազմաթիւ հրատարակութիւններ, շատերը խոշոր, բազմածախս։ Կ. Պօլսից դուրս՝ Զմիւռնիայի

հայ գաղութն է, որ տպագրութեան հիմք է դնում, բայց դեռ առանձին աչքի ընկնող դեր չէ կատարում հրատարակչական գործի մէջ:

## 4

## ՀՆԴԿԱՍՏԱՆ

Նոր-Զուղան միշտ արտօնուած ապահով դրութեան մէջ չը մնաց: Շահ-Աբրասի ժառանգները կեղեքում էին վաճառականներին, իսկ XVIII դարի առաջին քառորդում այդ հոչակաւոր առևտրական գաղութը ահազին աւելանքների մատնուեց աւզանների արշաւանքի ժամանակ: Աղքատացաւ Զուղան, նրա խիզախ վաճառականներից շատերը անցան Հնդկաստան, ուր գաղութներ հաստատեցին զանազան կողմերում և սկսեցին հարստանալ:

Այդտեղ էլ, այդքան հեռաւոր  
մի տեղ, ջուղայեցի վաճառական-  
ները շարունակեցին առաջնա-  
կարգ դեր խաղալ հայ կեանքի  
մէջ։ Նրանք օգնում էին իրանց  
հեռաւոր հայրենիքին և միաժա-  
մանակ իրանց մէջ էլ զարգա-  
ցնում էին կրթական-կուլտու-  
րական հիմնարկութիւնները։

1770 թուականին այդ վաճա-  
ռականներից մէկը, Յակոբ Շահա-  
միրեան, Մադրաս քաղաքում բաց  
է անում տպարան և հրատարա-  
կում է մի քանի ինքնուրոյն հե-  
ղինակութիւններ, որոնք մեր գրա-  
կանութեան պատմութեան մէջ  
մի բոլորովին նոր երևոյթ են  
կազմում։

Շահամիրեանի տպարանի փա-  
կուելուց յետոյ Մադրասի հայ  
քահանայ Յարութիւն Շմաւո-  
նեանը 1789-ին հիմնում է նոր  
տպարան, որ պահպանում է իր  
գոյութիւնը մինչև XIX դարի

քսանական թուականները։ Շմաւոնեանի կատարած բոլոր դործերից ամենանշանաւորն այն է, որ նա առաջին հայերէն պարբերական հրատարակութեան, այն է՝ «Ազգարար» ամսագրի հիմնադիրն ու խմբագիրը՝ հանդիսացաւ (1794):

## 5

## ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Իր սկզբնաւորութիւնից ի վեր հայկական տպագրութիւնը ոչ մի փորձ չէր արել հայ հայրենիքում հաստատուելու։ Պատճառները բացատրեցինք վերևում։

Բայց ահա XVIII դարի երկրորդ կեսում տեղի է ունենում այդպիսի մի փորձ։ 1763 թուին էջմիածնում կաթողիկոս դարձաւ Սիմէօն Երևանցին, մի շատ գոր-

ծունեայ հոգևորական, որ բազմատեսակ բարեկարգութիւններ մտցրեց էջմիածնի կառավարութեան մէջ:

Սիմէօնը առանձին ուշադրութիւն դարձրեց և տպագրական գործի վրայ: Հնդկահայ վաճառականների տուած գումարներով նա էջմիածնում հիմնեց ոչ միայն տպարան, այլ որ աւելի զարմանալին է, նաև թղթի գործարան, որի համար նա յատուկ վարպետներ բերել առւեց Եւրոպայից:

Անկասկած, Սիմէօնը, ձեռնարկելով այդ երկու նշանաւոր հիմնարկութիւններին, նպատակ ունէր նաև դիմադրել կաթոլիկ Մխիթարեանների գրական խիստ աղղեցութեան: Սակայն էջմիածինը թէ քաղաքական հանգամանքների և թէ իր կրթական պատրաստութեան շնորհիւ այնպիսի մի միջավայր չէր, որ կա-

բողանար այդպիսի մի մրցութիւն  
առաջ տանել: Թղթի գործարանը  
երկար գոյութիւն չունեցաւ: Իսկ  
տպարանը թէ Սիմէօնի և թէ  
նրա յաջորդ Դուկաս կաթողիկո-  
սի օրով կարողացաւ մի քանի  
հրատարակութիւններ անել, ո-  
րոնց մէջ փոքր ի շատէ աչքի-  
ընկնողը Սիմէօնի շարադրութիւն-  
ներն են:

## 6

## ՈՒԽՍՍՍԱՆ

Նոյն Սիմէօն կաթողիկոսի ժա-  
մանակներից առանձին կարեոր  
նշանակութիւն է ստանում Ռու-  
սաստանի սահմաններում ապրող  
հայութիւնը, որի առաջնորդ է  
նշանակում Սիմէօնը իր աշակերտ  
Յովսէփ արքեպիսկոպոս Արդու-  
թեանին: Ամենահին գաղթականութիւնը

Թուստատանում Աստրախանի  
հայութիւնն էր։ Նրան ԽVIII դա-  
րում աւելանում են մի շարք նո-  
րերը՝ Մոզգոկ, Ղզլար, Նոր-Նա-  
խիջևան և այլն. հայ գաղութներ  
են հաստատւում և Մոսկովայում  
ու Պետերբուրգում։

1780-ական թուականների սկզբ-  
րում, ջուղայեցի մի հայ վաճա-  
ռական, Գրիգոր Խալդարեան ա-  
նունով, գնում է Ամստերդամում  
հայերէն տառեր և տանելով Պե-  
տերբուրգ, բաց է անում այստեղ  
տպարան։ Յովսէփ արքեպիսկո-  
պոս Արդութեանը եռանդուն ա-  
ջակցութիւն է ցոյց տալիս նրան  
և տպարանը հետզհետէ բաց է  
թողնում մի շարք հրատարակու-  
թիւններ։ 1789-ին, երբ Խալդա-  
րեանը այլևս անկարող է լինում  
շարունակել իր գործը, Արդու-  
թեանը գնում է նրա տպարանը  
և տեղափոխում է Ս. Խաչ վան-  
քը, որ նա շինել էր Նոր-Նախի-

ջևանի մօտ, բայց անելով այդ-  
տեղ և դպրոց:

Արդութեանին էլ ղեկավարում  
էր նոյն ձգտումը—մրցել Միհ-  
թարեանների դէմ, դարձնելով Ս.  
Խաչ վանքը մի նոր Ս. Ղազարի  
կզզի: Բայց այսաեղ էլ, իհարկէ  
չէ յաջողում և չէր էլ յաջողուի  
մի այդպիսի մրցութիւն: Ս. Խաչ  
վանքի տպարանը գործում է մին-  
չև 1794 թուականը. հրատարա-  
կում է մի շարք գրքեր:

Այնուհետև տպարանը փոխա-  
դրուած է Աստրախան: Առաջին  
տպարանն է նա Աստրախանում,  
տպագրում է մի քանի հայերէն  
և ռուսերէն գրքեր և իր գոյու-  
թիւնը պահպանում է մինչև XIX  
դարի քսանական թուականների  
վերջը:

Երբան կողման քայլ տօնե վանակ  
հայութեան ճառ ըստիր և բնա  
հայութափեր ու միմանթարդը ու  
մաս ի ըմբու պահապահ մշու ով Ա

## ¶.

XIX ԵՒ XX ԴԱՐԵՐ

**Ո**րքան և մեծ էին նախորդ ե-  
րեք դարերում գործադրուած ջան-  
քերը, որքան և եռանդու ու  
անձնուրաց էին հայ տպագրիչ-  
ները, բայց այդ երկար ժամանա-  
կամիջոցում տպագրուած գրքերի  
թիւը, այնուամենայնիւ, մեծ  
չէր։ Ամենաշատը գուցէ մի 600  
կտոր։ Երեք դարերի գործերով  
չէր կարելի, ուրեմն, և մի համեստ  
գրադարան կազմել։

**Ա**յդքան գրքերի մեծագոյն մա-  
սը վերաբերում է տասնեւութե-  
րորդ դարին, մանաւանդ նրա  
երկրորդ կէսին։ Հայ տպագրու-  
թեան իսկական գարգացումը,  
հայ գրականութեան իսկական մեծ  
ծաւալումը XIX դարի գործն է։

Զարդանում է կեանքը, զարդանում են հաղորդակցութեան միջոցները, շարժումներ են առաջանում հայ ժողովրդի մէջ, և տըպագրական մամուլը գործում է տենդային եռանդով։ Մտեղծում է իսկական գրականութիւնը։ Տըպագրական կենտրոնները աւելի ևս բազմանում են, աւելի երկարատև գործունէութիւն են հաստատում։ Մինչև մեր օրերը կատարուած վիթխարի գործի մասին գէթ հարեանցի հասկացողութիւն կազմելու համար՝ մեզ մնում է դարձեալ յիշատակել գըլխաւոր կենտրոնները միայն։

## 1

## Ի ՏԱԼԻ Ա.

Դարի սկզբից առաջաւոր, անմըցակից տեղը հայ տպագրութեան մէջ դարձեալ պատկանում

է այն քաղաքին, ուր նա սկիզբ  
էր առել, այսինքն Վենետիկին։  
Մխիթարեան Միաբանութիւնն է  
այդ գործի միակ տէրը և նրա  
տպարանն է, որ դեռ տիրապե-  
տում է ամբողջ հայութեան վրայ։  
Հրատարակւում են խոշոր, բազ-  
մահատոր գրքեր, արդիւնք հսկա-  
յական աշխատասիրութեան։  
Թարգմանականից աւելի ինքնու-  
րոյնն է տիրապետում։

Մխիթարեանները, լաւ զգալով  
որ մենաշնորհը իրանց է պատ-  
կանում, աշխատում էին, որքան  
այս թոյլատրուած կարող է լինել  
մի կաթոլիկ վանքի, բազմակող-  
մանի գարձնել իրանց հրատա-  
րակութիւնները, որպէս զի բա-  
ւարարութիւն տուած լինեն կեան-  
քի բոլոր պահանջներին։ Վենե-  
տիկում է որ հրատարակուել է  
սկսում երկրորդ հայերէն պար-  
բերականը—«Դիտակ Բիւզան-  
դեան» անունով։ Հրատարակում

Է երկհատոր «Հայկազեան նոր  
Բառգիրքը», հայ տպագրութեան  
փառքն ու պարծանքը։ Գրակա-  
նութեան այլ և այլ ճիւղերի մէջ  
—կրօնական, գիտական, դաս-  
տիարակչական, գեղարուեստա-  
կան—հանդէս են գալիս հայ  
ազգի պատկառանքը վաստակած  
անուններ — Ինձիճեան, Ագոնց,  
Գաբրիէլեան, Աւգելեան, Թով-  
մաճան, Բագրատունի, Ճիւրմիւզ,  
Ալիշան, Քաջունի և այլն, և այլն։  
1843-ից սկսւում է «Բազմավէպ»  
ամսաթերթի հրատարակութիւնը,  
որ շարունակւում է մինչև այսօր։  
Անհնարին է նոյն խոկ մի մօտա-  
ւոր աղօտ հաշիւ տալ գրական  
այն բոլոր երևոյթների մասին,  
որ հանդէս է բերել ո. Ղազարի  
մամուլը մինչև այսօր։

Այսքան մեծագործ մի տպա-  
րան արժանապէս գնահատուել է,  
վարձատրուելով զանազան եւրո-  
պական ցուցահանդէսներում։

Մինչև 60-ական թւականները Մխիթարեան տպարանը գործ էր ածում միատեսակ, հին ձևի տառեր։ Այնուհետև նա իւրացրեց ուրիշ տեղերում (գլխաւորապէս Պարիզում) պատրաստուած տառերի նորաձեռութիւնը։ Իսկ վերջին տարիներս նա իր սեփական, շատ հաճելի նորաձեռութիւնն է մտցրել տառերի մէջ։

«Մխիթարեան Դարը», այսինքն ս. Ղազարի համատարած գրական աղդեցութիւնը սկսեց թուլանալ 1850—1860-ական թուականներից, երբ մեզանում դարգացաւ աշխարհիկ դաստիարակութիւնը, բերելով իր հետ և համապատասխան գրականութեան պահանջ։ Ներկայումս ս. Ղազարի վանքը իր անցեալովն է ապրում և արդէն չափազանց համեստ տեղ է լունում հայ գրականութեան մէջ։

ազամ մոքամար իոյժայունածուակ  
անոյնանձնուածուար մաքար

- առնայի մզմիջալու բանականից Ա  
շահագործություն է առնայի մզմիջալու բանականից Ա

2

- ըստ մաքսանապարագության մզմիջալու բանականից Ա  
շահագործություն է առնայի մզմիջալու բանականից Ա

### ԱՀՄՏՐԻԱ

- առնայի մզմիջալու բանականից Ա  
շահագործություն է առնայի մզմիջալու բանականից Ա

*Տրիեստի Մխիթարեան միա-  
բանութիւնը, Նապօլէօնի արշա-  
ւանքների հետևանքով, ստի-  
պուած եղաւ 1811-ին տեղափոխ-  
ւել Վիեննա մայրաքաղաքը, տա-  
նիլով իր հետ իր տպարանը։*

*Այս տպարանն էլ շատ նշանա-  
ւոր դեր է կատարել մեր կեան-  
քի մէջ իր հրատարակութիւննե-  
րով, որոնք թէև Վենետիկի հրա-  
տարակութիւնների չափ բազմա-  
թիւ ու բազմակողմանի չեն, ինչ-  
պէս և նրանց պէս շատ տարա-  
ծուած չեն եղել, բայց ուրիշ ուղ-  
ղութիւն, ուրիշ դպրոց են ներ-  
կայացնում, մնալով հանդերձ,  
ընդհանուր առմամբ, դարձեալ*

Մխիթարեան, այսինքն վանական:

Վիէննայի տպարանական գործերից կըյիշատակենք «Եւրոպա» լրագիրը և «Հանդէս Ամսօրեայ» ամսագիրը, որ այժմ էլ հրատարակւում է: Նշանաւոր է նաև վիէննացիների հրատարակած մեծ երկրագունդը: Գրական աշխատութիւններով և տպարանական գործունէութեամբ անուն են հանել Գաթրճեան, Այտլնեան, նորերից՝ Տաշեան, որի «Ճուցակ Զեռագրաց» խոշոր աշխատութիւնը Վիէննայի տպարանի գլուխ գործոցը կարող է համարուել:

Վիէննական տպարանի մի խոշոր գործն էլ այն է, որ նա տառեր է հայթայթել բազմաթիւ հայ տպարանների թէ Թիւրքիայում, թէ Ռուսաստանում և թէ Եւրոպայում, նոյն իսկ և Ամերիկայում: Այսօր էլ այդ տառերից

շատերը դեռ գործածական են։  
Բայց պէտք է ասել որ վիէննա-  
ցիները միևնույն ժամանակ շատ  
պահպանողական են տառերի ձեփի  
կողմից։ Այսօր էլ նրանք գործ  
են ածում և այնպիսի տառեր,  
որոնց մայրերը դեռ Տրիեստի  
ժամանակներին են պատկանում։

## 3

## ՖՐԱՆՍԻԱ

Վենետիկից և Վիէննայից յիշոյ  
հայ տպագրութեան պատմու-  
թեան մէջ նշանաւոր տեղ բըռ-  
նում է ֆրանսիայի և առհասա-  
րակ ամբողջ աշխարհի մայրա-  
քաղաք Պարիզը եթէ ոչ իր տը-  
տագրած գլուքերի քանակով և ո-  
րակով, գոնէ այն խոշոր, անգնա-  
հատելի բարեկարգութիւններով,  
որ նա մտցրեց հայ տառերի ձե-  
փերի մէջ։

Դեռադարի սկզբից մենք տեսնում ենք Պարիզի մէջ մի երկար շարք հայերէն հրատարակութիւնների, որոնք տպագրում են գըլխաւորապէս պետական բազմալեզուեան տպարանում։ Աշխատողներն են թէ հայեր և թէ ֆրանսիացի հայագէտներ։

Իսկ 1850-ական թուականներին սկսւում է մի ամբողջ եռանդուն շարժում։ Այդտեղ, Պարիզում է Մուրադեան վարժարանը, այդտեղ, ֆրանսիական բարձրագոյն դպրոցներում են ուսում ստանում թիւրքահայ երիտասարդները։ Մուրադեան վարժարանի ուսուցիչներից երեքը, Մըխիթարեան վարդապետներ՝ Սարգիս Թէոդորեան, Գաբրիէլ Այվազեան և Ամբրոսիոս Գալֆայեան միաժամանակ հիմք են դնում գրական-հրատարակչական գործունէութեան։ Նրանց գործակից է հանդիսանում մի թիւրքահայ,

Ճանիկ Արամեանը, տաղանդաւոր,  
Խռանդու մի արհեստաւոր (սկզբ-  
բում դերձակ), որ նուիրւում է  
տպարանական գործին և ցոյց է  
տալիս նրա մէջ նուրբ ճաշակ,  
գեղեցկագիտութեան մեծ պաշար:

Արամեանն արդէն փորագրել  
էր տուել հայերէն նոր տեսակի  
տառեր զանազան մեծութիւն-  
ների: Դրանք ձևով շատ չէին  
տարբերում տպագրական այն  
տառերից, որոնք գործածութեան  
մէջ էին մեզանում սկզբից և եթ...  
Ֆրանսիական նուրբ և քնքոյշ  
ճաշակը տուել էր այդ տառերին  
գեղեցիկ, համաչափ տեսք, բայց  
որ գլխաւորն է՝ փոխել գեղեցկա-  
ցըել էր մեր հին անճոռնի գըլ-  
խատառերը: Ստեղծագործող ե-  
րեակայութիւնը թիւրքահայ ար-  
հեստաւորին և նրա ցուցմունք-  
ներով գործող ֆրանսիացի փո-  
րագրիչներին թիւլադրել էր տա-  
ռերի մի բազմազանութիւն, որ

ամբողջ մի ճոխութիւն էր մըտցնում հայ տպագրութեան մէջ:

Այդ բարեկարգութեամբ մի նոր դարագլուխ է ստեղծւում մեր տպագրութեան մէջ: Մինչև այդ գոյութիւն ունէր տառերի աւանդական մի ձև, որ թէև արտայայտում էր զանազանութիւններ, բայց իր հիմնական բնաւորութեամբ մի էր և անփոփոխ: Ճանիկ Արամեանի գործունէութիւնը վերջ է դնում հնութեան, աւանդականին և սկսում է նորը, ճոխագոյնը: Այդ կողմից նրա պէս մի ուրիշ մեծ գործիչ չէ ճանաչում մեր տպագրութիւնը:

Վերոյիշեալ երեք վարդապետները նոյնպէս նորատեսակ տառեր են գծագրում և փորագրել տալիս, աշխատելով բոլորովին նոր սկզբունք իրականացնել, այն է՝ տառերը ուղղաձիգ են, ոչ թեքուած, աւելի կոլոր ձև ստացած,

նմանուելովիրանց ծգագրութիւններով լատինական տառերին։ Պարիզեան այս գեղեցիկ վերանորոգութիւնը ընդ միշտ վոնդում է հայ տպարանից գրաշարներին այնքան դժուարութիւններ պատճառող պոչաւոր տառերը, ծոցագրերը, կոտրուող տառերը։ Այլ ևս հայ տպագրութիւնը եւրոպական ազգերի տպագրութեան աստիճանից ցած չէ։ Նա ունի տառերի մի ճոխ բազմազանութիւն, սկսած ամենափոքրից (տպարանական լեզուով՝ նօնպարէյլ) մինչև շատ խոշորները և ամենքը գեղեցիկ, նուրբ։

Այսօր էլ մեր տպարաններում ձանիկեանի և երեք վարդապետների տառերն են տիրապետում։ Այդ ժամանակներից յետոյ փորձեր շատ են եղել նոր նոր ձևեր հնարելու, բայց ոչ ոք չէ կարողացել գերազանցել Պարիզեան ձևերը։

Արամեանի տպարանը Պարի-  
զում գործել է 1854 – 1861 թուա-  
կանները։ Եօթը-ութ տարիների  
ընթացքում այդտեղ կենտրոնա-  
ցած էր մի եռանդուն գործունէ-  
ութիւն, որ տալիս էր պարբե-  
րական հրատարակութիւններ,  
մեծ ու փոքրիկ գրքեր, որոնք  
այսօր էլ հայ տպագրութեան  
գերազանց գեղեցկութիւննեն ներ-  
կայացնում։ Գուցէ միայն Վենե-  
տիկը կարողացած լինի մրցա-  
կից հանդիսանալ այդ տպագրու-  
թիւնների վերաբերմամբ, այն էլ  
այն պատճառով, որ նա ձեռք  
բերեց Պարիզեան տառերից մի  
քանի տեսակներ և սկսեց նրան-  
ցով տպագրութիւններ անել։

1861 թուին Ճանիկ Արամեանը  
իր տպարանը տեղափոխեց Մար-  
սէլ, բայց այդտեղ երկար չըմնաց  
և տարաւ իր ամբողջ գործը կ.  
Պօլիս, ուր մինչև իր մահը (1879)  
և այնուհետեւ էլ մինչև վերջին

ժամանակներս նրա տպարանը  
առաջինն էր, և նրա տառերը  
դուրս մղեցին բոլոր ուրիշ տե-  
սակ տառերը։ Այսօր ամբողջ Կ.  
Պոլիսը Արամեան տառեր է (ան-  
նշան բացառութեամբ) գործ ա-  
ծում։

Արամեանից յետոյ Պարիզում  
տպարան բաց արաւ կարապետ  
վարդապետ Շահնազարեանը։ Նրա  
հեռանալուց յետոյ դադարում է  
հայերէն տպագրութիւնը Ֆրան-  
սիայի մայրաքաղաքի մէջ մինչև  
1890-ական թուականների կէսը։  
Այս ժամանակները հայկական  
ահռելի կոտորածներից փախած  
հայ մտաւորականներից շատերը  
հաստատուեցին Պարիզում և վե-  
րանորոգեցին հայ տպագրութիւ-  
նը, բայց, իհարկէ, ոչ նախկին  
(Արամեանի ժամանակի) փայլով։  
Հրատարակեցին ամսագիրներ (Կ.  
Բասմաջեանի «Բանասէր», Ա. Զօ-  
պանեանի «Անահիտ», «Համալ-

սարան» և այլն, գրքեր։ Ներկայումս հայերէն հրատարակութիւններով Պարիզում գրադւում է միայն Արշակ Զօպաննեանը։

Ֆրանսիայի Մարսէլ քաղաքն էլ, որ իրեն խոշոր առևտրական կենտրոն, նշանաւոր դեր է կատարել հայվաճառականների համար, իր տեղն ունի նաև XIX դարի մեր տպագրութեան մէջ։ 1885 թուականից այդտեղ հաստատուեց թիւրքահայ յայտնի գործիչ և գրող Մկրտիչ Փորթուգալեանը և հիմնեց իր «Արմէնիա» թերթը, որ այսօր էլ գոյութիւն ունի և որ մեր նորագոյն պատմութեան մէջ գրաւում է արժանաւոր տեղ իր կատարած դերով։

## 4

## ԹԻՒՐՔԻԱ.

XVIII դարում կ. Պօլսի մէջ բացուած տպարաններից մի երկուսը գործում էին և XIX դարի առաջին տասնամեակներում։ Սակայն գրականութիւնը համարեա ոչնչով չէ տարբերում նախընթաց դարի գրականութիւնից՝ մինչև քառասնական թուականները։

Այդ ժամանակից կ. Պօլիսը սկսում է կերպարանափոխուելու թիւրքական հին բոնակալութիւնը թուլանում է, ընդունում է եւրոպական մի քանի սկզբունքների կիրառութիւնը։ Այդ ժամանակներն էլ (1833—1855) սկիզբ է առնում և առաջանում է կ. Պօլսի հայոց մամուլը («Լրոյ Գիր», «Աղատարար Բիւզանդեան», «Աղատարեր», «Սուրհանդակ» կ.

Պօլսոյ», «Հայաստան», «Մասիս»,  
«Նոյեան Աղաւնի» և այլն): Վերա-  
նորոգութեան պահանջը զգալի է  
թէ պետական կազմակերպութեան  
և թէ հասարակական առաջաւոր  
խաւերի մէջ:

Հայկական կեանքը եռուն շար-  
ժումների ասպարէզ է դառնում:  
Եւրոպական կրթութեան հետ նոր  
սերունդ է առաջանում: Գրակա-  
նութիւնը, նոր, աշխարհիկ սկըզ-  
բունքների վրայ է հաստատում:  
Զարգանում է լրագրութիւնը:  
Հրապարակական խօսքի անհրա-  
ժեշտութիւնը զգացուած է այն-  
պիսի մեծ չափերով, ինչպէս ոչ  
մի ուրիշ հայաբնակ վայրում:  
Դրիմի պատերազմից յետոյ քա-  
ղաքական շարժումները թիւրքիա-  
յի մէջ աւելի ընդարձակում են  
և նոյն իսկ խրախուսում թիւրք  
կառավարութեան կողմից: Հայերի  
մէջ սկսում է այն մեծ շարժու-  
մը, որ ստեղծում է թիւրքահա-

յերի աղջային Սահմանադրութիւնը:

Այս բոլոր հանգամանքները դարձնում են կ. Պօլիսը մի մեծ և չափազանց կարևոր կենտրոն, որ թէև հայութեան համար մի գաղթավայր է, բայց կենտրոնացնում է իր մէջ ամբողջ թիւրքահայութեան միտքն ու կուլտուրական-քաղաքական շահերը: Այս դիրքին համեմատ էլ տպագրութիւնը գնալով ընդարձակ չափեր է ընդունում: Կայ մի ժամանակ, և այս 60-ական և 70-ական թուականների շրջանն է, երբ կ. Պօլսի հետ մրցել չէ կարող հայաբնակ և ոչ մի վայր, մանաւանդ պարբերական մամուլի կողմից: Բաղաքական շարժումները զարդացնում են հայրենասիրութեան դադափարը, հասցնելով նրան աշմենաբարձր աստիճանի, ազգամոլութեան: Բանաստեղծութիւնը համարեա միայն այս շեշտերով

է ապրում, եթէ չը հաշւենք Պէ-  
շիկթաշլեանի և Դուրեանի քնա-  
րերգութիւնները, թատերագրու-  
թիւնն ուռ վիպագրութիւնը թոյլ  
են, չեն տալիս աչքի ընկնող դոր-  
ծեր։

Իրանց գործունէութեամբ ա-  
նուն ստացած տպարաններ են  
Արապեան, Միւհենտիսեան, Արա-  
մեան (որ, ինչպէս տեսանք, մի  
ամբողջ յեղափոխութիւն է մտցը-  
նում մեր տպագրական գործի  
մէջ), Գաֆաֆեան, Քիւրքճեան,  
Պօյաճեան։

Ութսունական թուականներից  
գրական շարժումն ընդունում է  
նոր ուղղութիւն։ Առաջանում է  
և զարգանում իրապաշտ դպրոցը  
վիպագրութեան մէջ (Արփիա-  
րեան, Զոհրապ, Հրանդ, Բաշա-  
լեան, Կամսարական), տրամա-  
դրութիւնների բանաստեղծութիւ-  
նը մի շարք երիտասարդ գրողնե-  
րի անուններ է յայտնի դար-

ձնում (Զօպանեան և ուրիշները): Պարբերական մամուլը ներկայանում է մեծ օրաթերթերի կերպարանքով («Արևելք», «Մասիս», «Հայրենիք»):

Սակայն այդ գրական կենդանութիւնը հազիւ մի 10—15 տարի տևելուց յետոյ, խեղդուեց Արդիւլ-Համիդի գազանային բռնակալութեան ճանկերում: Դաժան հալածանքների ենթարկուեց միտքը: Գրողներից շատերը փախան, մամուլի և գրականութեան համար սկսուեց մի անկում, մի ողորմելի, նոյն իսկ անպատիւ կացութիւն, որ շարունակուեց մինչև 1908 թուականը, երբ ընկաւ Համիդի բռնակալութիւնը և յայտարարուեց մամուլի ազատութիւն:

Կ. Պոլսի հայ տպարանները նորից տենդային գործունէութիւն սկսեցին: Պարբերական հրատարակութիւնները իրար ետևից բռն-

նում էին սունկի արագութեամբ,  
գրքերը, բրօշիւրները հրապարակ  
էին թափւում մեծ առատու-  
թեամբ։ Նոյն իսկ յեղափոխական  
կուսակցութիւնները հիմնեցին  
իրանց օրգանները, որոնք ներ-  
կայումս ամենից ազդեցիկներն  
են Թիւրքիայում։ Բայց չէ կա-  
րելի ասել թէ շատ զարգացաւ և  
գեղեցիկ գրականութիւնը։ Նախ-  
կին շրջանում անուն հանած հե-  
ղինակների անունների վրայ  
(Սիպիլ, Զապէլ, Զարդարեան)  
քիչ անուններ աւելացան։ Բա-  
ղաքական կեանքն է, որ սահմա-  
նադրական Թիւրքիայում կլանում  
է միւս բոլոր մտաւոր շահերը։  
Համիդեան շրջանում կ. Պոլսի  
հայ տպարանների մէջ յայտնի  
անուն ստացան Մատթէոսեան,  
Պէրպէրեան, Տէր-Ներսիսեան։ և  
ուրիշները։

կ. Պօլսից դուրս հայ տպաւագրական ամենանշանաւոր կենտրոնն է Զմիւռնիան։

1830-ական թուականների վերջերում այդտեղ հաստատուած ամերիկացի բողոքական միսիոներները բաց են անում տպարան, սկսում են հրատարակել «Շտեմարան Պիտանի Գիտելեաց» անունով պարբերական հանդէսը աշխարհաբար լեզուով։ Հանդէսը մի քանի տարի գոյութիւն պահպանեց։ Բայց միսիօներները այնուհետև էլ շարունակեցին իրանց գրական գործունէութիւնը և հրատարակեցին կրօնական բարոյագիտական գրուածքների մի մեծ բազմութիւն, համարեա բացառապէս թարգմանական։

Զմիւռնիայի հայ մտաւորականութիւնը խմբուած էր տեղային Մեսրոպեան վարժարանի շուրջը։ Նա էլ սկսում է գործել և 1840 թուականից սկսում է հրատարա-

կել«Արշալոյս Արարատեան» թերթը (խմբագիր Ղուկաս Պալտազարեան), որին վիճակուած էր մի բացառիկ դեր կատարել մեր մամուլի պատմութեան մէջ։ Զը նայած իր փոքր դիրքին, նա, հրատարակուելով շաբաթը մի անգամ, ազդեցիկ դեր ստացաւ իրեւ լուրջ և լաւատեղեակ հրատարակութիւն, որ տեղեկութիւններ էր տալիս ամեն տեղ ցըռւած հայերի և մասնաւորապէս Հընդկաստանի հայերի կեանքից։ Իրադիրը հրատարակուեց և իր խմբագրի մահից յետոյ էլ, մինչև 1886 թուականը։

1860-ական թուականների շաբաթումները մեծ ոգևորութիւն են առաջացնում և Զմիւռնիայի փոքրաթիւ հայ գաղութի մէջ։ Հրատարակում են մի շարք պարբերականներ, որոնց մէջ երիտասարդ գրողները մեծ աշխոյժով քարո-

զում են առաջադիմութիւն, եւ-  
րոպականութիւն։

Բայց Զմիւռնիայի գրական  
շարժման սիրտը Տէտէեան վա-  
ճառական եղբայրների հիմնած  
տպարանն էր։ Տէտէեանները հան-  
դիսացան տպարանատէր-հրա-  
տարակիչներ՝ եւրոպական մըտ-  
քով, միակ օրինակը հայերի մէջ,  
որ այլևս չը կրկնուեց մինչեւ  
այսօր։

Նրանք սկսեցին մեծածախս,  
բազմահատոր հրատարակութիւն-  
ներ, համարեա բացառապէս  
թարգմանութիւններ եւրոպական  
վիպագրութեան (գլխաւորապէս,  
իհարկէ, Փրանսիականի) այն ժա-  
մանակուայ գլուխ գործոցների։  
Այս կողմից զարմանալի մեծ է  
այդ նշանաւոր հրատարակիչների  
կատարած դերը մեր գրականու-  
թեան պատմութեան մէջ։ Տէտէ-  
եան հրատարակութիւնները մեծ  
տարածում ստացան, ընթերցա-

նութեան սէրը զարգացրին, գրական-գեղարուեստական ճաշակ ստեղծեցին և այսօր էլ մեր գրադարանների մէջ իրանց պատկառելի տեղն ունին: Եթէ կ. Պոլիսը մրցակից չունէր իր պարբերական մամուլի և գրականութեան, ոչ-գեղարուեստական ճիւղին վերաբերուող հրատարակութիւններով, Զմիւռնիան էլ, շնորհիւ Տէտէեանների, բոլորովին անմրցակից էր ընթերցանութեան գրքերի, վէպերի կողմից:

Եւ որ զարմանալին է, այսքան մեծ գործ կատարած տպարանը, արհեստի տեսակէտից, բաւական խեղճ բան էր: Տպագրութիւններ կատարում էր ձեռքի մամուլի միջոցով, աղքատ էր տառերի կողմից, խեղճ ու անարուեստ էր:

Զմիւռնիայի գրական շրջանը տուել է այնպիսի հմուտ թարգմանիչներ, ինչպէս են Զիլինկա-

րեան, Նուպարեան, Մամուլեան։  
Վերջինս միայն շնորհալի թարգ-  
մանիչ չէր, այլ և տաղանդաւոր  
հրապարակախօս և առհասարակ  
վերին աստիճանի բեղմնաւոր գրա-  
կան գործիչ։ Մեր պարբերական  
մամուլի պատմութեան մէջ պա-  
տուաւոր տեղ է բռնում նրա  
«Արևելեան Մամուլ» ամսագիրը,  
որ հիմնուեց 1872-ին և շարու-  
նակուեց մինչև 1909 թուականը։  
Մամուլեանը տպարանատէր էլ  
էր։

1908 թ. թիւրքական յեղափո-  
խութիւնը Զմիւռնիայում էլ տպա-  
րանական գործի կենդանութիւն  
առաջացրեց։ Հրատարակւում են  
թերթեր («Դաշինք», «Աշխա-  
տանք»), Ներկայումս այստեղ  
լոյս է տեսնում «Հայ Գրակա-  
նութիւն» անունով մի գուտ  
գրական հանդէս։

50-ական թուականների եռանդուն շարժումները հրաշքի նման մի երեսյթ առաջացրին և հայ հայրենիքի խորքերում։ Թիւրքաց Հայաստանի հողը տպարանական մամուլ չէր տեսել Գուտենբերգից ի վեր։ 50-ական թուականների երկրորդ կէսին էր որ Մկըրտիչ Խրիմեան վարդապետը (Հայրիկ) կ. Պօլսից մի փոքրիկ տպարան տարաւ Վարազայ վանքը, ուր հրատարակում էր «Արծիւ Վասպուրականի» անունով տետրակներ ամսէ ամիս։ Հասկանալի է թէ այդպիսի մի տեղում որքան խեղճ ու կրակ բան պիտի լինէր տպագրութիւնը։ Բայց և այնպէս, տպարանը մի ամբողջ փայլուն շերտ բաց արաւ գաւառական մութիրականութեան մէջ։ Նրա մի փոքրիկ բաժինն էլ տեղափոխուեց Մուշի ս. Կարապետ վանքը, ուր սկսեց հրատարակուել «Արծուիկ Տա-

լոնոյ» թերթը։ Երկու պարբերականներն էլ գաւառների թշուառ, հարստահարուածաղգաբնակութեանը բերանը դարձան։ Նրանք առաջին աղաղակներ էին, որ լսում էին հայ երկրի խորքերից և ուշադրութիւն էին հրաւիրում ժողովրդի ողբալի դրութեան վըրայ։

«Արծիւ վասպուրականի» ամսագրի դադարումից յետոյ էլ վարագի տպարանը մի ժամանակ դործում էր Վանում։ Տպեց մի քանի գրքեր, որոնք շատ ուշագրաւ են և կարող են գաւառական գրականութեան նախահայրն անուանուել։

Այսքան սքանչելագործ էր տպարանը։ Գրականութիւն ստեղծում էր նոյն խոկայնապիսի խուլանկիւններում, ուր մինչեւ նրա երեան դալը մահուան լուսութիւն էր տիրում։

Քառասնական թուականներին տպարան է բացուած և Երուսաղէմի հայոց վանքում։ Նա հրատարակում է գլխաւորապէս եկեղեցական և կրօնական գրքեր և լաւ անուն է հանում այդ ասպարէզում։

Դրական գործունէութիւնը աւելի եռանդուն բնաւորութիւն ստանում է Եսայի պատրիարքի ժամանակ (1864—1885)։ 1869-ից Միաբանութիւնը սկսեց հրատարակել իր ամսագիրը՝ «Սիօն» անունով, որ Շ տարի շարունակուեց։ Հրատարակութիւնները կրօնական բովանդակութեամբ էին, բայց նրանցից շատերը լուրջ ձեռնարկութիւններ են։ Տպարանական գործին պատիւքերող հրատարակութիւն է «Համաբարբառը»։ Ներկայումս տպագրութիւնը Երուսաղէմում միանգամայն ընկած է։

Գրական մի վանք էլ կ. Պոլսի  
մօտերքում է գտնուում—Արմաշ,  
Վաթուունական թուականների  
երկրորդ կէսից այդտեղ սկսում են  
հրատարակել «Յոյս» անունով  
ամսագիրը, բաւական հետաքր-  
քրական բովանդակութեամբ. Նրա  
մէջ տպւած թարգմանական մի  
քանի վէպեր լոյս են տեսնում  
առանձին հրատարակութեամբ:

1908 թուականի յեղափոխու-  
թիւնը հնարաւորութիւն տուեց  
որ թիւրքահայ գաւառը իր ձայնն  
ունենայ երկրի ընդհանուր քա-  
ղաքականութեան մէջ: Եւ այս-  
պիսի իրաւունք ստացած մի ժո-  
ղովուրդ ամենից առաջ, իհարկէ,  
տպագրական մամուլի կարիք պի-  
տի զգար: Հետզհետէ Էրզրումը,  
Խարբերդը, Վանը, Մարզուանը,

Նիկոմիդիան հայ տպարաններ  
ունեցան, որոնք և գործում են  
մինչև այսօր։ Բնորոշ հանդամանք  
է որ այդ տեղերում լոյս են տես-  
նում միմիայն պարբերական հրա-  
տարակութիւններ \*) և գրակա-  
նութիւն, լայն մտքով, դեռ գո-  
յութիւն չունի Թիւրքաց Հայաս-  
տանում։

Պատճառը, իհարկէ, գրական  
ոյժերի պակասութիւնն է։ Մինչ-  
դեռ պարբերական հրատարակու-  
թեան համար բաւական է մի  
քանի մարդկանց գործակցութիւ-  
նը։ Այդ փոքրիկ պահանջին բա-  
րարարութիւն տուող գաւառա-  
կան տպարաններն էլ, մեծագոյն  
մասամբ, խեղճ բաներ են։

\*) Յիշատակենք դրանցից մի քանիսը.  
Երգուում—«Յառաջ», Տրապիզոն.—«Պօն-  
տոս» և «Բժիշկ», Խարբերդ՝ «Եփրատ»,  
Մարզուան—Հայկունի», Նիկոմիդիա—  
«Բիւթանիա», Վան—«Վանտոսպ» և «Աշ-  
խատանք», Ամասիա—«Ամասիա»։

## ՈՌԻՍԱՍՏԱՆ

ԽIX դարի սկզբում, բացի Աստրախանի տպարանից, որ չէր էլ գործում, հայերէն տպարան կար և Պետերբուրգում։ Նա պատկանում էր սարկաւագ Յովհաննիսկանին և տպագրեց, ի միջի այլոց, Բրիտանական Բնկերութեան ծախսով, «Աստուածաշունչ», «Աւետարան» և այլն։ Քսանական թուականների վերջերից այդ տըպարանը անցնում է Լազարեան Ճեմարանին և տեղափոխուում է Մոսկվա։

Այնուհետև հայերէն տպագրութիւններ Պետերբուրգում տեսնում ենք յիսնական թուականներին։ Նրանք հրատարակւում են Եանսօն գերմանացու տպարանից։

Այդ թուականներին է որ Ռափայէլ Պատկանեանը (Գամառ-Քաթիպայ) սկսում է վերին աստիճանի եռանդուն հրատարակչական գործունէութիւն։ Ինքը լինելով աղքատ ուսանող, կարողանում է, ահագին դժուարութիւններով, ոչ միայն առաջ տանել իր հրատարակութիւնները, այլ և ձեռք բերել Եանսօնի տառերը և բաց անել սեփական տպարան, որ 60-ական թուականների առաջին կէտում բազմաթիւ հրատարակութիւններ է անում, դրանց մէջ և առաջին հայերէն լրագիրը Պետերբուրգում («Հիւսիս»):

Միաժամանակ Գիտութիւնների Ակադեմիան էլ իր բազմալեզուեան տպարանում բաց է անում հայկական մի աղքատ բաժին, բաղկացած համարեա միայն երկու տեսակ հնաձև և տգեղ տառերից, որոնք այսօր էլ դեռ պահպանում են իրանց գոյութիւնը։

Ակադեմիայի տպարանի հայելու բաժինը համարեա բացառապէս նույրուած էր և է այժմ համալսարանի արևելեան ֆակուլտէտում գործող հայագէտների (Բերոյեան, Քերովը Պատկանեան, Մառ, Աղոնց և ուրիշները) և տպագրած ունի մեծ թուով հայագիտական աշխատութիւններ։

Ու. Պատկանեանին, իբրև հրատարակիչ, յաջորդում է Միքայէլ Միանսարեանը, որ գնում է հայելու տառեր և դրանցով միշտ տպագրութիւններ է անում տեղական ոռւս տպարաններում։ Ութսունական թուականներին հայելու բաժինն ունի Սկորոխողովի տպարանը, ապա բացւում է «Պուշկինեան» հայ տպարանը։

Սրանք են այն գործարանները, ուր կենտրոնացաւ Պետերբուրգի հայ փոքրիկ գաղութի գրական գործունէութիւնը ԽIX դարի սկզբից մինչև մեր օրերը, Այդ

գրականութիւնը, սակայն, մի ան-  
նշան բան չէ, այլ շատ պատուա-  
ւոր տեղ է բռնում մեր նորագոյն  
կեանքի պատմութեան մէջ։ Նա  
բազմակողմանի է և ժամանակին  
մեծ ազդեցութիւն է թողել հայ-  
կական կեանքի վրայ, ծառայե-  
լով նրա վերածնութեան։

Մի կողմ թողնելով գրքերը,  
մենք կը յիշատակենք այստեղ Ա.  
Գուլամիրեանի «Արաքս» պատ-  
կերագարդ հանդէսը, որ թէկ եր-  
կար չը շարունակուեց և շատ գըր-  
քեր չը տուեց, բայց այսօր էլ մնում  
է մի հատիկը մեզանում իր ար-  
տաքինով և բովանդակութեամբ։  
Ներկայումս գրական գործու-  
նէութիւնը Պետերբուրգում խլա-  
ցած է։

---

Պետերբուրգից աւելի նշանա-  
ւոր է հայերի տպագրական գոր-  
ծունէութիւնը Ռուսաստանի միւս  
մայրաքաղաքում, Մոսկվայում։

Այստեղ էլ, դարի սկզբում, Լազարեան Ճեմարանի տպարանից առաջ, հայերէն տառեր պահում էր և տպագրութիւններ անում էր Աւգուստ Սեմինի տպարանը, որից տառերը յետոյ անցան Վոլդեմար Գօթիէ Փրանսիացի տպարանատիրոջը (որ և յայտնի գրավաճառ): Մինչև 1850-ական թուականների երկրորդ կէսը թէ Լազարեան Ճեմարանի և թէ Գօթիէի տպարանները հրատարակում էին ոչ միայն Մոսկվայում ապրող հայերի աշխատութիւնները, այլ և դրսից, ուրիշ քաղաքներից ուղարկուածները: Հրատարակութիւններ անում էր և Լազարեան Ճեմարանը, գլխաւորապէս դասագրքեր իր աշակերտների համար:

Բայց հետզհետէ Լազարեան Ճեմարանի տպարանը խլացրեց միւս տպարանի գործունէութիւնը և իր մէջ կենտրոնացրեց բո-

լոր հայերէն տպագրութիւնները։  
 Նա բերել տուեց արագատիպ  
 մեքենաներ, վիէննայի Միսիթա-  
 րեան տպարանի մայրերը և մա-  
 քուր, ճաշակաւոր հրատարակու-  
 թիւններ էր անում։ Դա մայրա-  
 քաղաքին վայել մի բարեկարգ  
 տպարան էր և նրա ձուլարանը  
 վի էննական տառեր էր մատա-  
 կարարում Ռուսաստանում գոր-  
 ծող միւս տպարաններին։ Այդ  
 տառերից առան Միանսարեանը,  
 Թիֆլիսի, Շուշու տպարանները։  
 Երբ Լազարեան Ճեմարանի տպա-  
 րանը ծախուեց, հայերէն տառերի  
 մայրերն անցան Օտտօն Հերբէկ  
 գերմանացի ձուլարանատիրոջ, որ  
 մասսամբ բարեփոխեց տառերը,  
 ինքն էլ աւելացրեց նոր տեսակի  
 տառեր ու դարձաւուսահայտպա-  
 րաններին տառեր մատակարա-  
 լող։

Լազարեան Ճեմարանի տպա-  
 րանից յետոյ Մոսկվայի հայերէն

հրատարակութիւնները կատարվում էին տեղային օտար տպարաններում (օր. Կուդրեավցեվայշի, Գատցուկի): Զուլարանատէր Հերբէկն էլ ունէր տպարան, որտեղից շատ հայերէն հրատարակութիւններ լոյս հանեցին: 90-ական թուականներից հայերէն հրատարակութիւնների կենտրոնավայր են գառնում Բարխուդարեանի, ապա և Աւետիքեանի տպարանները, որոնք գոյութիւն ունին և այժմ:

Յայտնի է թէ Մոսկվան որքան կարեոր դեր է կատարել մեր գրականութեան պատմութեան մէջ: Լազարեան Ճեմարանը իր հիմնարկութեան սկզբի ժամանակներից մինչև Կօթանասունական թուականները ոռւսահայոց մտաւոր առաջնակարգ կենտրոններից մէկն էր, եթէ ոչ միակը: Նրա գլխաւոր հոգան էր հայերէնագիտութիւնը: Այդ աս-

պարէզում աշխատել են Սալլան-թեան, Էմին, Մսերեան, Խալա-թեան, որոնց գործերն էլ զանա-զան ժամանակ հրատարակուել են Մոսկվայում։

Նոյն Ճեմարանի մէջ խմբուած հայ մտաւորականներն էին, որ հիմնեցին պարբերական մամուլ։ Այստեղ էին գործում Ստեփանոս Նազարեանը և Նալբանդեանը իրանց «Հիւսիսափայլով», որ սկսուեց 1858-ին և շարունակուեց մինչև 1864 թ., մի ամբողջ փայլուն շերտ մտցնելով մեր կեանքի մէջ։ «Հիւսիսափայլի» շրջանը Մոսկվայի գաղութի ազդեցութեան ամենափայլուն ժամանակն էր։ Վիպագրութիւնը, բանաստեղծութիւնը, թատերագրութիւնը, միացած ազդու հրապարակախօսութեան հետ, այնպիսի հեղինակութիւն տուին Մոսկվայի հայ գործիչներին, որ թւում էր թէ հայոց նոր զրականութիւնը ընդ

միշտ իրահամար անշարժ բնակութեան վայր ընտրելովէ Ռուսաստանի հին մայրաքաղաքը:

Բացի «Հիւսիսափայլից», Մոսկվայում հրատարակուեցին «Ճռաքաղ» ամսագիրը, առաջինի հակոտնեան, «Համբաւարեր Ռուսիոյ» թերթը:

Սակայն այս բոլոր հրատարակութիւններից 60-ական թուականների երկրորդ կէսում մնացել էր միայն յիշողութիւն: Մոսկվայի գաղութը ինքն իրան լուսթեան դատապարտեց մինչև Կօթանասնական թուականների վերջերը, երբ հայոց հարցի յարուցած հասարակական եռանդուն շարժումը արձագանք տուեց և այնտեղ, առաջ բերելով վերանորոգուած «Փարոս Հայաստանի» պատկերազարդ պարբերական հրատարակութիւնը (Զ. Մսերեանի), մի գեղեցիկ տպագրական գործ: Տա-

սը տարի անցած՝ հրատարակուել սկսում է «Հանդէս Գրականական և Պատմական» ժողովածուն, տարին երկու գիրք, որ շարունակում է մի քանի տարի։

Վերջին տարիներս Մոսկվայի գրական գործունէութիւնը հազիւ հազ կարողանում էր իր գոյութիւնը ցոյց տալ հայագիտական մի քանի հրատարակութիւններով։ Ներկայումս այնտեղ հրատարակում է «Մարտ» անունով մի երկշաբաթաթերթ։ Իսկ տեղական հայ ուսանողութիւնը տարին մի անգամ հրատարակում է «Գարուն» անունով մի ժողովածու գրական բովանդակութեամբ։\*)

\*) Մոսկվայի գրականութեան մէջ անուն հանել են, բացի յիշուածներից, Ս. Շահ-Ազիզ, Յ. Յովհաննիսեան, Ա. Ծատուրեան, Վ. Տէրեան, Թուչակ-Յովհաննիսեան, Կ. Կուտիկեան և այլն։

Նրիմի ափին մի փոքրիկ քառաք կայ, թէողոսիա անունով, որ այսօր էլ Խուսաստանի գաւառական աննշան անկիւնների ընդհանութը դրութիւնից դուրս համարուելու ոչ մի արժանաւորութիւն չունի: Բայց մեր գրականութեան պատմութեան մէջ՝ այդ քաղաքը շատ բնուրոշ նշանակութիւն ունեցող մի դեր է կատարել, ցոյց տալով թէ ինչպէս է տպարանը նոյն իսկ այդպիսի մի աննշան վայրում գրականութիւն ստեղծում:

Գարըիէլ վարդապետ Այվազեանը, ճեռանալով Պարիզից, ուր, ինչպէս տեսանք, գործում էր Մխիթարեան Միաբանութիւնից ճեռացած վարդապետների ճետ, բաց արաւ թէողոսիայում Խալիբեան դպրոցը, որ այսօր այնքան իր դաստիարակչական գործով չէ յայտնի, որքան իր տպարանով: Դա Պարիզի նշանաւոր տպարանի

մի մասն էր, տեղափոխուած Ռուսաստան և սկսեց գործել 1860 թուականից, դարձնելով մինչև այդ անյայտ ու աննշան Թէոդո-սիան մի Պարիզ, ի հարկէ, մի-միայն հայ տպագրութեան տեսա-կէտից:

«Մասեաց Աղաւնի» ամսագիրը Պարիզից տեղափոխուեց Խալի-բեան դպրոցի տպարանը: Բացի դրանից, տպարանը վաթսունա-կան թուականների ընթացքում անդադար հրատարակութիւններ էր անում, տալով դասագրքեր, կրօնական բարոյագիտական տե-տրակներ, պատմական աշխա-տութիւններ, օրացոյցներ, գե-ղարուեստական գրականութիւն: Տպարանի ամենածաղկած դրու-թիւնը այն ժամանակն էր, երբ Այվազեան վարդապետն ապ-րում էր Թէոդոսիայում և Բեսա-բարիայի թեմի առաջնորդ էր: Ծանկած դրութիւն ասելով, մի-

այն հրատարակուած գրքերի քա-  
նակութիւնը չը պէտք է հասկա-  
նալ, այլ գլխաւորապէս տպա-  
գրական արուեստը։ Այս կողմից  
թէոդոսիայի տպարանը, կարելի  
է ասել, մինչև այսօր էլ հաւա-  
սար մըցակից չէ ունեցել ոռւսա-  
հայերի մէջ։ Նորաձև պարիզեան  
տառերի ճոխութիւն, ճաշակաւոր,  
մաքուր տպագրութիւն-ահա ին-  
չըն է որ այսօր վկայում է թէ  
մեր տպագրութիւնը որքան յետ  
է մնացել այն ժամանակից։

Թէոդոսիայի տպարանի միջոցով  
Ռուսաստան մտաւ Ճանիկ Արա-  
մեանի, Գալֆայեան և Այվազեան  
վարդապետների ջանքերով կա-  
տարուած տպագրական մեծ վերա-  
նորոգութիւնը, որ, սակայն, ոռւ-  
սահայերի մէջ այնքան մեծ ըն-  
դունելութիւն չը գտաւ, ինչպէս  
թիւրքահայերի մէջ։

Այվազեանի թէոդոսիայից հե-  
ռանալուց յետոյ էլ Խալիբեան

տպարանը հրատարակութիւններ  
էր անում, բայց արդէն ոչ առաջուայ շուշով։ Ի միջի այլոց, այդ-  
տեղ էր տպւում «Դաստիարակ»  
դպրոցական թերթը։

1873—1874 թուականներին  
փակուեց դպրոցը, նրա հետ և  
գեղեցիկ տպարանը, որի տառե-  
րի մայրերը ցըսւեցին այս ու  
այն կողմ։

Այս տպարանի գրաշարներից  
մէկը, Տէր-Արքահամեան, տպա-  
րան բաց արաւ Շոստով քաղա-  
քում, հայերէն գրքեր տպեց, բայց  
արդէն Թէոդոսիայի տառերից ոչ  
մէկն էլ չունէր։

1890-ական թուականներին Նոր  
Նախիջեւանում երեան եկաւ Զա-  
մինեանի և Քերլեանի (ապա Ա-  
ւագեանի) տպարանը որ գործ էր  
ածում Թէոդոսիայի տառերը,

բայց արդէն սաստիկ մաշուած դրութեան մէջ։ Նոյն այս քաղաքում տպագրական գործունէութիւն առաջացաւ 1900-ական թուականներին։ Գոյութիւն ստացաւ նոյն իսկ պարբերական մամուլ («Մեր Զայնը», այժմ՝ «Լոյս» շաբաթաթերթ)։

Թիֆլիսը թէն 1801 թուականից էր մտել ռուսաց տիրապետութեան տակ, բայց մօտ քառորդ դար ոչ մի տպարանական գործունէութիւն չունէր իր մէջ։ Ներսէս Աշտարակեցին բաց արաւ իր դպրոցը Թիֆլիսում 1824 թուին։ Վաղուց նա մտադրուած էր Վենետիկի Մխիթարեան վանքի նման մի գրական հիմնարկութիւն ստեղծել Հայաստանում։ Այս միտքը նա երազում էր իրանործել իր դպրոցի միջոցով,

դարձնելով նրան գրական մի  
կենտրոն: Հարկաւոր էր ունենալ  
տպարան: Նրա բարեկամ և գոր-  
ծակից Գիորգ Արծրունին, Եւրո-  
պայում ճանապարհորդելիս, գը-  
նում է Ամստերդամում հայերէն  
տառերի մայրեր (Խոշտարեանի  
տառերի տեսակից) և նուիրում է  
Ներսիսեան դպրոցին:

Դա առաջին մասնաւոր տպա-  
րանն էր Թիֆլիսում: Զը նայած  
իր աղքատութեան, չը նայած  
արուեստի խեղճ դրութեան, Ներ-  
սիսեան դպրոցի տպարանը մի  
նշանաւոր երևոյթ էր կովկասի  
մայրաքաղաքում: Մինչև 1860-  
ական թուականները նա միակ  
տեղն էր, ուր տպւում էին հա-  
յերէն գրքեր\*):

Այստեղ էին տպւում «Կովկաս»

---

\* ) Այդ միջոցին բացուեց և Արդո-  
նեան եղբայրների տպարանը, բայց աչքի  
ընկնող դեր չը կատարեց և երկար էլ  
կետնք չունեցաւ:

և «Մեղու Հայաստանի» լրագիրները (առաջինը՝ 1844—1846, երկրորդը՝ 1853-ից): Այս տպարանի տառերով էր որ տպւում էր Գաբրիէլ քահ. Պատկանեանի «Արարատ» ամսագիրը (1850—1851): Նոյն այս տպարանն էր, որ 1858-ին տպագրեց Խաչատուր Աբովեանցի «Վէրք Հայաստանի»-ն:

Սակայն նոյն յիսունական թուականների վերջում հայ տպագրութեան գործը թիֆլիսում նշանաւոր առաջադիմութեան է հասնում: Երկու ընկերներ, Գաբրիէլ Մելքոնմեան և Համբարձում էնֆիաճեան, բաց են անում տպարան: Առաջինը շուտով թողնում է գործը, որ և մնում է էնֆիաճեանին: Սա թէ տպարանատէր է, թէ հրատարակիչ: 1860-ից հրատարակում է «Կոունկ Հայոց Աշխարհին», իսկ 1862-ից իր ձեռքն է առնում նաև «Մեղու

Հայաստանի» լրագրի հրատարակութիւնը:

Էնֆիաճեանի տպարանը նշանաւոր ծառայութիւն մատուցեց ոռւսահայոց տպագրական գրծին նրանով, որ նա գործածութեան մէջ մտցրեց Պարիզի նորաձեայերէն տառերից շատերը, իսկ Վիէննայի տառերից մի տեսակը, որ գործ էր ածւում գրքերի համար, բարեփոխեց, հեռացնելով նրանց տղեղ հին գլխագրերը և յարմարեցնելով նրանց Պարիզիան գլխագրերը:

Ստացուեց մի ինքնուրոյն տպարանական գործ, որ կարելի է անւանել Թիֆլիսի տիպ: Աչքի ընկնող մաքուր տպագրութիւն, անցեալի համեմատութեամբ մեծ ճաշակաւորութիւն—այս յատկութիւններով էր որ Էնֆիաճեանի տպարանը շուտով բոլորովին խլացրեց Ներսիսեան դպրոցի տպարանը և իր ձեռքն առաւ-

համարեա բոլոր հայերէն տպագրութիւնները։ Այս տիրապետող դիրքը նա պահեց իր ձեռքում համարեա մինչև 1880-ական թուականները։ Թէև մինչև այդ էլ նոր տպարաններ բացուեցին և մրցակից հանդիսացան, բայց էնֆիաճեանի ոյժը իր ձուլարանն էր, որ տառեր էր մատակարարում և միւս տպարաններին\*):

Նոյն վաթսունական թուականներին էնֆիաճեանի մօտ էին տպւում «Վաճառական» թերթը, «Հայկական Աշխարհ» ամսագիրն էլ յաճախ նրան էր դիմում։ Փոխարքայի դիւանատան տպարանը այդ ժամանակ հայերէն տառեր առաւ (Մոսկվայի), տպում էր «Գարուն» ամսագիրը և հայերէն գրքեր։

---

\* ) Էնֆիաճեանի տպարանը յետոյ անցաւ Ռոտինեանին և այսօր էլ գոյութիւն ունի, բայց ձուլարանը բոլորովին խափանուած է։

կէս դարի ընթացքում Թիֆլիսը նուաճել է կենտրոնի գիրքը ոչ միայն Անդրկովկասի, այլ և ամբողջ Ռուսաստանի հայութեան վերաբերմամբ։ Պետերբուրգի, Մոսկվայի, Թէոդոսիայի գրական ազգեցութեան շրջաններն անցել են, տեղի տալով Թիֆլիսին, որ մտաւոր կենտրոնի մենաշնորհն ունի, ազդում է, դեկավարում է գլխաւորապէս իր տալագրական գործունէութեան միջոցով։ Արևելեան հայութեան համար նա նոյնն է, ինչ կ. Պօլիսը՝ արևմտեան հայութեան համար, նոյնպէս մի հայաշատ գաղութ, որից գաւառները ստանում են ամեն ինչ—և դեկավարող հրապարակախօսութիւն, և՝ գեղարուեստական գրականութիւն, և՝ դասագիրք ու գիտութիւն։

Եօթանասնական թուականներից հայ մտաւորականութիւնը Թիֆլիսում աւելի ևս ազգեցիկ

դիլք է ստանում: Աւելանում են նոր պարբերական հրատարակութիւններ («Մշակ», «Փորձ», «Մանկավարժական թերթ», յետոյ և «Արձագանք», «Նոր-Դար», «Վարժարան», «Աղբիւր», «Տարագ», «Մուլճ», «Լումայ», «Արշալոյս», «Ազգագրական Հանդէս»): Դրա համեմատ զարգանում է տպարանական գործունէութիւնը և հայերէն հրատարակութիւններով յայտնի են զառնում Յ. Մարտիրոսեանի, Վարդանեանի, Շարաձէի, Վրաց Հրատարակչական Բնկերութեան, «Արօր», Մ. Մարտիրոսեանի տպարանները:

Հայերէն տառերի հոգսը իր վրայ է վերցրել գերմանացի Մաղէրի ձուլարանը, որ բազմաթիւ փորձեր է անում նոր, ամենայարմար և գեղեցիկ ձևեր տալու մեր տառերին, բայց յաջողութիւն չէ ունենում և պարի-

զեան ձևերը մնում են դարձեալ  
անգերազանցելի:

— XIX դարի վերջում Թիֆլիսը  
միակ տեղն է, ուր գործում է  
հայ միտքը աչքի ընկնող եռան-  
դով: Թիւրքիայում տիրողքաղա-  
քական անհանդուրժելի կացու-  
թիւնը առաջնութիւն է տալիս  
Թիֆլիսին նաև թիւրքահայերի  
վերաբերմամբ: Ռուսահայ գա-  
ւառներում համարեա բոլորովին  
դադարել է և այն մասնակի գը-  
րական տպագրական գործունէու-  
թիւնը, որ երբեմն-երբեմն երևան  
էր գալիս այնտեղ:

Թէև Ռուսաստանում էլ տպա-  
գրական պայմանները տասնեակ  
տարիներից ի վեր նպաստաւոր  
չեին, բայց Թիֆլիսը միանգամից  
իր ձեռք բերած բարձր հեղինա-  
կութիւնն է վայելում, այդտեղ  
են գնում այն բոլոր մարդիկ, ո-  
րոնք իրանց մէջ գրական կոչում  
են զգում: Այդտեղ են դնահատ-

ոռւմ, հոչակ ստանում գրական  
տաղանդները <sup>\*)</sup>): Այդտեղ են  
կազմւում գրական հոսանքներ,  
քաղաքական ու հասարակական  
դադարիալների գունաբորումներ,  
կուսակցութիւններ: Մի խօսքով՝  
այդտեղ է լիակատար կերպով ար-  
տայայտւում հայկական կեանքը  
տպագրութեան միջոցով:

Ոռւսական յեղափոխութիւնը

\*) Հրապարակախօսութեան աս-  
ովարէզում գործողներից յայտնի անուն  
են ստանում Մարկոս Աղաբէկեան, Խո-  
րէն Ստեփանէ, Պետրոս Արմէօնեան,  
Գրիգոր Արծրունի, Արգար Յովհաննի-  
սեան, Ստանդար Սպանդարեան, Աւետիք  
Արասիանեան, Լևոն Սարգսեան, Խա-  
ժակ, Խաչատուր Մալումեան, Ալէքսան-  
դր Քալանթար, Եղիշէ Թովիչեան և այ-  
լըն. գեղարուեստական գրականութեան  
ասպարէզում—Պերճ Պոօշեան, Ղազարոս  
Աղայեան, Բաֆֆի, Շիրվանդադէ, Մու-  
րացան, Յովհաննէս Թումանեան, Աւե-  
տիս Ահարոնեան, Վլթանէս Փափաղեան,  
Աւ. Խսահակեան, Ատրպետ, Նալ-Դոս և  
այլն:

(1905 թուականից) ահաղին ազդեցութիւն է անում մեր տպագրութեան վրայ։ Մամուլի ազատութիւնը հրապարակ է նետում պարբերական հրատարակութիւնների մի մեծ առասութիւն։ Թերթերը բանում և անյայտանում են սունկի արագութեամբ։ Տպարանները (եղածների վրայ պէտք է աւելացնել «Հերմէս», Աղանեանի և այլ շատերը) հազիւ կարողանում են բաւարարութիւն տալ պահանջին։ Առաջանում է և տիրապետութեան իրաւունք է ստանում քաղաքական գրականութիւնը, որ նոյն իսկ դուրս է մղում մինչև այդ եղած գրականութիւնը։

Բայց նոյն քաղաքական շարժումը տպագրութեան համար դուներ է բաց անում և գաւառներում։ Հայ տպագրութիւնը սկսում է կամաց կամաց տա-

ըածուել և դաւառական հայութեան մէջ:

Ներկայումս անցել է այդ եռանդուն շարժումների ժամանակը և հայ տպագրութիւնը արդէն այնպիսի դրութեան մէջ է, որ նախանձով պիտի յիշէ նախկին շրջանները:

—

Թիֆլիսից դուրս իր տպագրական գործունէութեամբ աչքի ընկնող դիրք պատկանում է Էջմիածնի վանքին:

Մինչև Գէորգ ԱՎ-ի կաթողիկոսութիւնը, այսինքն մինչև 60-ական թուականների վերջերը, Էջմիածնում կար մի հին տպարան, որ երեմն հրատարակութիւններ էր անում անճաշակ տառերով, տպագրում էր գլխաւորապէս եկեղեցական դրքեր:

Գէորգը իր առաջին գործերից

մէկը՝ դարձրեց այդ տպարանի վերանորոգութիւնը և 1868-ից սկսեց հրատարակել «Արարատ» ամսագիրը, որ գոյութիւն ունի և այսօր։ Տպարանը նուէր ստացաւ Մուկվայից մամուլ և տառեր (Վիէննական ձևի)։ Բացի դրանից, նրան անցան և Խալիքեան տպարանի մայրերից շատերը, որոնք միջոց էին տալիս նըրան տառերի հնարաւոր բազմադանութիւն ցուցագրել։

Տպագրական և ձուլարանական մեքենաներ տպարանը ձեռք բերեց Մակար և Մկրտիչ կաթողիկոսների ժամանակ։ Մակայն, չը նայած այս բոլորին, էջմիածինը չը դարձաւ այնպիսի մի վայր, որ տպագրական արուեստի մասին կարելի լինէր ասել թէ զարդացել է։ Նրա հրատարակութիւնները ոչ առանձին ճաշակի ու հագացողութեան, ոչ առաջադիմութեան նշաններ են ցոյց տա-

լիս։ Թէոդոսիայի դեղեցիկ մայւրել վազուց մոռացութեան են մատնուել և էջմիածնի ձուլաբանը, որ կարող էր տառեր մատակարարել ուրիշ տպարանների, ինքն է ուրիշներից տառեր առնում։

Այս վանական տպարանի կատարած դերը մեր գրականութեան մէջ բաւական աչքի ընկնող է, մանաւանդ հայագիտութեան ասպարէզում։ Տպուել են մեր հին մատենագրական շատ յիշատակարաններ, բանասիրական բազմաթիւ ուսումնասիրութիւններ։ Աշխատողները եղել են մեծագոյնմասամբ վանքում ապրողները — միարանութեան անգամները և Գէորգեան Ճեմարանի ուսուցիչները<sup>\*</sup>)։

---

\*) Միարաններից՝ Գալուստ Տէր Մըկրտչեան, Մեսրոպ և Կարապետ Էպիսկոպոսներ, Գարեգին, Երուանդ վարդապետներ, Ճեմարանի ուսուցիչներից կ.

Առանձնապէս պէտք է յիշաւակել որ 1870-ական թուականներին վահան վարդապետ Բաստամեանը վանքի տառերով տպարան բաց արաւ Գայիանէի վանքում և հրատարակում էր այդտեղ «Դպրոց» մանկավարժական ամսագիրը:

Ներկայումս տպագրական գործունէութեան համարեա միակ նշան մնացել է «Արարատի» հրատարակութիւնը:

Թիֆլիսից քիչ յետոյ, XIX դարի երեսնական թուականների սկզբում, տպարանական գործունէում է և Շուշի քաղաքում: Այդտեղ հաստատուած գերմանացի բողոքական միսիօներները

---

կոստանեան, Մանուկ Աբեղեան, Ստեփան Կանայեան, Ն. Քարամեան, Յ. Մանուկեան:

Մոսկվայում գնած տառերով բաց  
են անում տպարան, նկատի ու-  
նենալով, իհարկէ, կրօնական-  
քարողչական նպատակներ միայն:  
Նրանց հրատարակութիւնները  
համարեա բացառապէս աշխար-  
հաբար լեզուով էին:

Երբ միսիօներները հեռացւում  
են Շուշուց, նրանց տպարանը  
գնում է Ղարաբաղի առաջնորդ  
Բաղդասար միտրոպոլիտը՝ հոգե-  
ւոր վարչութեան անունով։ Եւ  
տպարանը անգործ չէ մնում գրա-  
կան տեսակէտից։ Հրատարակում  
է գլխաւորապէս եկեղեցական  
գրքեր. աչքի է ընկնում Յովսէփ  
վարդապետ Արցախիցու հայե-  
րէն բառարանը։

1860-ական թուականներին տը-  
պարանը Մոսկվայից ստանում է  
նուէր նոր տառեր (Վիէննական  
ձևի)։ Այդ միջոցին թեմական  
դպրոցի ուսուցչական խումբը  
կաղմուած էր այն ժամանակուայ-

Երիտասարդութեան մի քանի  
յայտնի ներկայացուցիչներից, ո-  
րոնց շնորհիւ տպարանը տալիս  
է մի քանի նշանակելի հրատա-  
րակութիւններ։ Բայց գլխաւորա-  
պէս նրա գործն է լինում եկեղե-  
ցական գրքերի և կրօնական դա-  
սագրքերի հրատարակութիւնը։

Եօթանասունական թուականնե-  
րին տպարանն արգէնքայքայուած  
դրութեան մէջ էր և Խորէն վար-  
դապետ Ստեփանէն հազիւ կա-  
րողանում է այդտեղ իր «Հայ-  
կական Աշխարհ» ամսագրի մի  
քանի համարները տպել։

Յաջորդ տասնամեակի սկզբում  
Շուշու Երիտասարդութիւնը ցոյց  
է տալիս գրական և հրատարակ-  
չական աչքի ընկնող գործունէ-  
ութիւն, որ կենտրոնացած է  
Մահտեսի Յակոբեանի նորաբաց  
տպարանում։ Այնուհետև հոգեսոր  
վարչութեան տպարանն է մերա-  
բացւում, աւելանում են Տէր-

Սահակեանի, Բարաջանեանի մա-  
սնաւոր տպարանները:

Ներկայումս այնտեղ հրատա-  
րակւում է «Ղարաբաղ» թերթը:

Մեր գրականութեան պատ-  
մութիւնը յատուկ տեղ կը տայ  
Շուշու գրական գործունէութեան:

Հին նշանաւոր քաղաք է Շա-  
մախին: Ցիսունական թուական-  
ներին նա նահանգական քաղաք  
էր և այդ ժամանակ այնտեղ էլ  
տեսնում ենք հայ տպարան (Մոսկ-  
վայի Գօթիէի տառերով)—Աթա-  
ֆրիգորեանի տպարանը, ուր 1856-  
ին տպուել է Արցախեցի Մովսէս  
Զոհրաբեանի բանաստեղծութիւն-  
ների երկհատոր ժողովածուն՝  
«Պարապոյ Ժամք» վերնագրով  
(այդտեղ կայ Շիլլերի «Շիլիո-  
նեան կալանաւոր»-ի թարգմանու-  
թիւնը): Այդ տպարանը յետոյ

Հին նշանաւոր քաղաք է Շա-  
մախին: Ցիսունական թուական-  
ներին նա նահանգական քաղաք  
էր և այդ ժամանակ այնտեղ էլ  
տեսնում ենք հայ տպարան (Մոսկ-  
վայի Գօթիէի տառերով)—Աթա-  
ֆրիգորեանի տպարանը, ուր 1856-  
ին տպուել է Արցախեցի Մովսէս  
Զոհրաբեանի բանաստեղծութիւն-  
ների երկհատոր ժողովածուն՝  
«Պարապոյ Ժամք» վերնագրով  
(այդտեղ կայ Շիլլերի «Շիլիո-  
նեան կալանաւոր»-ի թարգմանու-  
թիւնը): Այդ տպարանը յետոյ

անցնում է Մինաս Տառլիջեա-  
նին, որ տպագրում է եկեղեցա-  
կան գրքեր։

Երկրաշարժի պատճառով Շա-  
մախին վերածւում է գաւառական  
փոքրիկ քաղաքի։ Նրա փոխարէն  
սկսում է աճել Բազուն։ Այստեղ  
կազմուած հայ գաղթականութիւ-  
նը 1864-ին հիմնում է Մարդա-  
սիրական Ընկերութիւնը, որ 1872-  
ին բաց է անում տպարան (Էն-  
ֆիաճեանի տառերով) և մի շարք  
աչքի ընկնող հրատարակութիւն-  
ներ է անում (ի միջի այլոց Ստե-  
փանէի «Հայկական Աշխարհ»)։

Արդիւնաբերական կեանքի ա-  
րագ և հսկայական զարգացումը  
մեծ քայլերով առաջ է տանում և  
տպարանական գործը։ Առաջնա-  
կարգ տպարաններ են Դասարեա-  
նի, Տէր-Յովհաննիսեանի տպա-

բանները։ Սակայն առանձնապէս աչքի ընկնող գրական գործունէութիւն Բագւում չէ նկատում, չը նայած որ արդիւնաբերութիւնը այդտեղ կենտրոնացնում է բազմաթիւ հայ ինտելիգենցիա, այլ և այլ տեսակի ձեռնարկութիւններ, դրամական խոշոր միջոցներ։ 1890-ական թուականներին բացւում է այդտեղ «Արօր» տպարանը, որ աշխատում է հայերէն գրականութիւնը կենդանացնել։ Սակայն աւելի ուշադրութեան արժանին այն է, որ նա տառեր է բերել տալիս կ. Պոլսից (Արամեանի մայրերից) և դրա շնորհիւ պարիզեան տառերի մի քանի տեսակներն էլ գործածութեան մէջ են մտնում ուստահայ տպարաններում։

Իուսական յեղափոխութեան ժամանակներին վոքր ինչ կենդանութիւն նկատուեց և Բագուի հայ տպագրութեան մէջ։ Պարբե-

բական հրատարակութիւնների միքանի փորձեր եղան, սակայն բոլորն էլ կարճատե կեանք ունեցան և առանձին ազդեցիկ դիրք ոչ մէկը չը կարողացաւ ստանալ: Կարծէք արդարանում է այն ընդհանրացած նախապաշարմունքը թէ Բագուն դրականութեան տեղ չէ: Այս այսպէս կարող է լինել, իհարկէ, միմիայն հայ դրականութեան վերաբերմամբ:

Ներկայումս Բագուում լոյս է տեսնում «Նոր Խօսք» փոքրիկ ամսագիրը (Երևանցեանի տպարան):

1880-ական թուականների սկզբը բինԵրեւանում գործում էին Գէորգեանի և Տէր-Գրիգորեանի տպարանները (Էջմիածնի և Էնֆիածեանի տառերով): 1880-ին սկսում է հրատարակուել «Պատկ» լրադիրը,

որ ունէք իր սեփական տպարանը  
(հջմիածնի տառերով): Այդտեղ  
է հրատարակում և «Առողջապա-  
հական թերթ» ամսագիրը: Լինում  
է և մի քանի գրքոյկների հրա-  
տարակութիւն: Յետոյ է. Տէր  
Գրիգորեանը հրատարակում է  
«Երևանի Յայտարարութիւններ»  
փոքրիկ թերթը և իր թատրոնա-  
կան գրուածքները: Այդ տպարա-  
նը գոյութիւն պւնի և այժմ:

Մամուլի ազատութեան օրերին  
(1908-ին) հրատարակում է Ե-  
րևանում «Հրազդան» թերթը:  
Այնուհետև, մի քանի տարինե-  
րից յետոյ, լոյս են տեսնում  
«Նոր Զայն» և «Կուան» շա-  
բաթաթերթերթերը, որոնցից երկ-  
ըսրդն է միայն որ գոյութիւն է  
պահպանում այսօր:

---

Տպագրական աշխայժ գործու-

Նէութեամբ աչքի է ընկնում մեր  
գաւառական քաղաքներից և Ա-  
լէքսանդրօպօլի: Որքան մեզ  
յայտնի է, տպարանական գործի  
սկիզբը այդտեղ վերաբերում է  
1880-ական թուականներին (Սա-  
նոյեանի տպարան): Յետոյ բաց-  
ւում է և Ափինեանի տպարանը:

Ալէքսանդրօպօլում տպուած  
գրքերի և մանաւանդ գրքոյկների  
քանակութիւնը պատկառելի է մի  
գաւառական քաղաքի համար: Այդ  
գրականութիւնը գլխաւորապէս  
գեղարուեստական է: Ոտանաւոր  
բանաստեղծութեան քաղաքայս-  
պիսի հասկացողութիւն կազմել  
են տալիս Ալէքսանդրօլի հրա-  
տարակութիւնները: Առանձնա-  
պէս նշմարելի են նրանց մէջ ժո-  
ղովրդական բանաստեղծութիւն-  
ները: Քաղաքի մէջ զարգացած  
աշուղական կեանքը իր յատուկ  
գրականութիւնն ունի—հէքիաթ-  
ներ, աշուղական ոտանաւորներ:

Պարբերական մամուլի կողմից էլ Ալէքսանդրօպոլը հետաքրքրական երևոլթ է։ Տարիներից ի վեր այդտեղի հրատարակւում եներկու փոքրիկ թերթեր։ Բայ աւագութեան՝ «Ախուրեան» թերթն է առաջ կանգնած։ Միւսը, «Արագածը», հրատարակւում է անցեալ տարուանից։ Արանից առաջ հրատարակւում էր «Ժայռը»։

—

Անդրկովկասի միւս հայարնակ վայրերից տպագրական տեսակէտից մնում է յիշատակել Գանձակը, ուր մի մի ժամանակ թառումեանի և Ֆէօդօրովի տպարանից հայերէն գրքեր էլ էին լոյս տեսնում (ինչպէս նաև Ստեփանէի «Հայկական Աշխարհի» միքանի համարները) և Գօրիս քաղաքը, ուր երկու տարի առաջ հրա-

**տարակւում էր «Դաւառ» շաբաթաթերթը:**

## 6.

**ՊԱՐՍԿԱՍՏԱՆ**

Նոր քուղայի հին տպարանը ժամանակի ընթացքում ոչնչացել էր. 1844 թուականին ջուղայեցի Մանուկ Յորդանսանեանը, որ վաճառականութիւն էր անում Զաւա կղզում, նուիրեց Ամենափըրկչեան վանքին մի ամբողջ տպարան: Սակայն անշքացած Զուղան, ենթարկուած պարսկական բոնակալութեան ծանր լուծին, չը կարողացաւ բաց անել այդ տպարանը և գործունէութիւն ցոյց տալ: Բայց մի մի անգամ փորձեր անում էր: Այսպէս, 1880 -ին այդ տպարանը հրատարակեց մի անգամից երկու հատոր, մի հետաքրքրական աշխատութիւն,

«Պատմութիւն Զուղայու» անունով, գործ թ. Տէլ Յուլիաննիսկանի:

Անցեալ տասնամեակում դրական աշխատութիւնների փորձերը աւելի ևս աչքի են ընկնում: Բաղրատ վարդապետ Վարդադարեանի զեկավարութեամբ տպարանը տպագրում է ոչ միայն դպրոցական հաշիւներ, այլ ևպարբերական մի փոքրիկ թերթ էլ «Նոր Զուղայի Լրաբեր» անունով:

1894 թուին հայերէն տպարան (Բէկնազարեանի) տեսնում ենք թեհրանում, ուր հրատարակում է և «Շաւիդ» անունով շաբաթաթերթը, յետոյ և «Աստղ Արևելեան» (1896):

Թաւրիզն էլ ունեցաւ իր տըպարանը, որ բացուեց իննսունական թուականներին, առաջնորդ եղիշէ վարդ. Մուրադեանի ջանքերով: Կարճ միջոցում այդ տը-

պարանը բաւական թուով գրքեր  
տպագրեց։ Իսկ պարսկական յե-  
ղափոխութեան ժամանակից Թաւ-  
րիզում սկսեցին հրատարակուել  
հայերէն մի քանի թերթեր։ Ան-  
ցեալ տարուայ դէպքերը վերջ  
դրին «Առաւօտ» անունով թեր-  
թին։ Այս տարի փորձեցին հրա-  
տարակել «Միտք» անունով մի  
լրագիր, բայց աջողութիւն չու-  
նեցաւ։

Թաւրիզի թեմական տպարա-  
նում ներկայումս լոյս է տեսնում  
«Աղաղան» անունով մի փոքրիկ  
ամսագիր, նուիրուած Ղարաղա-  
ղի հայերի կեանքին։

## 7.

## ՀՆԴԿԱԾՏԱՆ

XIX դ-ի սկզբում գեռ գործում էր  
Շմաւոնեան քահանայի տպարա-  
նը Մաղրասում։ Ցիշատակւում է

որ 1810-ին Հնդկաստանի մի ուղիղաքում, Բումբէյ, հրատարակում էր «Օճանասփիւռեան» անունով մի պարբերական հրատարակութիւն։ Այնուհետև տըպագրական գործունէութեան կենտրոն դառնում է Կալկաթան։ Այստեղ հայերէն տառեր ունի նախ անգլիական Եպիսկոպոսական Ճեմարանը, ապա նոր բացուած հայոց Մարդասիրական Ճեմարանն էլ տպարան է բաց անում։

Հնդկահայերից գրական գործունութեամբ անուն է հանում Յովհաննէս Աւդալեանը։ Բայց նրանից աւելի նշանաւոր է հանդիսանում երեանցի Մեսրոպ Թաղիագեանը, որ գնալով Հնդկաստան և սովորելով անգլիական լեզուն, շատ եռանդուն և բեղմնաւոր գործունէութիւն է սկսում թէ իբրև գրող և թէ իբրև ուսուցիչ։

1845 թուականին Թաղիագեա-

նի ջանքերով կաղմուռմ է «Արարատեան» անունով ընկերութիւնը գլխաւորապէս տպագրական նպատակներով։ Թաղիադեանի խմբագրութեամբ լոյս տեսնել է սկսում «Ազգասէր» երկշարաթաթերթը, որ աղդեցիկ դիրք է բռնում այս ժամանակուայ մեր մամուլի մէջ։

Արարատեան ընկերութեան տպարանում տպուեցին և թաղիադեանի վիպական, պատմագրական, ճանապարհորդական աշխատութիւնները, ինչպէս նաև ուրիշ գրողների գործերը։

Նկատենք է որ 1848 թ. դարձեալ Մադրասում հրատարակուել սկըսեց «Բանասէր» թերթը, նշանաւոր իր ուղղութեան կողմից, բայց նա չէր տպագրւում, այլ հրատարակւում էր վիմագրութեամբ։ Այսպէս է և 70-ական թուականներին նոյն տեղում հրատարակուած «Եղբայրասէր» թերթը։

Դարձեալ 70-ական թուական-ներին էր, որ Արարատեան Բն-կերութեան տպարանի տառերով կալկաթայում տպարան է բաց անում Յովհաննէս քահանայ Խա-չիկեանը, որ տպագրում է գլխա-ւորապէս իր աշխատութիւնները, կրօնական բարոյագիտական բո-վանդակութեամբ և մի երկու ուրիշ աշխատութիւն, որոնք պատմական կարևոր նշանակու-թիւն ունին:

Սրանով էլ վերջանում է հընդ-կահայերի գերը մեր գրականու-թեան մէջ։ Եւ ինքը հայ զաղ-թականութիւնն էլ համարեա բո-լորովին ձուլուում է անգլիացի-ների հետ։

ական թուականների սկզբից), Նեղոսի հովիտը կերպարանափոխում է, դառնալով եւրոպական մի երկիր իր ազատ մամուլով: Իրապէս Թիւրքիայի մի մասը չէ նա այլևս: Միայն վաճառականական շահերը չեն, որ Թիւրքիայի հայերին գրաւում են Եղիպատոս և ստուարացնում այդ երկիր մէջ հին ժամանակներից գոյութիւն ունեցող հայ գաղութները: Արդիւլ-Համիդի ռէժիմից խոյս տուող քաղաքական գործիչների համար էլ նա դառնում է ապաստանարան:

Եւ առաջին անգամ 1889-ին է, որ մենք տեսնում ենք եղիպատական հողի վրայ հայ տպագրութիւն: Հայ յեղափոխական գործիչ Անտոն Ռշտունին Ալէքսանդրիայում՝ սկսում է հրատարակել «Նեղոս» շաբաթաթերթը (Վենետիկի տառերով): Այդ ժամանակից յետոյ եղիպատահայ տը-

պագրութիւնը շարունակ զար-  
դանում է, կենտրոնանալով գըլ-  
խաւորապէս Գահիրէ քաղաքում։  
Նա արտայայտուում է գլխաւորա-  
պէս պարբերական մամուլի մէջ,  
թէև քիչ չեն և տպագրուած ա-  
ռանձին գրքերը՝ զանազան տեսակ  
բովանդակութեամբ։

Այդ երկու քաղաքներում (Ա-  
լէքսանդրիա և Գահիրէ) լոյս տե-  
սած պարբերական հրատարակու-  
թիւններից կը յիշատակենք մի  
քանիսը՝ «Արշալոյս», «Պարտէզ»,  
«Լրաբեր», «Լուսաբեր», «Արտե-  
միս», «Փիւնիկ», «Շիրակ»։

Ներկայումս հրատարակուում են  
Գահիրէում «Հոսանք» և «Արշա-  
լոյս» շաբաթաթերթերը և «Միու-  
թիւն» փոքրիկ ամսագիրը, պաշ-  
տօնաթերթ Գահիրէի Հայկական  
Բարեգործական Բնողհանուր Մի-  
ութեան։

9.

## ԲՈԼԳԱՐԻԱ.

Թիւրքիայի տիրապետութիւնից ազատուած այս սահմանադրական երկիրն էլ ապաստան է դառնում թիւրքահայքաղաքական գործիչների համար։ Հայերի հոսանքը դէպի Բօլգարիա ընդարձակ չափեր է ընդունում, մանաւանդ 1895—1896 թուականների կոտորածների հետևանքով։ Եւ զանազան քաղաքներում բացւում են հայ տպարաններ, որոնք տպագրում են զանազան բովանդակութեամբ գրքեր և մասնաւորապէս ինքնուրոյն և թարգմանական վէպեր։ Բօլգարահայ մի գրականութիւն է կազմւում, որ ունի իր ինքնուրոյն, հետաքրքրական կերպարանքը։

1892-ին Մուսչուկ քաղաքում

սկսեց հրատարակուել «Դանուբ» շաբաթաթերթը։ Այնուհետև երեւացին և ուրիշ թերթեր «Զիթենի», «Հայաթերթ» (Ռուսչուկ), «Շարժում», «Իրաւունք», «Հայեր» «Վիպաթերթ» (Վառնա), «Ռազմիկ» (Ֆիլիպալէքաղաք)։

## 10.

## ՌՈՒՄԻՆԻԱ

Դալաց քաղաքում Ղեռնդ քահ, Փափաղեանը 1892-ին բաց է անում տպարան, տպագրում է օրացոյցներ, գրքեր, հրատարակում է և «Արօր» անունով մի շաբաթաթերթ։

Մենք ունենք և մի քանի գըրքեր, որոնց վրայ տպագրութեան տեղը նշանակուած է Եաշքաղաքը։

## 12.

## ԱՆԳԼԻԱ

Լօնդոնում՝ հայերէն տպագրութիւններ եղան ԽVIII դարում։ Մինչև ՀI դարի 80-ական թուականները այստեղ եթէ տպւում էին հայերէն գրքեր, դրանք Աստուածաշունչի Բնկերութեան հրատարակութիւններն էին—«Աւետարան» և այլն (Վիէննայի տառերով)։

1888 թուականին Լօնդոնում կազմւում է Անգլօ-հայկական ընկերութիւնը, հայոց հարցը պաշտպանելու համար և սկսում է հրատարակուել «Հայաստան» անունով կէս-հայերէն (Վիէննայի տառեր) և կէս-ֆրանսերէն երկշաբաթաթերթը (Le Haïasdan), որ շարունակում է մինչև 1892 թուականը։ Նոյն միջոցներին թուրոս Զուղա-

յեցին հրատարակում է «Եկեղեցի Հայաստանեայց» փոքրիկ ամսատետրը (Պարիզի տառերով):

Նոյն 80-ական թուականների վերջերից Լօնդոնում հրատարակում է և Հնչակեան Յեղափոխական կուսակցութեան պաշտօնական օրդան «Հնչակ» թերթը, ամիսը մի անգամ: 1896-ին «Հընչակի» հետ հրատարակուել ու կայց «Մարտ» թերթը գրական-պատմական բովանդակութեամբ, խլմբագիրն էր Ա. Արփիարեան:

Թիւրքական հալածանքներից Լօնդոն փախած պրօֆէսոր Թումայեանը հաստատում է այդտեղ դպրոց-որբանոց, որի աշակերտների աշխատակցութեամբ հրատարակում է «Պատանի» փոքրիկ ամսատետրը (1902) բաւական խեղճ տպագրութեամբ, որ շարունակում է մի երկու տարի: Թումայեանը մի քանի ուրիշ պրեեր էլ է հրատարակում:

Լօնդոնից դուրս հայ տպագրութիւն տեսնում ենք և Մանչեստր քաղաքում։ Այստեղ կարապետ վարդապետ Շահնազարեանը 1864 թուին հրատարակում է «Երկրագունդ, լրագիր Մանչեստրի, քաղաքական, գրական, գիտնական, կրօնական և առեւտրական»։

Հայկական կոտորածներից յետոյ որբանոց հաստատուեց Կիպրոս կղզու Նիկոսիա քաղաքում և նրա տնօրէն Վահան Քիւրքճեան բաց արաւ տպարան (Վենետիկի տասելով), տպագրում էր այդտեղ որբանոցի տեղեկութիւնները և հրատարակեց իր մի քանի աշխատութիւնները, որոնք վերաբերում են Կիպրոսի և Կիլիկիոյ պատմութեան (1901—1904)։

Ժամանակ (1893—1894) իր կենարունն ու տպարանը տեղափոխեց Աթէնք և այստեղ մի շարք հրատարակութիւններ արաւ, որոնցից կը յիշատակենք միայն պարբերականները՝ «Ապտակ» զաւեշտաթերթ, «Գաղափար» եռամսեայդիտական հանդէս:

## 14

## ՇՎԵՅՑԱՐԻԱ

Միւս յեղափոխական կուսակցութիւնը, որ 1890-ին կազմուեց դարձեալ թիւրքահայոց դատը առաջ մղելու համար և որ ստացաւ «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն» անունը, իր կենտրոնը հաստատեց Ժընեվ քաղաքում: Այդտեղ առաջուց ուսանողական մի փոքրիկ տպարան կար, որ անցաւ նոր կազմակերպու-

թեան ձեռքը և մի քիչ էլ ընդարձակուեց (Վիէննայի տառերով) ու սկսեց հրատարակել իր կուսակցական օրգանը, «Դրօշակ» անունով, որ շարունակւում է և այսօր:

Բացի այս թերթից, նոյն տպարանից լոյս են տեսել և բազմաթիւ բրօշիւրներ ու մի քանի հատ էլ խոշոր հատորներ:

Լոգան քաղաքում բացուած Հայկազեան Վարժարանի տնօրէն Մ. Նալբանդեանը 1904-ին սկսեց հրատարակել «Գիտութիւն» անունով մի գիտական ամսաթերթ, որ, սակայն, Լոգանում չէր տըպւում, այլ Պարիզում:

15

### ՇՎԵՅԻԱ.

Յայտնի բանասէր Նորայր Բիւզանդացին բնակւում էր Ստոկ-

Հօլմ՝ քաղաքում և այնտեղ մի  
 քանի տեսրակներ հրատարակեց՝  
 «Բննասէր» անունով։ Թէև այդ  
 հրատարակութիւնը վիմատիպէր,  
 բայց այսոչինչ արգելք չէ որ նա  
 էլ յիշատակուի տպագրութիւննե-  
 րի շարքում։ Այս վեցուն  
 տարբայ մը ընտան թէ այս պահան  
 առ վճար չի առ համայնքով այն  
 16 ամսաթիվ է այս պահուած պահուած պահուած  
 6 տարբայ և ԱՄԵՐԻԿԱ մարզ  
 մէջուն վիմադանութիւն մամբարիւան  
 Այն օրուանից, երբ Ամերիկա-  
 յի բողոքական «Պօրտ» ընկերու-  
 թիւնը հաստատեց Հայաստանում,  
 հայի առջև բացուեց և այս հե-  
 ռաւոր երկրի ճանապարհը։ Մի-  
 սիօներները հայ երիտասարդնե-  
 րին ուղարկում էին Ամերիկա  
 բարձր ուսում ստանալու համար։  
 Զենք կարող հաստատապէս ասել  
 թէ ո՞ր ժամանակից ի վեր սկսե-  
 ցին կազմուել Ամերիկայում հայ  
 գաղութներ։ 1860-ական թուակ

կաններին է, որ մենք տեսնում ենք արևմտեան հայ պարբերական հրատարակութիւնների մէջ Ամերիկայից ուղարկուած թղթակցութիւններ։

Անդրատլանտեան մեծ հանրապետութեան դոներով հային ներս մտցնողը, ի հարկէ, վաճառականութիւնն էլ էր։ Շուտով նոյն այդ ճանապարհով գնալ սովորեց և գաւառական Հայաստանը, որ որոնում էր բանւորական և այլ աշխատանք։ Արդիւլ-Համիդի հալածանքները աւելի ևս սաստկացրին այդ գաղթը, իսկ 1895 — 1896թ. կոտորածները մեծամեծ հատուածներ շպրտեցին Ովկիանոսի միւս կողմը։ Այսօր Ամերիկայի զանազան քաղաքներում ցրուած հայերը տասնեակ հազարներով են հաշւում։

Բնականաբար, այս խոշոր գաղթականութեան ծոցում էլ պիտի գլուխ բարձրացնէր հայկական

տպագրութիւնը: 1850-ական թւականներին միայն Աստուածաշունչի Բնկերութիւնն էր, որ Նիւեռլրքի մէջ տպագրել էր տալիս հայերէն «Աւետարան», «Սաղմոս» (Վիէննայի տառերով): Իսկ երբ հայերի թիւը Միացեալ-Նահանգներում արդէն բաւական շատացել էր, ամենից շուտ, ի հարկէ, պարբերական մամուլն էր, որ օգտաւում էր տպարանական մեքենայից: Դեռ 1888 թուականներին Նիւեռլրք քաղաքում Հ. Էզկիսնեանը, որ և տպարանատէր էր, սկսում է հրատարակել «Արեգակ» շաբաթաթերթը: Նոյն և հետեւեալ տարիները այդտեղ տպւում են և «Սուրհանդակ», «Ազատութիւն», «Եփրատ», «Լոյս» ուսումնաթերթ, «Արաքս», «Հայք», որոնցից վերջինս միայն համեմատաբար երկար կեանք է ունենում (մինչև հինգ տարի):

Բայց պարբերական մամուլը

Ամերիկայում զարգանում է մանաւանդ այն ժամանակից, երբ Ամերիկա են տեղափոխուում Հընչակեան և Դաշնակցական յեղափոխականները և սկսում են եռանդուն պրօպագանդ Ամերիկայի հայութեան մէջ։ Այդ ժամանակներից Նիւ-Եորքում, Բոստոնում և այլ տեղերում երևան են գալիս քաղաքական նորանոր թերթեր։ Դաշնակցական կուսակցութիւնը հիմնում է Բոստոնում և մինչև այժմ էլ շարունակում է «Հայրենիք» թերթը։ Հնչակեանները, բաժանուելով մի քանի մասերի, հրատարակում են «Երիտասարդ Հայաստան», «Ազգ», «Զայն Հայրենեաց» թերթերը։ Հրատարակուում են և կուսակցական շարբրօշիւրներ, երգարաններ, բանաստեղծութիւններ։ Ամերիկահայ գրականութիւնն էլ, թէև առանձնապէս հարուստ չէ, բայց ունի իր ինքնատիպ կերպարան-

քը։ Անցեալ տարուանից Նիւ-  
Եռքում հրատարակում է «Ա-  
րագած» պատկերազարդ շաբա-  
թաթերթը գեղեցիկ տպագրու-  
թեամբ։

Հայ տպարանը հայ գաղթա-  
կանների ետեից գնացել հասել է  
Ամերիկայի արևմտեան ծայրե-  
րին, Կալիֆօրնիա։ Ներկայումս  
Ֆրէզնօ քաղաքում հրատարակ-  
ում է «Ասպարէզ» շաբաթաթեր-  
թը, իսկ Պուլետէնսում՝ «Պա-  
հակ», նոյնպէս շաբաթաթերթ։

Վերջացնենք ամերիկահայ մա-  
մուլի տեսութիւնը մի գեղեցիկ  
գործով։ Նիւ-Եռքի «Կոչնակ»  
շաբաթաթերթը, որ հրատարակ-  
ում է 12 տարուց ի վեր, հայ  
տպագրութեան 400 ամեայ յորե-  
լեանական տարում սկսելէ շարուել  
ձուլող և շարող մեքենայով, մի  
մեծ նորութիւն, որ շատ ժամանակ  
չէ մտել է ընդհանուր տպագրա-  
կան գործի մէջ և որին վերապա-



աղբիքառական, և նպաստաց մասմ  
շահ մա մզաւին լահ ըղմուսու բվել  
բոլ մայրամար վեղամիշտ նշանական  
համար ինչ է այս բարձրագույնին  
**ՎԵՐԶԱԲԱՆ**

Այս է թեթև ուրուագիծը այն  
կեանքի, որ ունեցել է հայ տպա-  
գրութիւնը չորս հարիւր տարի-  
ների ընթացքում։ Այս ուրուա-  
գիծն էլ թերի է։ Բայց նա բա-  
ւականաշափ պերճախօս է, որ-  
պէսզի ցոյց տայ թէ ինչ գործ է  
աօնում ամբողջ հայութիւնը այս  
տարի։

Մենք տեսնում ենք մի ամբողջ  
ժողովուրդ, որ դժբախտ պատ-  
մութեան ընթացքում կորցնում  
է ամեն ինչ, բայց չէ կորցնում  
իր տառերը, որոնք և դառնում  
են նրա կեանքի համարեա միակ  
բովանդակութիւնը։

Այդ տառերը թափառում են  
հայ մարդու հետ ամեն տեղ, ուր

նրան շպիտում է ճակատագիրը։  
Այդ տառերը հայ միտքն են ար-  
ծարծում աշխարհի զանազան կող-  
մերում։

Մենք այս ուրուագծի մէջ միայն  
անուններ տալ կարող էինք։ Եւ  
եթէ խօսեցնենք այդ անթիւ ա-  
նունները, այն ժամանակ միայն  
կը տեսնենք թէ որքան շատ ու  
հսկայական են եղել հայ մտքի  
ջանքերը, որքան տարբեր միջա-  
վայրերի ազդեցութեան է նա են-  
թարկուել, որքան տեղական ա-  
ռանձնայատուկ գունաւորումներ  
են մտել այդ մտքի ասպարէզի—  
գրականութեան մէջ։

Զը կարողանալով ամեն մէկին  
խօսեցնել զատ զատ, մենք կա-  
սենք մի բան, որ հիմքն ու էու-  
թիւնն է։ Այդ այն է, որ Մեսրո-  
պեան տառերով ապրող հայ  
միտքը ցոյց է տալիս անընդհատ  
յառաջադիմութիւն, անընդհատ  
զարգացում։ Այսօրը երէկուայ

նման չէ։ Հայ տպագրութիւնը  
Սաղմոսների, Ժամագրքերի, կրօ-  
նական խոշոր հատորների իրա-  
կանութիւնից եկել բարձրացել է  
ժամանակակից եւրոպական լու-  
սաւորութեան վերջին խօսքերի  
արտայայտիչը լինելու աստիճա-  
նին։ Երանչեանը հայութաց մի

Այսքան մեծ է հայ տառերի  
բարերարութիւնը։

Եւ նա է որ մեզ պիտի ոգևորէ։  
Նա է որին պիտի փարենք մեր  
ամբողջ սրտով ու հոգով։  
Եւ նա լոյս է։ Եւ առաջադիմու-  
թիւն է։

Ահա ամենամեծ միսիթարանքն  
ու յոյսը։

Կանոնական հայութաց  
պատրիարքութեան բարձր առ-  
գականութեան առաջադիմութիւն  
ու առաջադիմութեան առաջա-  
դիմութեան պատրիարքութեան  
առաջադիմութեան առաջադիմութեան

## ՅԱԻԵԼՈՒԱՆ

Հայ գրքոյկի տպագրութեան ժամանակ մեր յայտնի բանասէրներից մէկը, էջմիածնի միաբանութեան անդամ դպիր Գալուստ Տէր-Մկրտչեանը հրատարակեց մի հմտալից ուսումնասիրութիւն («Հորիզոն» № 121 և 122) հայ տառերի գիւտի ժամանակի մասին:

Յարգելի գիտնականը ապացուցում է թէ սխալ է 405 թուականը Մեսրոպեան տառերի դիւտի ժամանակ համարելը։ Այդ թուականին Դանիէլեան նշանագրերը բերուեցին Հայաստան, դպրոցներ բացուեցին, բայց երկու տարուայ փորձերը ցոյց տուին որ այդ տառերը չեն կարող հայոց լեզուի վանկերն ու կապերը արտայայտել։ Երկու տարի այդ-

պէս աշխատելուց յետոյ, ասել է  
407 ահա, Մեսրոպն ու Սահակը  
տեսան որ պէտք է ուրիշ ճար  
դտնել, այսինքն հայ լեզուի բո-  
լոր հնչիւններին համապատաս-  
խանող տառեր պատրաստել:


Բայց ե՞րբ եղաւ Մեսրոպեան  
տառերի գիւտը:

Գալուստ Տէր-Մկրտչեանը ցոյց  
է տալիս որ Մեսրոպը Միջագետք  
ճանապարհորդեց 412 թուականից,  
ոչ առաջ, հետևաբար և նրա  
գիւտը կարող էր տեղի ունենալ  
կամ այդ թուականին կամ յետոյ:

Այսպիսով ահա հայ տպագրու-  
թեան չորս հարիւր ամեակը բոլո-  
րող տարին, այսինքն ներկայ 1912  
թուականը մենք կարող ենք հա-  
մարել և այնպիսի մի տարի, որ  
ցոյց է տալիս թէ 1500 տարի  
առաջ Մեսրոպը կամ գտել էր  
հայերէն տառերը կամ աշխա-  
տում էր նրանց վրայ:

Տէր-Մկրտչեանի բանասիրա-

կան հմտութիւնը այսօր մեզ ա-  
սում է, որ սխալուած չենք լինի,  
եթէ այս միևնույն տարում միաց-  
նենք հայ տառերի 1500 ամեակը  
և հայ տպագրութեան 400 ա-  
մեակը:



ՀՀ	ՀՀ պահանջման
ՀՀ	պարզման
ՀՀ	նախարարական
ՀՀ	պարզ ԽՎՀ
ՀՀ	գնդար ՀՀ և ՀԽՀ
ՀՀ	մասնակիցների
ՀՀ	համարական

ՀԱՅԱՍՏԱԿՈՒԹԻՒՆ

ՅՈՐԵԼԵԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՀՐԱՄՔԸ

I. ՏԱՌԵՐԻ ԳԻՒՑԻ 1500 ԱՄԵԱԿ

Ի՞նչ է դիրը	3
Անգիր հայերը	11
Ա. Մեսրոպ	20
Սահակ-Մեսրոպեան դպրոցը	33

II. 400 ՏԱՐԻ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Ճպնաժամի մէջ	44
Սկիզբը	53
Զարգացում	70
XVIII դար	95
XIX և XX դարեր	110
Վերջաբան	200
Յաւելուած	203

Հայ տպագրութեան 400 ամեայ  
յորելեանական Թիֆլիսի Յանձ-  
նաժողովը յայտարարում է որ իր  
հրատարակութեամբ լոյս տեսնող  
ներկայ գրքոյկը ոչինչ կապ չու-  
նի հայ Տպագրութեան ընդարձակ  
պատմութեան հետ, որի համար  
մրցանակ է յայտարարել Կովկա-  
սի Հայոց Հրատարակչական Բն-  
կերութիւնը։ Մրցանակը մնում  
է իր կարգին։

## ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

Պահեստը Կովկասի Հայոց Հրա-  
տարակչական Բնկերութեան գր-  
րասեննեակում, ուր և կարող են  
դիմել ցանկացողները (Тифлисъ,  
Бебутовская, № 25, Контора  
Кавк, Арм. Издательск. Общ.

---

Հատով ծախւում է բոլոր հայ  
գրավաճառների մօտ։